90

ISSN 1829-0531

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

## 1 (31)

ԵՐԵՎԱՆ - 2016

ISSN 1829-0531

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

№ 1 (31)

ԵՐԵՎԱՆ - 2016

---

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ
JOURNAL FOR ARMENIAN STUDIES

Հիմնադիր՝ «Երևանի Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն՝ 286.210.04777

*Խմբագրական խորհուրդ*՝

**Ռ.Կ. Միրզախանյան (նախագահ)**,

Մ. Գ . Գիլավյան (**գլխավոր խմբագիր**),
Կ. Ա. Ավագյան, Ա. Ա. Ավագյան, Ս. Դ. Դանիելյան,
Ա. Գ. Դոլուխանյան, Լ. Կ. Եզեկյան, Ա. Կ. Եղիազարյան,
Լ. Մ. Խաչատրյան, Հ. Հ. Հակոբյան, Վ. Գ. Համբարձումյան,
Լ. Շ. Հովհաննիսյան, Է.Ս. Մկրտչյան, Ս. Պ. Մուրադյան,
Ա. Սեֆերճյան (Բեյրութ), Հ. Նալբանդյան (ԱՄՆ), Մ. Ադամյան (Ֆրանսիա)

Ա. Հ. Հարությունյան (**պատասխանատու քարտուղար**)

Գրանցման վկայական՝ 211.200.00182
Գրանցման տարեթիվը՝ 26.03.2003 թ.
Պարբերականությունը՝ եռամսյա

Նյութերն ընդունվում են համակարգչային շարվածքով, չեն վերադարձվում:

Արտատպության դեպքում հղումը «Հայագիտական հանդես»-ին պարտադիր է:

«Հայագիտական հանդես» ամսագիրն ընդգրկված է թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ԲՈՀ-ի կողմից ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցանկում (12.05.06թ. 133-01):

Մեր հասցեն՝ Երևան, Ալեք Մանուկյան փ. 13, հեռախոս՝ 55-60-30 (1-26)
Էլեկտրոնային փոստ՝ philology@armspu.am

## ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՍԻՆԵ ԵՆԳՈՅԱՆ
Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ
հայոց լեզվի և նրա դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի հայցորդ
ՀՏԴ 811.19

# ԶՈՒԳԱՁԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՐԱԲԱՐԻ ԲԱՑԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՒՄ

**Բանալի բառեր և արտահայտություններ**. հոլովական զուգաձնություն, բացառական հոլով, հոլովում, պարզ հոլովում, արտաքին թեքում, ներքին թեքում, խառը հոլովում, անկանոն հոլովում, ձևաբանական զուգաձնություն:

**Ключевые слова и выражения**: падежные параллелизмы, отложительный падеж, склонение, простое склонение, внешнее склонение, внутреннее склонение, смешанное склонение, нерегулярное склонение, морфологический параллелизм.

**Key words and phrases**: declension doublets, ablativus, declination, simple declension, external declension, internal declension, mixed declension, irregular declension, morphological doublets.

Լեզվի զարգացման համաժամանակյա (տարժամանակյա) կտրվածքում միևնույն բառույթի տարբերակային ձևերը ստեղծում են քերականական զուգաձնություն, որի բաղադրիչները ծառայում են միևնույն քերականական իմաստի դրսևորմանը:

Գրաբարում գոյականը բնութագրվում է հոլովատիպերի բազմազանությամբ, պարզ և խառը հոլովումներով, ներքին և արտաքին թեքմամբ, անկանոն կամ զարտուղի հոլովումներով: Համակարգային այդ ձևերին զուգահեռ միևնույն հոլովում հանդիպում են տարբեր հոլովիչներով թեքական տարբերակներ, որոնցից մեկը պահպանում է հոլովական օրինաչափությունը, մյուսը լրացուցիչ (կամ երկրորդային) կառուցվածք է՝ նոր հոլովիչով: Հոլովական զուգաձնություններ հանդիպում են գրաբարի հոլովման գրեթե ամբողջ համակարգում. Ստորև կանդրադառնանք զուգաձնությունների քննությանը բացառական հոլովում:

Գրաբարում եզակի բացառականը կազմվում է տրականի հիմքից՝ երբեմն ունենալով *Է* վերջավորությունը, երբեմն՝ ոչ (եթե գոյականը թեքվում է Ա կամ Ո հոլովիչներով), իսկ հոգնակի բացառականը հիմքակազմ տարրով համընկնում է հոգնակի տրականին:

Լեզվաբանական գրականության մեջ հին հայերենի հոլովման համակարգում առկա մի շարք օրինաչափությունների հետ մեկտեղ նշվում է նաև զուգաձևության իրողությունը, ըստ որի «երկու տարբեր օրինաչափությունների և պատճառների խաչաձևման դեպքում առաջանում են միևնույն բառի տարբեր հոլովման ձևեր: Բավական մեծ թիվ են կազմում երկու տարբեր հոլովում ունեցող բառերը. կան նաև երեք և նույնիսկ չորս հոլովմամբ հոլովվող բառեր. ուշ շրջանում այս կարգի տատանումներն ավելի են մեծանում»[1]:

Դիտարկելով բացառական հոլովի կազմությունը՝ նկատում ենք քերականական-ձևաբանական որոշակի զուգահեռ ձևեր, որոնք կնարելի է ներկայացնել ըստ հոլովումների:

1. **Ա պարզ արտաքին հոլովման գոյականների զուգաձևություններ:**

Տարբերակային այդօրինակ ձևերում առկա են բացառապես հատկանվանական փոփոխակներ: Ընդ որում, նրանցում նկատվում են ինչպես ձևաբանական, այնպես էլ ձևաբանական – հնչյունափոխական տարբերակներ:

Գոյականական – ձևակազմական զուգահեռ ձևերում առկա են եզակի բացառականին հատուկ *է* հոլովակերտով և առանց այդ վերջավորության կազմվող ձևեր: Վերջինիս դեպքում բացառականը հիմքի կազմությամբ և վերջավորությամբ չի տարբերվում այ-ով ավարտվող տրականից: Հմմտ. զուտ ձևաբանական հետևյալ տարբերակները. Հռովմ – ի Հռովմայ // ի Հռովմէ, նաև՝ ի Հռոմայ // ի Հռոմէ, Անտիոք – յԱնտիոքայ / յԱտիոքէ և այլն:

Ուշագրավ են հունական *-աս, -էս, -ոս, -իաս, -իոս, -իս* հնչյունակապակ-ցություններով ավարտվող հատկանունները, որոնք եզակի սեռական – տրական հոլովներում ենթարկվում են հնչյունափոխության, դրանով պայմանավորված՝ տրականի հիմքից կազմվող բացառական հոլովում ևս – *աս, - ոս, - ս* մասնիկները դուրս են ընկնում:

Է և ի ձայնավորներն Ա հոլովիչից առաջ վերածվում են ե – ի: Ընդ որում, -ոս–ով վերջացող որոշ հատկանուններ Ա հոլովիչից առաջ (նմանակության օրենքով) ստանում են Ե տարրը: Ստորև բերվող զուգաձևություններում առկա են ձևաբանական – հնչյունափոխակամ այդօրինակ տարբերակներ:

[1] Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Ե., 1959, էջ 121:

Հմմտ. Արիստակէս – յԱրիստակայ // յԱրիստակեայ, Պափոս – ի Պափեայ // ի Պափէ[2], Փիլիպպոս – ի Փիլիպպեայ / ի Փիլիպեայ, Յովհաննէս – ի Յովհաննայ // յՈվհանայ // ի Յովհանայ[3], Ղուկաս – ի Ղուկայ // ի Ղուկասէ[4]:

*-Իա* հնչյունախմբով վերջավորվող որոշ հատկանունների Ի տարրը եզակի բացառականում (տրականի հիմքով պայմանավորված) վերածում է Ե- ի: Սակայն որոշ դեպքում ի հայտ են գալիս անհնչյունափոխ և հնչյունափոխված տարբերակներ. Սամարիա – ի Սամարիայ / ի Սամարեայ, Կեսարիա – ի Կեսարիայ / ի Կեսարեայ[5]:

Հմմտ. Ա / Ի հոլովման զուգաձնությամբ հանդես եկող հետևյալ ձևերը. ի Գալիլեայ / ի Գալիլէէ:

**2. Ա ներքին հոլովման գոյականների զուգաձնություններ:**

Այս հոլովման բառերի բացառական հոլովում առկա են ձևաբանական – հնչյունափոխական տարբերակներ՝ ձևավորված Ա ձայնավորի (հոլովիչի) առկայությամբ և նրա սղումով: Հմմտ. եզակի բացառական հետևյալ տարբերակները. ակն – յականէ / յակնէ, արեգակն – յարեգականէ / յարեգակնէ, աղեղն – յաղեղանէ / յաղեղնէ, որդն – յորդանէ / յորդնէ, կայծակն – ի կայծականէ / ի կայծակնէ, որմն – յորմանէ / յորմնէ, բամբիշն – ի բամբշանէ / ի բամբշնէ:

Հետևյալ զուգաձնություններում առկա են իւ երկբարբառի՝ Ա հոլովիչից առաջ հնչյունափոխությամբ (իւ > ե) և անհնչյունափոխ ձևեր. ձիւն – ի ձեանէ // ի ձիւնէ, սիւն – ի սեանէ / ի սիւնէ և այլն:

Հետևյալ օրինակներում առկա են եա>ե և Ե-ի սղումով հնչյունափոխական տարբերակները. քրթմնջիւն – ի քրթմնջենէ / ի քրթմնջանէ, եռանդն – յեռանդենէ / յեռանդանէ և այլն:

Հմմտ. –ուրդ վերջածանցով կազմված «ժողովուրդ» բառի հետևյալ զուգահեռ ձևերը. ի ժողովրդենէ / ի ժողովրդէ:

Ստորև բերվող զուգահեռ ձևերը ևս բացառականի հիմքով (տրականի կազմությամբ) են պայմանավորված. դուռն – եզ. թ. ի դրանէ, հ. թ. ի դրաց // ի դրանց, (ուղղ. մրջիւն / մրջիմն, հոգն. տր. մրջեանց / մրջմանց) հոգն. բաց. ի մրջեանց // ի մրջմանց:

---

[2] Այստեղ առկա է թե՛ հնչյունափոխական, թե՛ ձևակազմական տարբերակայնություն:

[3] Ինչպես տեսնում ենք, ձևաբանական – հնչյունափոխական այս տարբերակներում առկա են նաև կրկնակ բաղաձայնով և բաղաձայնի անկումով զուգահեռ ձևեր:

[4] Հոլովվել է նաև ու հոլովմամբ:

Հմմտ. Ա / Ի հոլովական հետևյալ զուգաձնությունը ևս. յԱննայ / յԱննայէ:

[5] Բացառական հոլովում վերոհիշյալ զուգաձնությունների մյուս փոփոխակն է՝ ի Կեսարիոյ:

*Ժողովուրդ* բառը եզակի տրականում զուգահեռաբար կարող է ստանալ եան // ի (նաև՝ ո), իսկ *անդրանիկ* բառը՝ ան // ի վերջավորություններ, ըստ այդմ եզակի բացառականում առկա են *ի ժողովրդենէ // ի ժողովրդէ, յանդրանկանէ // յանդրանկէ* տարբերակները:

-Վաղիւ (եզ. տր. վաղուեան / վաղուի) եզակի բացառականում ունի *ի վաղուենէ / ի վաղուէ // ի վաղնջենէ*[6] տարբերակները:

Ինչպես տեսնում ենք, Ա ներքին թեքման պատկանող բառերը տարբերակայնություն են դրսևորում հիմնականում եզակի բացառականում:

**3. Ի հոլովման գոյականների զուգաձևություններ:**

Այս բառերի բացառական հոլովում[7] հիմնականում առկա են հատուկ (անհոգնական) անունների զուգաձևություններ: Դրանք կարող են լինել ուղղականի, նրանից ձևավորված տրականի երկձև կազմություններ, որոնցով էլ պայմանավորվում են բացառականում ի հայտ եկող տարբերակները: Հմմտ. ուղղ. Անտոնիոս / Անտոն, տր. Անտոնիոսի / Անտոնի, բաց. յԱտոնիոսէ / յԱնտոնէ:

Ինչպես նշվում է մասնագիտական գրականության մեջ «Ի հոլովումը հայերենի ամենազորեղ հոլովումն է: Բացի այն մեծաքանակ բառերից, որոնք հոլովվում են ի – ով, հայերեն բառերի կեսից ավելին եզակի սեռականում, տրականում, բացառականում դարձյալ ի – ով են հոլովվում: Հենց այդ է պատճառը, որ հետագա դարերում այդ հոլովումն աստիճանաբար նվաճեց մյուս հոլովումների բառերի մեծ մասը, դարձավ տիրապետող և միասնականացնող միակ հոլովումն աշխարհաբարում. և այսօր էլ շարունակում է դանդաղ նվաճել իր ազդեցության ծիրից դուրս մնացած հոլովական տարբերակային ձևերի մնացորդները»[8]:

**4. Ո հոլովման գոյականների զուգաձևություններ:**

Այս հոլովման պատկանող բառերի զուգաձևությունները բացառական հոլովում խիստ հազվադեպ են. հիմնականում հանդիպում են հասարակ (երբեմն՝ հատուկ) անուններում: Այս հոլովման պատկանող բառերի եզակի սեռականը, տրականը և բացառականը նմանվում են միմյանց: Այդպիսի դեպքերում (հոգնակի թվում՝ միշտ) բացառական հոլովի

---

[6] Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երկեր հ. Զ, Ե., 1974, էջ 770:

[7] Ի հոլովման բառերի եզակի տրականի ի ձայնավորը (հոլովիչը) եզակի բացառականի է հոլովակերտից առաջ միշտ սղվում է, և §բացառականի է – ն փաստորեն հենվում է զրո հիմքի վրա. փոխանակ լինելու ի սրտիէ, յարքայիէ, լինում է ի սրտէ, յարքայէ» (տե՛ս Վ. Առաքելյան, Գրաբարի քերականություն, հ. 1, Ձևաբանություն, Ե., 2008, էջ 30 ):

[8] Տե՛ս Վ.Առաքելյան, նշվ. աշխ., էջ 29:

միակ տարբերակիչ ձևույթն է դառնում ի (յ) նախդիրը (հմմտ. գետ, սեռ – տր. գետոյ, գետոց, բաց. ի գետոյ, ի գետոց):

*Ջուր և հուր* բառերը հոգնակի սեռ., տր. և բացառական հոլովների *ջուրց, հուրց, ի ջուրց, ի հուրց* ձևերի կողքին ունեն նաև *ջրոց, հրոց, ի ջրոց, ի հրոց* ձևերը:

*Անղի* բառի մյուս տարբերակն է՝ *անղեյ:* Այս ձևերով են պայմանավորված հոգնակի սեռ., տր. և բաց. հոլովներում առկա հետևյալ զուգաձևությունները. *անղէւոց / անղէոց , յանղւոց / յանղէոց :*

Ո / Ի հոլովիչների զուգաձևությամբ են պայմանավորված *թիւ* բառի եզակի բացառականում առկա տարբերակները. *ի թուոյ / ի թուէ:*

Հմմտ. նաև հատկանվանական հետևյալ զուգահեռ ձևերը. Պաղեստին – ի Պաղեստինոյ // ի Պաղեստինէ:

*Ո* հոլովման պատկանող գոյականների առումով ուշագրավ է այն հանգամանքը, որ որոշ բառեր եզակի սեռական – տրականում զուգահեռաբար հանդես են գալիս – ջ հոլովակերտով՝ այսպիսով ունենալով – ոջ վերջավորությունը, որի վրա ավելանում է եզակի բացառականի *է* հոլովակերտը: Ըստ այդմ կազմվում են հետևյալ զուգահեռ ձևերը. *մարդ, ձի, ջերմ,* եզ. սեռ. – տր. *մարդոյ // մարդոջ, ձիոյ / ձիոջ, ջերմոյ / ջերմոջ,* եզ. բաց. *ի մարդոյ . ի մարդոջէ, ի ձիոյ // ի ձիոջէ, ի ջերմոյ / ի ջերմոջէ:*

**5. Ու հոլովման գոյականների զուգաձևություններ:**

Այսօրինակ տարբերակներն առկա են հիմնականում հասարակ անունների շրջանակներում, ընդ որում՝ առավելապես եզակի թվում: Այս դեպքում հաճախակի հանդիպում են ու հոլովիչի առկայությամբ և վերջինիս բացակայությամբ ձևավորված տարբերակներ: Ի հակադրություն *Ի* հոլովման բառերի, որոնց եզակի բացառականի *է* հոլովակերտից առաջ ի – ն առանց բացառության սղվում է, ՈՒ հոլովման գոյականների դեպքում հոլովիչը որոշ բառերում կարող է պահպանվել[9]: Հմմտ. ի զարդուէ / ի զարդէ, ի խրատուէ / ի խրատէ, ի նախանձուէ / ի նախանձէ, ի վնասուէ // ի վնասէ, յայգուէ / յայգէ, ի սպասուէ // ի սպասէ, ի զօրուէ / ի զօրէ, ի դասուէ / ի դասէ,

---

[9] Մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ եզակի բացառականի *է* հոլովակերտը հավելվում է կա՛մ ուղղականի, կա՛մ տրականի, երբեմն՝ երկուսի վրա, վերջինիս դեպքում էլ ձևավորվում են զուգահեռ ձևերը. ի խրատէ / ի խրատուէ և այլն: Այսինքն՝ այդ կարգի գոյականները համարվում են տարահիմք հոլովում ունեցող բառեր (տե՛ս Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 761, Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 89): Մինչդեռ հակառակ բացատրությունը ևս գոյություն ունի, այն է՝ հիմքի ձայնավոր ու – ն, շեշտից զրկվելով, սղվում է, և վերջավորությունը մնում է հիմքազուրկ (տե՛ս Վ. Առաքելյան, նշվ. աշխ. , էջ 43, Լ. Խաչատրյան, Գ. Թոսունյան, Գրաբարի դասագիրք, Ե., 2004, էջ 52 ):

ի զինուէ / ի զինէ, ի ճակատուէ / ի ճակատէ, ի զգեստուէ / ի զգեստէ, յուղտուէ / յուղտէ:

Հմմտ. նաև հետևյալ եռաձևությունները. ի Յովհաննէ / ի Յովհանէ / ի Յովհաննու[10]:

**6. Ե (ներքին) հոլովման գոյականների զուգաձևություններ:**

Այս հոլովման գոյականների ձևաբանական զուգաձևություններն ի հայտ են գալիս հոգնակի թեք ձևերում, որոնցում Ե հոլովիչին զուգահեռ հանդես է գալիս Ա հոլովիչը, թեպետև Ե հոլովման բոլոր բառերի համար Ա հոլովիչի զուգահեռ գործածությունը պարտադիր չէ: Հմմտ. հոգնակի բացառականի այդօրինակ երկձևությունները (եղջիւր) եղջերք – յեղջերց / յեղջերաց, (տարր) տարերք – ի տարերց / ի տարերաց, (կողր) կողերք – ի կողերց / ի կողերաց, (աստղ) աստեղք – յաստեղց / յաստեղաց, / (անգղ) անգեղք – յանգեղց / յանգեղաց , (դուստր) դստերք – ի դստերց / ի դստերաց, (աղբյուր) աղբերք – յաղբերց / յաղբերաց:

Ստորև բերվող տարբերակներում առկա են իւ երկբարբառի (շեշտից անկախ) հնչյունափոխությամբ (իւ > ե ) և անհնչյունափոխ ձևերը: Ընդ որում, ե – ն հոլովիչի գործառույթ է կատարում (ուղղ. աղբերք / աղբիւրք, սեռ. – տր. աղբերաց / աղբիւրաց) . յաղբերաց // յաղբիւրաց: *Աղբիւր* գոյականի եզակի ուղղականում և բացառականում նույնպես առկա են երկձևություններ. ուղղ. աղբիւր / աղբեր, բաց. յաղբիւրէ / յաղբերէ:

Հմմտ. նաև ուղղ. եղջիւր / եղջեր, բաց. յեղջիւրէ / յեղջերէ[11]:

**7. Ո – Ա խառը հոլովման գոյականների զուգաձևություններ:**

Այս հոլովման բառերը որոշակի են (ի – ով վերջացող բազմավանկ բառեր՝ մասնակի բացառություններով), որոնք սահմանափակ թիվ են կազմում: Համապատասխանաբար նաև ձևաբանական զուգաձևություններն էլ այս հոլովման շրջանակներում ի հայտ են գալիս բացառիկ դեպքերում:

Հայտնի է, որ այս հոլովման պատկանող բառերը եզակի տրականում զուգահեռաբար ստանում են – ջ հոլովակերտը, որով էլ պայմանավորված են Ո – Ա հոլովման եզակի բացառականում այնպիսի զուգաձևություններ, ինչպիսին են՝ եզակի տր. *տարւոյ / տարւոջ, տեղւոյ / տեղւոջ,* եզակի բաց. *ի տարւոյ / ի տարւոջէ, ի տեղւոյ / ի տեղւոջէ* ձևերը: Ընդ

---

[10] Վերջիններիս առկայությունը պայմանավորված է ուղղականում Յովհաննէս / Յովհան ձևերով:

[11] Տե՛ս Ա. Բագրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 20 :

որում, զուգաձևությունների երկրորդ եզրում առկա ձևերն ավելի տարածված են եզակի բացառականում[12]:

Ուշագրավ են – ուհի վերջածանցով հատուկ անունները, որոնք կարող են թեքվել միաժամանակ Ա պարզ արտաքին և Ո – Ա խառն արտաքին հոլովմամբ: Այդ բառերը պարզ հոլովմամբ թեքվելիս Ա հոլովիչից առաջ ունենում են ի > ե հնչյունափո-խությունը, իսկ Ո – Ա – ով հոլովվելիս՝ Ո – ից առաջ ի > ւ հնչյունափոխությունը: Համտ. Զարուհի – ի Զարուհեայ / ի Զարուհւոյ, Տիգրանուհի – ի Տիգրանուհեայ / ի Տիգրանուհւոյ[13] և այլն:

**8. Ի – Ա խառն արտաքին հոլովման գոյականների զուգաձևություններ:**

Այս հոլովման գոյականների զուգահեռ ձևերը բացառականում խիստ հազվադեպ են հանդիպում. հմմտ. եզակի ուղղ. ծնող / ծնօղ, տրական ծնողի / ծնօղի, բացառական ի ծնողէ // ի ծնօղէ:

**9. Ի – Ա խառը ներքին հոլովման գոյականների զուգաձևություններ:**

Այս հոլովման շրջանակներում հոլովական զուգաձևություններ ի հայտ են գալիս մասնավորաբար եզակի բացառականում, երբ որոշ բառեր, հանդես գալով առանց հոլովիչի կամ Ի > Ա ձայնդարձով, ցուցաբերում են հոլովական տարբերակայ-նություն: Համտ. խաշն – ի խաշնէ / ի խաշանէ, թոռն – ի թոռնէ / ի թոռանէ, մատն – ի մատնէ / ի մատանէ, բեռն – ի բեռնէ / ի բեռանէ, գառն – ի գառնէ / ի գառանէ, լեռն – ի լեռնէ // երբեմն՝ ի լեառնէ, կաթն – ի կաթնէ / ի կաթանէ, հարսն – ի հարսնէ / ի հարսանէ, մասն – ի մասնէ / ի մասանէ[14] :

**10. Անկանոն հոլովման գոյականների զուգաձևություններ:**

Այս հոլովման բառերի հոլովման առանձնահատկություններով են պայմանավորված նրանց ձևաբանական զուգաձևությունները, որոնք կարելի է դիտարկել եզակի և հոգնակի բացառականում, որպես հոլովական

---

[12] Ա.Այտընյանը *տարի* և *տեղի* բառերը քննարկում է անկանոն հոլովման ենթարկվող բառերի շրջանակներում: Ընդ որում, այդ բառերի եզակի բացառականում ընդունում է միայն *ի տարւոջէ, ի տեղւոջէ* բառաձևերը (տե՛ս Ա. Այտընեան, Քննական քերականութիւն աշխարհաբարի կամ արդի հայերէն լեզուի հանդերձ ներածութեամբ և յաւելուածով, Վիէննա, 1866. (Ե. , 1987), էջ 434 :

[13] Մ.Աբեղյանն ընդհանուր Ա հոլովման մեջ է ներառում նաև *քրմուհի, աստվածուհի* բառերը. սեռ. – տր. քրմուհեայ, աստվածուհեայ (տե՛ս Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 766):

[14] Ի – Ա ներքին թեքման պատկանող ոչ բոլոր բառերը եզակի բացառականում կարող են ստանալ Ա ձայնավորը, հմմտ. դառն – ի դառնէ, սառն – ի սառնէ, կամն – ի կամնէ և այլն: Կան բառեր էլ, որոնք միշտ (ի հոլովիչի փոխարեն) ստանում են Ա ձայնավորը. եղն – յեղանէ, եզն – յեզանէ և այլն:

տարբերակներ: Հմմտ. տէր – ի տեառնէ / ի տեռնէ, տանուտէր – ի տանուտեռնէ / ի տանուտերէ, քոյր – ի քեռէ / ի քեռանէ / ի քեռոյ / ի քուրոջէ / ի քրոջէ:

Հմմտ. հոլովական – հնչյունափոխական (աւ // օ) հետևյալ տարբերակները. յաւրէ /յօրէ, ի մաւրէ /ի մօրէ, յեղբաւրէ/ յեղբօրէ և այլն:

Հմմտ. նաև *տիւ* գոյականի՝ տարբեր հիմքերից կազմված բացառականի հետևյալ զուգաձևությունները. ի տուէ / ի տուընջենէ: Ինչպես և՝ ը գաղտնավանկի գրությամբ և առանց դրա տարբերակները. ի տուընջենէ / ի տունջենէ[15]:

Զարտուղի կամ անկանոն հոլովում ունեցող որոշ գոյականներ փոփոխակներով կարող են հանդես գալ նաև հոգնակի բացառականում. տեարք – ի տերանց / ի տեարց, կանայք – ի կանանց / ի կանաց, տիկնայք – ի տիկնանց / ի տիկնայց / ի տիկնաց, հարք – ի հարց / ի հարանց և այլն:

Վերջիններս պայմանավորված են հոգնակի տրականի երկձևություններով (եռաձևություններով), որոնցից Ի նախդրի միջոցով կազմվել է հոգնակի բացառականը:

*Քոյր* բառը հոգնակի բացառականում հանդես է բերում հետևյալ զուգաձևությունները. *ի քերց / ի քուերց* (հմմտ. հոգն. սեռ / տր. քերց // քուերց):

*Գիւղ* բառը (հոգնակի ուղղ. *գեւղք / գեաւղք)* հոգնակի սեռ. / տր. և բացառական հոլովներում դրսևորում է տարբերակային հետևյալ ձևերը. գիւղից // գեաւղից, ի գիւղից / ի գեաւղից // նաև՝ ի գեղջուց:

Այսպիսով, գրաբարի բացառական հոլովում զուգաձևություն են ցուցաբերում այն բառերը, որոնք պատկանում են՝

ա) պարզ արտաքին հոլովման. Ա, Ի, Ո, ՈՒ,

բ) պարզ ներքին հոլովման. Ա, Ե,

գ) խառը արտաքին հոլովման. Ի-Ա, Ո-Ա,

դ) խառը ներքին հոլովման. Ի-Ա,

ե) անկանոն հոլովման:

**Լ.Ենգոյան**

**Զուգաձևություններ գրաբարի բացառական հոլովում**

**Ամփոփում**

Սույն հոդվածում քննարկվում են գրաբարի զուգաձևությունները, որոնք դրսևորվում են պարզ և խառը հոլովման տիպերով: Քերականական նյութը ուսումնասիրվում է բացառական հոլովի շրջանակներում:

[15] Հմմտ. Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 108:

Հոլովական զուգաձևություններում առկա են այնպիսի ձևեր, որոնք համարվում են ինչպես առաջնային, այնպես էլ երկրորդային, ինչպես կանոնավոր, այնպես էլ անկանոն լեզվական տարրեր:

Հին հայերենի բացառական հոլովում զուգաձևությունները դրսևորվում են՝

- պարզ արտաքին թեքումով. Ա (ի Ղուկայ // ի Ղուկասէ), Ի (յԱտոնիոսէ // յԱնտոնէ), Ու (ի զօրուէ // ի զօրէ), Ո (ի մարդոյ // ի մարդոջէ),
- պարզ ներքին թեքումով. Ա (յականէ // յակնէ), Ե (յաստեղց // յաստեղաց),
- խառը ներքին թեքումով. Ի-Ա (ի թոռնէ // ի թոռանէ),
- խառը արտաքին թեքումով. Ի-Ա (ի ծնողէ // ի ծնողաց), Ո-Ա (ի տարւոյ // ի տարեաց),
- անկանոն հոլովմամբ. (ի հարց // ի հարանց, ի կանանց // ի կանաց).

Հոլովական զուգահեռ ձևերում պահպանվում է գոյականի իմաստային նույնությունը:

**Л. Енгоян**

**Падежные параллелизмы в грабаре**
**(отложительный падеж)**

**Резюме**

В данной статье рассматриваются падежные параллелизмы существительного простого и смешанного склонения в грабаре. Грамматический материал изучается в рамках отложительного падежа.

В падежных параллелизмах налицо такие формы, которые считаются как первичными и вторичными, так и правильными и неправильными языковыми элементами.

В древнеармянском параллелизмы в отложительном падеже проявляют:

- простое внешнее склонение: **А** (ի Ղուկայ // ի Ղուկասէ), **И** (յԱտոնիոսէ // յԱնտոնէ), **У** (ի զօրուէ // ի զօրէ), **О** (ի մարդոյ // ի մարդոջէ),
- простое внутреннее склонение: **А** (յականէ // յակնէ), **Е** (յաստեղց // յաստեղաց),
- смешанное внутреннее склонение: **И-А** (ի թոռնէ // ի թոռանէ),
- смешанное внешнее склонение: **И- А** (ի ծնողէ // ի ծնողաց), **О – А** (ի տարւոյ // ի տարեաց),

- нерегулярное склонение: (ի հարց // ի հարանց, ի կանանց // ի կանաց).

В параллельных формах сохраняется смысловая тождественность существительного.

L. Yengoyan

**Doublets in grabar` s ablativus declension**

**Summary**

The article considers parallelism of grabar` s ablativus declension, the types are distinguished by their regular and irregular declination.

- Inside regular declinations are performed by groups of simple and mixed cases and the

external and internal declinations.

- Simple external declension - A (ի Ղուկայ // ի Ղուկասէ), I (յԱտոնիուէ // յԱնտոնէ), U (իզօրուէ // ի զօրէ), O (ի մարդոյ // ի մարդոջէ),
- Simple internal declension - A (յականէ // յակնէ), E (յաստեղց // յաստեղաց),
- Mixed internal declension – I-A (ի թոռնէ // ի թոռանէ),
- Mixed external declension I-A (ի ծնողէ // ի ծնողաց), O – A (ի տարւոյ // ի տարեաց),
- Irregular declension - (ի հարց // ի հարանց, ի կանանց // ի կանաց).

In the doublets forms the words keep their grammatical meaning identity.

ԱՐՄԻՆԵ ՕՂԵՅԱՆ
ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնի հայցորդ
ՀՏԴ 81'373

# ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԹԵՄԱՏԻԿ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ՈՒ «ՄԱՐՄՆԻ ՄԱՍԵՐ» ԻՄԱՍՏԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱ

**Բանալի բառեր եւ արտահայտություններ.** բառապաշար, բառապաշարի դասակարգում, բառային հիմնական ֆոնդ, մարմնի մասեր, իմաստային խումբ, սոմատիզմ:

**Ключевые слова и выражения:** лексика, классификация лексики, основной лексический состав, части тела, смисловая группа, соматизм.

**Key words and expressions:** vocabulary, classification of vocabulary, basic lexical composition, parts of the body, semantic group, somatism.

Բառապաշարը պատմական կարգ է: Սա նշանակում է, որ լեզվի պատմական զարգացման ընթացքում այն անընդհատ փոփոխվում, լրացվում և կատարելագործվում է: «Լեզվի կառուցվածքային բաղադրիչներից ամենազգայունը, որն ամենից շատ է ենթարկվում արտալեզվական գործոնների ազդեցությանը, բառապաշարն է: Հասարակական կյանքում կատարվող փոփոխություններն առաջին հերթին իրենց արտահայտությունն են գտնում բառապաշարի մեջ: Նրա փոփոխումն ու լրացումը անմիջականորեն կապված է կյանքում կատարվող սոցիալական փոփոխությունների, մարդու արտադրական գործունեության, հասարակական-տնտեսական կյանքի, մշակույթի, գիտության եւ տեխնիկայի զարգացման հետ»[1]: Նոր կյանքի հետ մեկտեղ լեզվում նոր բառեր են ստեղծվում, հին հասկացությունների դուրս մղումը հետին պլան է մղում նաեւ դրանք անվանող բառերը, եւ սա անրդհատ գործընթաց է:

Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը կազմված է բառային հիմնական ֆոնդից եւ բառային կազմից: Բառային հիմնական ֆոնդը բառապաշարի հիմքն է, նրա բազան, ամենակայուն շերտը, որի մեջ առաջին հերթին մտնում են նախասկզբնական եւ նախնական, ամենակարևոր այն բառերը, որոնք հաստատապես մուտք են գործել այդ լեզվով խոսող ժողովրդի կյանքում[2]: Դրանք ընդհանուր գործածական այն բառերն են,

[1] Ա. Սուքիասյան, Ժամանակակից Հայոց լեզու, Եր., 2004, էջ 137:
[2] Նույն տեղում, էջ 139:

որոնք անվանում են օբյեկտիվ իրականության առարկաները, երեւույթները, գործընթացները, հատկանիշները եւ այլն: Այդ բառերը տարբեր դարաշրջանների եւ տարբեր ժողովուրդների լեզուների համար կարող են բնույթով տարբեր լինել: Բառային կազմի մեջ մտնում են մյուս բոլոր բառերը՝ լեզվի տարբեր փուլերում մուտք գործած:

Ժամանակից հայոց լեզվի բառային հիմնական ֆոնդի մեջ սովորաբար դասվում են այն բառերը, որոնք խոսողը մշտապես օգտագործում է, դրանք բացատրության կարիք չեն զգում, կիրառվում են բոլորի կողմից՝ անկախ կրթությունից, մասնագիտությունից եւ բնակության վայրից: Դրանք լեզվի ամենաանհրաժեշտ բառերն են, կյանքի կարեւորագույն հասկացությունները եւ լեզվում կան նրա կազմավորման սկզբից, ապրում են շատ երկար, դարերի ընթացքում: Հայերենի դեպքում հիմնական բառաֆոնդում բնիկ հայերեն բառերն են, այսինքն՝ հնդեվրոպական նախալեզվից ժառանգած, ինչպես նաեւ այլ ժողովդուրդների եւ քաղաքակրթությունների հետ երկարատեւ շփումների արդյունքում վաղ շրջանում կատարած փոխառությունները:

Բառային հիմնական ֆոնդն ամբողջությամբ պահպանվում է եւ ցուցաբերում մեծ դիմացկունություն, բայց այն նույնպես չի մնում անփոփոխ[3]: Ընդհանուր առմամբ անկախ նրանից, որ հիմնական բառաֆոնդը լեզվի պատմության ընթացքում համեմատաբար քիչ է փոփոխությունների ենթարկվում, այնուամենայնիվ, բառապաշարը համարվում է լեզվի կառուցվածքի առավել արագ փոփոխվող ու շարժուն մակարդակը: Հենց այս հատկանիշի շնորհիվ էլ դրա ուսումնասիրությունը լեզվաբանության կարեւոր ուղղություններից մեկն է բոլոր ժամանակներում. հետազոտելու նյութ մշտապես կա: Բառապաշարի ուսումնասիրությունների մեջ հատկապես ակտուալ են տարատեսակ դասակարգումները՝ ըստ ծագման, ըստ ակտիվ եւ պասիվ կազմի, ոճական կիրառության, իմաստային տարբերակման[4]: Դասակարգման տեսակներից մեկը բառամթերքը թեմատիկ բաժանման ենթարկելն է: Թեմատիկ դասակարգումը բառապաշարային մակարդակի միավորումների համակարգային ուսումնասիրության նախնական և կարևոր փուլն է, այն դեպքում, երբ բառիմաստային դասակարգումը վերջին՝ ամփոփիչ փուլն է: Սովորաբար նման դասակարգման փորձերը առաջին հերթին վերաբերում են բառային հիմնական ֆոնդին: Լեզվաբաններն առանձնացվում են

[3] Ա.Գրիգորյան, Եր, 1957, էջ 193:

[4] Տե'ս Ա. Սուքիասյան, նշվ. աշխ., էջ 142-169, Գ. Ջահուկյան, Է. Աղայան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան, Հայոց լեզու, 1 մաս, Ա պրակ, Եր, 1980, էջ 327:

ազգակցական հարաբերություններ ցույց տվող բառեր, մարմնի մասերի և նյութերի, բնության երեւույթների եւ առարկաների, կենդանական ու բուսական աշխարհի, սննդամթերքի, աշխատանքային տարբեր գործիքների ու գործընթացների, կենցաղի, արհեստների եւ մասնագիտությունների, բնակավայրերի, վարչական բաժանումների հետ կապված անվանումներ, գործողության եւ վիճակի, վերացական եւ թանձրացական, որակ, հատկանիշ ցույց տվող բառեր: Որպես առանձին խումբ նշվում են դերանունները, թվականները, շաղկապները, կապերը, ձայնարկությունները, եղանակավորող բառերը[5]: Ընդհանրապես նման խմբերի առանձնացումը լեզվաբանության մեջ ընդունված երեւույթ է:

Օրինակ՝ հնդեվրոպական բառապաշարի համար այդպիսի դասակարգում կատարել է Ա. Մեյեն[6]: Կ. Դ. Բաքն էլ հնդեվրոպական նախալեզվից ժառանգված բառերն է թեմատիկ խմբերի բաժանել[7]: Հայ լեզվաբանության մեջ այդպիսի փորձ կատարել է Հր. Աճառյանը: «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ լեզվաբանն ըստ նշանակության եւ ըստ տեսակի առանձնացնում է բնիկ բառերի քսաներկու այդպիսի խումբ.

1. Բնության երեւույթներ
2. Կրոնական բառեր
3. Մարդ եւ մարմնի մասեր
4. Հիվանդություններ
5. Կենդանիներ
6. Ընտանիք
7. Երկրագործություն
8. Խաշնարածություն եւ գյուղատնտեսություն
9. Արհեստ եւ արվեստ
10. Գույներ
11. Վաճառականություն
12.Շինարարություն
13. Հագուստ եւ զարդ
14. Ուտելիք
15. Առտնին տնտեսություն
16. Թիվ-չափ

---

[5] Տե՛ս Ա. Սուքիասյան, նշվ. աշխ., էջ 140-141:

[6] Տե՛ս А. Мейе, Введение в сравнительное изучение индоевропейских языков, М.-Л., 1938, 15 400-408:

[7] Տե՛ս Մ. Հաննեյան, Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, Եր., 1979, էջ 128:

17. Մետաղներ, հանք,
18. Ճանապարհորդություն
19. Ժամանակ, տեղ
20. Երկիր-պետություն-զենք
21. Սովորական կյանքի բառեր
22. Դերանուններ, շաղկապներ եւ նմաններ

Գ. Ջահուկյանը նույնպես նման դասակարգում է կատարում: Թեմատիկ այսպիսի խմբեր լեզվաբանն առանձնացնում է Հայոց լեզվի պատմության նախագրային ժամանակաշրջանին նվիրված իր աշխատության մեջ[8]: Նա հնդեվրոպական արմատները դասակարգում է ըստ խոսքիմասային պատկանելության, ապա հենվելով Կ. Բաքի բաժանման վրա՝ գոյականների մեջ առանձնացնում է արմատների կամ արմատական բառերի հետեւյալ իմաստային խմբերը.

1. Ֆիզիկական աշխարհ (լույս, լուսին)
2. ընտանեկան հարաբերություն (հայր, մայրմ, դուստր)
3. Կենդանիներ (կով, եզ)
4. մարմնի մասեր (ծնոտ, ոտք)
5. ուտելիք եւ խմելիք (աղ)
6. բնակարան, տուն, կահույք (դուռ)
7. ժամանակ (օր, ամիս)

Հնդեվրոպական բառապաշարի դեպքում առանձնացվող խմբերի թիվը լեզվաբանը մեծացնում է եւ Կ. Բաքի եւ Աճառյանի նման հասցնում 22-ի[9]:

Ինչպես նկատեցինք, տարբեր լեզվաբանների կատարած դասակարգումներում առաջինների շարքում նշվող թեմատիկ խումբը մարմնի տարբեր մասերին է վերաբերում: Առհասարակ վերջին շրջանում գիտության տարբեր ոլորտներում նկատվում է անդրադարձ մարդուն՝ որպես հետազոտությունների հիմնական առանցքի: Մարդաբանական հարացույցը կենտրոնական է դառնում նաև լեզվաբանության համար: 20-21-րդ դարերում արտասահմանում նկատվում է շարժ դեպի լեզվական նյութի վերլուծության անդրոպոլոգիկան մոտեցումը: Սա հանգեցրել է նրան, որ ժամանակակից հետազոտող-լեզվաբաններն ավելի ու ավելի հաճախ լեզվի ուսումնասիրությանը մոտենում են որպես մարդու հետ անխզելիորեն կապված երևույթի: Հետազոտությունների մարդակենտրոն կողմնորոշումը ուղղված է լեզվում մարդկային գործոնի կարեւորմամբ, ինչը

---

[8] Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր, 1987, էջ 51:

[9] Տես Գ. Ջահուկյան նշվ. աշխ., էջ 50:

հնարավորություն է տալիս հենվել ոչ թե ձևի, այլ բովանդակության վրա. «Լեզվում մարդու գործոնին անդրադարձը վկայում է ժամանակակից լեզվաբանության մեջ նկատվող չափազանց կարևոր մեթոդաբանական տեղաշարժի մասին: Լեզուն դիտարկվում է ինքն իր մեջ և իր համար»[10] : Մարդկային գործոնը մեծ դեր է խաղում բառաստեղծման մեջ: Մարդն անդրադառնում է սեփական մարմնին՝ օգտագործելով այն լեզվական միավորների ձևավորման համար: «Քանի որ մարդու ուշադրության կենտրոնում հենց ինքն է, ապա այստեղից է նրա մշտական ձգտումը նկարագրել արտաքին աշխարհը իր կերպարով ու նմանությամբ»[11]: «Մարդը եսակենտրոն է,- գրում է Վ. Գ. Գակը,-նա տեսնում է իր մեջ տիեզերքի կենտրոնը և արտացոլում է իր նմանողությամբ»:

Սրա հետ կապված ժամանակակից հոգելեզվաբանության կենտրոնական հասկացություններից մեկը դառնում է «լեզվական գիտակցություն» հասկացությունը, իսկ նրանով որոշվող գլխավոր հարցերից մեկը՝ մշակութային յուրահատկությունը:

Լեզվագիտակցումը (լեզվիմացությունը) արտացոլում է մարդու աշխարհընկալումը, մշակույթը, ազգի պատմությունը: Սա ընդգրկուն հասկացություն է, ուստի լեզվագիտակցության ուսումնասիրությունը բաղկացած է տարբեր ոլորտներում լեզվական դրսևորումների դիտարկումից: Այս տեսանկյունից մարմնի մասի անվանումները հետաքրքիր նյութ են ներկայացնում: «Այն, որ իրականությունը տարբեր լեզուներում տարբեր կերպ է արտացոլվում, դրսևորվում է անգամ այնպիսի օբյեկտիվ, ունիվերսալ ոլորտում, ինչպիսին մարդու մարմինն է»[12]: Մարդու մարմինը իրականության մի մասն է, որը գոյություն ունի ցանկացած լեզվով խոսողի կյանքում, բայց տարբեր լեզուների կրողները տարբեր կերպ են ընկալում եւ գնահատում մարմնի մասերը, դրա համար այն արժեքավոր նյութ է աշխարհի լեզվական քարտեզի ուսումնասիրության համար: Մինչև այժմ չի հայտնաբերվել մի ժողովուրդ, որ չունի մարմնի գոնե մի քանի մասերի անվանումներ. գլուխ, ձեռք, ոտք, աչք, ականջ, բերան[13]: Ինչպես նշում է Ն. Կարաուլովը. «Հնարավոր չէ ճանաչել լեզուն ինքնին՝ առանց նրա սահմաններից դուրս գալու՝ չանդրադառնալով նրա ստեղծողին, կրողին,

---

[10] В. Постовалова, Язык и картина мира, М., 1988, 8

[11] В. Г. Гак, Проблемы лексико-граматической организации предложения, Автореф. Дис….д-ра филол. Наук, М., 1967, 274, էջ 7

[12] Л. Н. Иорданская, лингвистика частей тела// Семиотика, 2004, 397

[13] Вакк Ф. О., О соматической фразеологии в современном эстонском литературном языке: Автореферат дис. ... канд. филол. наук. Таллин, 1964.

կիրառողին՝ մարդուն, այսինքն, կոնկրետ լեզվական անհատին»[14]: Լեզվաբանական գրականության մեջ մարմնի մասերի հետ կապված ուսումնասիրություններն ընդունված է կոչել սոմատիկա(հուն. sōma- «մարմին»): «Սոմատիկ» տերմինն օգտագործում են կենսաբանության եւ բժշկության մեջ մարդու մարմնի հետ կապված, մարմնական իմաստով, ինչը հակադրվում է «հոգեկան» հասկացությանը: Լեզվաբանության մեջ սոմատիզմը մարդու մարմնի կառուցվածքային տարրերի անվանումն է: Սոմատիկ բառապաշար նշանակում է մարդու մարմնի մասերը եւ նրա օրգանիզմի դրսևորումները անվանող բառերի ամբողջություն: Սա հիմնական բառաֆոնդի մեջ մտնող իմաստային թեմատիկ խմբերից մեկն է, կուտակվում է հազարամյակների ընթացքում եւ արտացոլում է ոչ միայն լեզվակիրների գիտելիքներն արտաքին աշխարհի, այլեւ մարդու պատկերացումներն իր եւ իր օրգանիզմի մասին;

Լեզվաբանական կիրառության մեջ այս տերմինը առաջին անգամ ներմուծել է Կ. Բաքը, երբ ուսումնասիրում էր էստոներենի՝ մարդու մարմնի մասերով կազմված դարձվածքները՝ անվանելով դրանք սոմատիկ[15]: Նա եզրակացրել է, որ սոմատիզմները հնագույն բառաշերտ են: Սոմատիզմները ցանկացած մարդկային հասարակությունում եւ հարաբերություններում անհրաժեշտ հասկացությունների խումբն են՝ առանց որոնց դժվար է պատկերացնել մարդկային խոսքը: Սոմատիկ բառապաշարն առանձնանում է կիրառության բարձր հաճախակիությամբ:

20-րդ դարի 2-րդ կեսից «սոմատիկ» տերմինը սկսում է ակտիվորեն օգտագործվել այն բառերի հետազոտության մեջ, որոնք իրենց իմաստներում արտացոլում են այն, ինչ վերաբերվում է մարմնին (այդ թվում՝ մարմնի մասերով կազմված դարձվածքները)[16]: Գիտական գրականության մեջ կա սոմատիզմների մի քանի դասակարգում: Դրանց հիմքում ընկած են գործառութային հատկանիշները, ինչպես նաև հակադրությունը՝ արտաքին, ներքին, վերին, ստորին: Հիմնականում առանձնացվում են գլխադիմային հատվածի մարմնամասեր, կմախքի եւ հենաշարժական համակարգ, ներքին օրգաններ, վերին եւ ստորին վերջույթներ:

Սոմատիկ բառաշերտը, որ ցանկացած լեզվի բառապաշարի հնագույն հատվածն է, վաղուց եղել է լեզվաբանների ուշադրության առարկան: Լեզվի

[14] Ю. Н. Караулов , Русский язык и языковая личность. М., 1987. 263 , էջ 7:
[15] Н. А. Власова , Фразеологическое гнездо с вершиной «глаз» в общенародном языке и говорах: Автореферат дис. ... канд. филол. наук., Орел, 1997. 242, էջ 27:
[16] Հայ լեզվաբանության մեջ ընդունված է «կազմախոսական» տերմինը:

և գիտության շարունակական զարգացմանը համընթաց սոմատիկ բառապաշարի նկատմամբ հետաքրքրությունը նույնպես խորանում է եւ ձեռք բերում նոր բնութագիր՝ ընդգրկելով նորանոր գիտատեսական հետազոտություններ:

Վերջին տասնամյակների լեզվաբանական աշխատությունների մեծ մասը նվիրված է հենց սոմատիկ բառապաշարին և սոմատիկ դարձվածաբանությանը: Օրինակ՝ ռուսական պետական գրադարանի բանասիրական բաժնի տվյալների բազայում որոնումների բաժնում "Сома" և "Части тела" վերտառությամբ մոտ 70 ատենախոսությունների անվանումներ է բերում, որոնք պաշտպանել են վերջին 10 տարիներին (Պետրովա 2012, Սայֆի 2011, Շիրովա 2011, Չումիչյովա 2010 և այլն), ինչպես նաեւ բազմաթիվ լեզվաբանական այլ անդրադարձներ:

Նույն ակտիվությունն իհարկե չի նկատվում հայ լեզվաբանության մեջ: «Մարմնի մասեր» թեմատիկ խմբին սահմանափակ թվով աշխատություններ են նվիրված, եղածներն էլ թեմային հպանցիկ անդրադարձող (հիմնականում դարձվածաբանության մասին խոսելիս):
Առաջին անգամ մարմնի մասերի անվանումների ուսումնասիրությանն անդրադարձել է Ս. Հաննեյանը՝ չափազանց կարեւորելով այս իմաստային խմբի ուսումնասիրությունը. «Մարմնի մասեր խումբը հայերենում հատուկ քննության առարկա չի դարձել, մինչդեռ մեր լեզվի հնդեվրոպական բառապաշարի ուսումնասիրության համար մարմնի մասերի անվանումները կարեւոր են»[17]: Դա, հեղինակի կարծիքով, պայմանավորված է այն հանգամանքով, որ այս կարգի բառերը մտնում են լեզվի բառային հիմնական ֆոնդի մեջ, համեմատաբար քիչ են կախված տվյալ ժողովրդի մշակույթի, քաղաքակրթության, քաղաքական կյանքի փոփոխություններից եւ հենց առումով էլ դրանք վստահելի նյութ են հայերենի եւ մյուս հնդեվրոպական լեզուների ցեղակցության աստիճանը, միմյանց նկատմամբ գրաված դիրքը պարզելու, ինչպես նաեւ միմյանցից անջատվելու հարաբերական ժամանակագրությունը որոշելու համար:

Իր աշխատանքում Մ.Հաննեյանը տվել է մարմնի մասերի հնդեվրոպական անվանումների տարածքային նկարագիրը, բացահայտել այդ անվանումների զուգաբանական տարածքները՝ բառաձեւերի եւ բառիմաստների համար առանձին-առանձին[18]:

[17] Մ. Հաննեյան, Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, Եր., 1979, էջ128:
[18] Նույն տեղում, էջ 129:

Իսկապես սոմատիկ բառապաշարն առավել կայուն է բառերի մյուս խմբերի համեմատ, դրա ապացույցն այն է, որ հնդեվրոպական քույր լեզուներում մարմնի մասերից շատերն իրար նման են՝ օր.(հմմտ.՝ աչք- սանս. akša, բերան- լիթ. Burna, սիրտ- լատ. cord, անգլ. heart ) Բացի այս՝ նշված բառախմբում փոխառությունները փոքր տոկոս են կազմում, իսկ եթե կան, դա արդեն իսկ արտալեզվական որոշ փաստերի հանգելու հնարավորություն է տալիս: Որպես բառապաշարի արխայիկ և կայուն բաղադրիչների համակարգ՝ սոմատիզմները միշտ օգտագործվում են լեզվի պատմության բազմաթիվ կարևոր հարցերի որոշման համար, այդ թվում՝ լեզուների ցեղակցության հաստատման համար:

Բացի այդ՝ սոմատիզմների ուսումնասիրությունն ունի նաեւ կիրառական-գործաբանական նշանակություն: Մեր ժամանակներում, երբ գլոբալիզացիան, ինտեգրացիան և մշակութային միաձուլումը պահանջում են միջմշակութային հաղորդակցման հետ կապված հարցերի լուծումներ՝այդ թվում լեզվի բառապաշարի ուսուցման արդյունավետություն, չափազանց կարեւորվում է սոմատիկ բառակազմի ուսումնասիրությունը: Լեզվի իմացության ժամանակակից փուլում պտղաբեր և հեռանկարային է լեզվի բառային կազմի ուսուցման համակարգային մոդելը:


Արմինե Օլեյան

**Բառապաշարի թեմատիկ դասակարգումն ու «մարմնի մասեր» իմաստային խումբը լեզվաբանական հետազոտության առարկա**

**Ամփոփում**

Հոդվածում ներկայացված է բառապաշարի իմաստային դասակարգումն ու լեզվաբանների կողմից «մարմնի մասեր» թեմատիկ խմբի առանձնացումը, ինչպես նաեւ դրա կարեւորությունը լեզվաբանական հետազոտությունների համար: Փորձ է կատարվում ցույց տալ, որ տվյալ իմաստային խմբի ուսումնասիրությունը կարող է բացահայտել գրական լեզվի ու բարբառների կապերը, բացի այդ նպաստել լեզվի պատմության բազմաթիվ կարևոր հարցերի որոշման, այդ թվում՝ լեզուների ցեղակցության հաստատման համար:

А. Олеян

**Тематическая классификация лексики и смысловая группа “части тела” как предмет лингвистического исследования**

**Резюме**

В статье представлена смысловая классификация лексики и выделение тематической группы “части тела” со стороны лингвистов, а также

его значимость для лингвистических исследований. Делается попытка показать, что исследование данной смысловой группы может выявить связи литературного языка с диалектами, кроме этого содействовать решению многочисленных важных вопросов истории языка, в том числе подтверждения родства языков.

A. Oleyan

**Thematic classification of vocabulary and semantic group "parts of the body" as a subject of linguistic research**

**Summary**

The article presents a semantic classification of vocabulary and thematic selection of the group "parts of the body" by linguists, as well as its importance for linguistic researches.

An attempt is made to show that the study of this semantic group can reveal the connections of the literary language with dialects, in addition contribute to the solution of many important aspects of the history of language, including the confirmation of related languages.

## ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ
Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության
և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ՀՏԴ 821.19.0

# ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԴՎՅԱԼ ԴԱՏԱՊԱՐՏՈՂ

**Բանալի բառեր.** ցեղասպանություն, հրապարակախոսություն, թուրքեր, հայրենիք, հայ, լավատես, նվիրվածություն, բանաստեղծուհի, ուղեգրություն, ազգային:

**Ключевые слова**: геноцид, публицистика, турки, отчизна, армянин, оптимист, преданность, поэтесса, путевые записки, национальный

**Key words**: genocide, publicism, Turks, fatherland, Armenian, optimist, devotion, poetess, travelling notes, national.

Սիլվա Կապուտիկյանը 1988 թվականին հրատարակած հերթական գրքերից մեկը խորագրել է <<Գիրս մնա հիշատակող>>: Նրանք, ովքեր ծանոթ են հայ միջնադարյան ձեռագրերին, նաև Դերենիկ Դեմիրճյանի <<Գիրք ծաղկանց>> հրաշալի երկին, պետք է հիշեն, թե միջնադարի բազում անանուն գրիչ՝ նվիրյալներ, իրենց արտագրած ձեռագրի վերջում՝ որպես հիշատակարան, հետագա սերունդներին դիմում էին հետևյալ խոսք-պատգամով.

Մաշի ձեռքս, դառնա ի հող,
Գիրս մնա հիշատակող:

Հիմա, երբ այլևս ֆիզիկապես կենդանի չէ հայ ժողովրդի ամենամեծ բանաստեղծուհին, հասարակական գործիչը, խիզախ քաղաքացիական կեցվածք ունեցող հայուհին, կարող ենք ասել, որ նրա գրքերը ապրում են և նրա պատգամները՝ մեզ ուղղորդում:

Սիլվա Կապուտիկյանին գրելու ձիրք տրված էր վերուստ, և մասնագետները վաղուց նկատել են, որ բանաստեղծուհու բազմալար քնարի մեջ ամենահնչեղը եղել են հայրենիք ու սեր թեմաները: Եվ դա հենց առաջին բանաստեղծություններից: 1939 թվականին 20-ամյա բանաստեղծուհին հուզիչ տողեր է նվիրել Խաչատուր Աբովյանին՝ դիպուկ բնորոշումներով հայտնի դարձնելով, թե իր կրեդոն հայ ժողովրդին անմնացորդ նվիրված զավակներին հետևելն է.

Չյուների պես մաքու՛ր էր նա,

Ու այնքան մեծ, որ երբ հիմա
Նայում եմ ես, նայում լռին
Արարատի ձյուն-կատարին,
Թվում է, թե այնտեղ բացված
Անդունդներն ու ձորերն անանց
Նրա ոտքի հետքերն են խոր,
Որ մնում են մինչև այսօր՝
Խորու՜նկ, ինչպես հուշը նրա՝
Մեր նաիրյա՜ն սրտի վրա[1]:

Ուշադրություն դարձնենք *<<Նաիրյան սիրտ>>* բառակապակցությանը: Այս բնութագիրը այնքան էլ ընդունելի չէր 1937 թվի չարագուշակ օրերից անմիջապես հետո: Սակայն Սիլվա Կապուտիկյանի պոեզիայում, որն անպայման նաև համամարդկային է, առաջնայինը ազգայինն է:

Բանաստեղծուհին հիացած է հայկական աչքերով, որոնք աշխարհում եզակի են. նա այդ աչքերում տեսնում է իր ժողովրդի դարավոր ընթացքը, թշնամական հարվածներին դիմակայելու կամքը, գեղեցիկ ու իմաստուն լինելու ձգտումը.

Դուք, տեսած այդքան լաց ու արհավիրք,
Ինչպե՞ս կարեցաք դարերից այն հին
Մնալ այսքան մե՜ղմ, այսքան գեղեցի՜կ,
Այսքան գեղեցի՜կ նայել աշխարհին...[2]

Բանաստեղծուհին հիանալի գիտի իր ժողովրդի պատմությունը, որի ամենաողբերգական դրվագը սկսվել է 1915 թվականի ապրիլի 24-ին՝ խլելով Արևմտահայաստանի մեկ ու կես միլիոն անմեղ հայերի կյանքը և դատարկելով Մեծ Հայքի հսկայական տարածքը իր բնիկ տերերից: Սա եղել է Սիլվա Կապուտիկյան գրողի մեծագույն ողբերգությունը. դա պարզ երևում է նրա ողջ ստեղծագործությունից՝ լինի բանաստեղծություն, հրապարակախոսություն, թե ուղեգրություն:

1979-ին լույս է տեսել <<Իմ ժամանակը>> հրապարակախոսական հոդվածների և ուղեգրական ակնարկների ժողովածուն: Նրանում զետեղված են մի շարք հոդվածներ, որոնք փաստերով ու ազնիվ զայրույթով դատապարտում են աշխարհում առաջին ցեղասպանությունը, որը չդատապարտելու պատճառով ծնեց նոր ցեղասպանություններ: <<Ապրելու համար պետք է հիշենք>> հոդվածը կարծես գրված է այսօր՝ երիտթուրքերի կազմակերպած հրեշավոր եղեռնի 100-ամյակի օրերին: Իսկ հոդվածը

[1] Սիլվա Կապուտիկյան, Յոթ կայարաններ, Երևան, 1966, էջ 9:
[2] Նույն տեղում, էջ 411:

գրված է 1965-ին՝ եղեռնի 50-ամյակի առիթով, երբ խորհրդային կարգերը քարոզում էին բարեկամական ջերմություն ունենալ եղեռնը ցայսօր մերժող Թուրքիայի կառավարական այրերի նկատմամբ: Ես ուսանող էի և հիշում եմ, որ Սիլվա Կապուտիկյանը մի խումբ մտավորականների գլուխ անցած բողոքի ցույց էր ղեկավարում այն ժամանակվա Լենինի հրապարակում:

Կապուտիկյանը հոդվածը գրել է 1965-ի ապրիլին և իր ձեռքի տակ է ունեցել հսկայական փաստերով լեցուն վավերագրական աղբյուրներ, որոնք խոսուն ձևով մերկացնում են երիտթուրքերի կազմակերպած եղեռնը: Ահա այս սարսռազդու վկայություններից մեկը, որ մեջբերում է հոդվածում բանաստեղծուհին. <<Ես համոզված եմ, որ հայերի աքսորի և կոտորածների պատմությունը, որը համայն մարդկության կողմից հավիտյանս նզովքի դատապարտեց թուրքի անունը, իր նմանը չունի ցարդ նկարագրված անմարդկային արարքների որևէ տարեգրության մեջ: Թուրքիայի լայնածավալ տարածությունների որ անկյունն էլ նայելիս լինենք, ինչ մթին կիրճ էլ հետախուզենք, ամենուր կարելի է գտնել հայերի հազարավոր դիակներ ու կմախքներ՝ մորթված ու այլանդակված ամենադաժան եղանակներով>>[3]:

Հոդվածում բերվում են թուրքական պաշտոնյաների մի շարք սահմռկեցուցիչ հրամաններ, որոնց մեջ հատուկ դաժանությամբ աչքի են ընկնում ներքին գործոց նախարար Թալեաթի հրամանները: Ցեղասպանության ծրագիրը մշակողներից մեկն առաջարկում է. <<Ես բնաջնջումի դյուրին ձև եմ խորհում. հիմա պատերազմի մեջ ենք, հայերի զենք վերցնելու կարող երիտասարդները պատերազմի առաջին գիծը կուղարկենք, այնտեղ՝ դիմացից, իսկ ետևից՝ մեր կողմից հատուկ ուղարկված ուժերի կրակի մեջ կառնենք և կբնաջնջենք: Տանը մնացած հիվանդներին, ծերերին, կին ու երեխաներին էլ կիրամայենք, որ մեր հավատացյալները մաքրեն, ունեցվածքը կողոպտեն... Այս ձևը հարմար է նկատվում>>[4]:

Կապուտիկյանը շեշտում է, թե եղեռնը իրագործվեց քաղաքակիրթ աշխարհի աչքի առաջ, ու թեև եղան մարդասեր առաջադեմ գործիչներ ինչպես ֆրանսիացի Անատոլ Ֆրանսը, գերմանացի դոկտոր Լեփսիուսը, ԱՄՆ-ի դեսպան Մորգենթաուն և ուրիշներ, որոնք պահանջեցին միջամտել ու դադարեցնել հայերի սպանդը, սակայն եղեռնն իրագործվեց իր ողջ ծրագրով:

---

[3] Ս.Կապուտիկյան, Իմ ժամանակը, Երևան, 1979, էջ 31:

[4] Նույն տեղում, էջ 33:

Ապրիլի 24-ին հաջորդող երկու-երեք գիշերվա ընթացքում դեպի մահ քշվեցին Կոստանդնուպոլսում ապրող 600 մտավորականներ, որոնցից բանաստեղծուհին հիշատակում է հանճարեղ Կոմիտասին, առաջնակարգ գրողներ Վարուժանին, Սիամանթոյին, Զոհրապին ու Ռուբեն Սևակին:

Լինելով կենսահաստատ ու լավատես մտածող՝ բանաստեղծուհին կործանված Հայաստանին հակադրում է վերածնված Հայաստանն ու Սփյուռքը՝ նրանց աշխարհահռչակ հայորդիների անուններով հպարտ: <<Հայերն աշխարհի ժողովուրդներին ներկայացան ասպատակումին ու ավերածությանը հակադրելով իրենց ստեղծելու ոգին, աշխարհի ժողովուրդներին բերեցին սեր ու խաղաղություն հաստատելու իրենց ազնիվ ձգտումը, հակադրվեցին ցեղասպաններին Մարտիրոս Սարյանի կտավների ուժով ու արևով լցված գույներով, Արամ Խաչատրյանի սրերով պարի հաղթող հնչյուններով, Վիկտոր Համբարձումյանի հայտնաբերած աստղասփյուռի նորածին լույսով, Վիլյամ Սարոյանի՝ մարդու հանդեպ մանկան բարությամբ լցված տողերով, իրենց նորակերտ մայրաքաղաք Երևանի վարդագույն զվարթությամբ>>[5]:

Սիլվա Կապուտիկյանը քաղաքացի բանաստեղծ է, եթե նա իր քնարով ու հրապարակախոսությամբ շարունակ անվրեպ հարվածներ է տեղում թուրք ազգայնամոլների գլխին, որոնք ժխտում են հայերի ողբերգության կազմակերպիչ ու կատարող լինելու իրենց ստորագույն դերը, ապա դրա կողքին շարունակ թվարկվում է վերածնված Հայաստանի գիտական, բարոյական, մշակութային հաջողությունները: 1975-ին գրված <<Ապրելու ապրիլ>> հոդվածը նվիրված է հայ ժողովրդի նոր նվաճումներին: Հինավուրց 2000-ամյա Գառնիի հրաշակերտ տաճարի կողքին ունենք Գրիգոր Գուրզադյանի <<Օրիոն>> տիեզերանավային աստղադիտարանը, Մաշտոցի անվան Մատենադարանը, Ալ.Սպենդիարյանի անվան օպերային թատրոնը, Կոմիտասի պողոտան, Կիևյան նորակառույց փողոցը, Դանիել Վարուժանի դպրոցը, հայ ժողովրդի մեծ բարեկամ, Մոսկվայում տպագրված "Поэзия Армении" ժողովածուի հեղինակ Վալերի Բրյուսովի անվան ինստիտուտը, <<Հրազդան>> մարզադաշտը և նրա դիմաց Ծիծեռնակաբերդի եղեռնի հուշահամալիրը. <<...հավերժական կրակին խոնարհված սուգի սալաքարերն են ու կողքին՝ մեծ վշտից, հոգու օրհասական լարումից, դիմադրելու անխուսափելի ուժից այդպես անզսպորեն դուրս պոռթկացող երկշեղբ հուշասյունը, որը խորհրդանշում է մեր ժողովրդի կենսահաստատ էությունը, ապրելու

[5] Նույն տեղում, էջ 36:

կերպը, անհնարին պահերին՝ հնարը երկնելու բնազդական իմաստությունը>>[6]:

Հայտնի է, որ սփյուռքը սկսեց ձևավորվել արդեն արյունարբու Աբդուլ Համիդի կազմակերպած հայերի ջարդերից հետո, որոնք ընթացան 1895-96 թթ. և խլեցին 300.000 հայերի կյանքեր: Այն առավել մեծ չափերի հասավ 1915 թվականին և նրանից հետո մինչև 1923 թվական ձգվող ցեղասպանությունը, որի հետևանքով մահվան ճիրաններից փրկված հայերը ապաստան գտան երկիր մոլորակի ամենատարբեր անկյուններում:

Եվ այդ հայերի նոր սերնդին հայ էր պահում Սիլվա Կապուտիկյանի 1944-ին գրած <<Խոսք իմ որդուն>> ազգապահպան պատգամ-բանաստեղծությունը: Սփյուռքի հին ու նոր սերունդը առաջնորդվում էր այդ բանաստեղծությամբ, և որքան ոգևորիչ էր հայրենակարոտ հայերի համար, երբ աշխարհի տարբեր երկրներում նրանց այցի էր գալիս սիրելի բանաստեղծուհին: Այդ այցելությունների արդյունքում ծնվեցին Սիլվա Կապուտիկյանի երեք ծավալուն ուղեգրությունները՝ <<Քարավանները դեռ քայլում են>> (1964), <<Խճանկար հոգու և քարտեզի գույներից>> (1976), <<Իմ կածանը աշխարհի ճանապարհներին>> (2002):

Հատկապես այս ուղեգրություններից առաջինը դարձավ հիանալի կապող օղակ մայր Հայաստանի ու սփյուռքի միջև: Խորհրդային Միության <<երկաթյա վարագույրը>> բացվել էր, և բոլորն իմացան, թե ինչպես են ապրում մեր արյունակիցները օտար ափերին: Գիրքը ձեռքից ձեռք էր խլվում, դրա մասին խոսում էին բոլորը, ստեղծվել էր յուրահատուկ մի կապ վաղուց կորցրած հայրենիքի վտարանդի զավակների և նրա մի մասում՝ իր հողի վրա, հարատևող ու զարգացող փոքրիկ, բայց շենացած Հայաստանի միջև: <<Քարավանները դեռ քայլում են>> գիրքը ուներ բացառիկ ազգապահպան առաքելություն, որի իրականացնողն իր հայրենիքի վշտերով և ուրախություններով ապրող Սիլվա Կապուտիկյանն էր:

Սիլվա Կապուտիկյանը և հայերի ցեղասպանության դատապարտումը կարող է դառնալ շատ ծավալուն գիտահետազոտական նյութ, ես անդրադառնում եմ նրա մի քանի կարևոր խնդիրներին միայն:

Սիլվա Կապուտիկյանի ժամանակակից նույնպես առաջնակարգ բանաստեղծ Վահագն Դավթյանը, որը ևս բանաստեղծուհու նման եղեռն վերապրածի զավակն էր. <<Յոթ կայարաններ>> գրքի վերջում դրված ջերմ խոսքում ունի այսպիսի դիպուկ նկատում.<<Այո՛, իսկական բանաստեղծի կենսագրությունն իր իսկ գործերում որոնելն ու գտնելը դժվար չէ, քանի որ

[6] Նույն տեղում, էջ 59:

ճշմարիտ պոեզիան հեղինակի կյանքի ու հոգու քնարական պատմությունն է հենց>>[7]:

Վ.Դավթյանը հիացած է հատկապես բանաստեղծուհու <<Մտորումներ ճանապարհի կեսին>> <<Փոքրիկ հիանալի պոեմով>>, որում պատկերված է ոչ միայն հայ ժողովրդի դարավոր տառապանքն ու կսկիծը, այլև բարձր հումանիզմը:

Այս, իհրավի, արդար ցասումով լի պոեմն որպես բնաբան ունի Սիամանթոյի հավերժորեն հիշելի հետևյալ խոսքը.

Ով մարդկային արդարություն,
թող ես թքնեմ քո ճակատին[8]:

Այս պոեմում բանաստեղծուհին պատգամում է եկող բոլոր սերունդներին՝ չմոռանալ հայոց ցեղասպանությունը, սակայն ձգտել ազգովին հասնելու նորանոր բարձունքների ու նվաճումների.

Դու պիտի վրեժ առնես ապրելո՛վ,
Ապրելով համա՛ռ, հազարապատիկ.
Ավերումի դեմ՝ քո ստեղծելո՛վ,
Ավեր Վանի դեմ՝ քո Երևանով[9]:

Սիլվա Կապուտիկյանի ծննդյան 95-ամյակի առիթով բանաստեղծուհու տուն-թանգարանի տնօրեն Ռաֆլետա Հաջյանն ու աշխատակցուհի Արմինե Դեմիրճյանը հրատարակեցին <<Սիլվա Կապուտիկյան>> պատկերազարդ ալբոմ-գիրքը, որը ներկայացնում է բանաստեղծուհու կյանքի կարևոր դրվագները, նրա որոշ ստեղծագործություններ, նրան նվիրված գնահատանքի խոսքեր: Այս ամենի մեջ խիստ որոշակի տեսնում ենք Սիլվա Կապուտիկյան գրողին, հրապարակախոսին, քաղաքական գործչին և հայրենասեր հայ կնոջը:

Այդ ջերմ խոսքերն ասել են ոչ միայն բանաստեղծուհու ժամանակակից հայոց մեծերը, այլև օտարները, հատկապես Հայաստանի բարեկամները, որոնց առ Հայաստան ունեցած ջերմության հիմքը հենց Սիլվա Կապուտիկյանն էր: Բերենք այդ կարծիքներից մի քանի օրինակներ: XX դարի նշանավոր բանաստեղծներից մեկը՝ Էդուարդաս Մեժելայտիսը, գրում է. <<Սիլվայի հոգու և քարտեզի միջօրեականներ>> գիրքը խորապես ցնցեց ինձ և միաժամանակ հիացրեց իր թարմությամբ... Այդպիսի գիրք

---

[7] Ս.Կապուտիկյան, Յոթ կայարաններ, էջ 538:

[8] Նույն տեղում, էջ 485:

[9] Նույն տեղում, էջ 490:

գրելու համար պետք է դժվար, դրամատիկ կյանք ապրես և նրա բոլոր իրադարձություններն անցկացնես սրտիդ միջով>>[10]:

Ռուս նշանավոր բանաստեղծ Միխայիլ Դուդինը համոզված է. <<Սիլվա Կապուտիկյանի ճանապարհը լեռան գագաթ տանող ճանապարհ է, որ նա քայլ առ քայլ բացել է իր ջանքերով>>[11]:

Ակադեմիկոս Էդվարդ Ջրբաշյանը բանաստեղծուհու կեսդարյա գրական ուղու ամեն մի էջում տեսնում է հասարակական և ազգային մեծ մտահոգություններով տրոփող սիրտը, ակտիվ նախանձախնդրությունը մարդու և երկրի ապագայի հանդեպ[12]: Իսկ ակադեմիկոս Լենդրուշ Խուրշուդյանը հատուկ նշում է Կապուտիկյանի բնավորության մի գիծը, որը հատուկ է քչերին.<<...Սիլվային տեսել եմ և՛ հաղթանակի պահերին, և՛ պարտության: Ես խոնարհվում եմ նրա առջև: Խոնարհվում եմ նրա համար, որ Սիլվան պարտությունը տանում էր այնպես, ինչպես հաղթանակը>>[13]:

Սիլվա Կապուտիկյանի կյանքի վերջին տարիները սերտորեն շաղկապվեցին Արցախյան շարժման հետ, որը նրա համար դարձավ հայերի երկար տառապանքներից դուրս գալու ազատատենչ ու արդար ոգու ըմբոստացման կիզակետը: Նա անվեհեր ձևով կանգնեց Արցախի ժողովրդի կողքին:

Ուզում եմ այս խիստ համառոտ բնութագրումներս ավարտել ամերիկյան <<Նյու Յորքեր>> նշանավոր ամսագրի թղթակցի այն բնորոշմամբ, որ նրան տվել էր ամերիկյան լրագրողը: Նա եղել էր Մոսկվայում 1991-ի գարնանը, հանդիպել ԽՍՀՄ-ի առաջին դեմքին՝ Մ.Գորբաչովին, Ադրբեջանում՝ Մութալիբովին, Հայաստանում՝ Լևոն Տեր-Պետրոսյանին, հայ և ադրբեջանցի հասարակ մարդկանց ու մտավորականների: Եվ <<Նյու Յորքերի>> 1991 թվականի ապրիլյան համարում տպագրել հոդված <<Լեռնային Ղարաբար>> խորագրով, որն ուներ ենթավերնագիր <<Արմատներ>>: Ամերիկյան լրագրողը հանդիպել էր նաև Սիլվա Կապուտիկյանին ու նրա բացատրությունը հայ-ադրբեջանական կոնֆլիկտի մասին համարում էր միակ ճշգրիտն ու սպառիչը: Նա հոդվածը շարադրել էր՝ խորապես հավատալով հայ բանաստեղծուհուն:

---

10 Սիլվա Կապուտիկյան, Երևան, 2014, էջ 216:

11 Նույն տեղում, էջ 217:

12 Նույն տեղում, էջ 152:

13 Նույն տեղում, էջ 162:

Սա երևի այն ճշգրիտ գնահատականն է, որ օտարը տվել է մեծ ու իմաստուն հայուհուն, և այն երբեք չպետք է մոռանանք ոչ մենք և ոչ էլ հետագա սերունդները:

Ա. Դոլուխանյան

**Սիլվա Կապուտիկյանը հայոց ցեղասպանության երդվյալ դատապարտող**

**Ամփոփում**

Գրականագետները Սիլվա Կապուտիկյանի ստեղծագործության մեջ առանձնացնում են հայրենասիրական մոտիվը: Հենց առաջին գործերով բանաստեղծուհին հպարտանում է իր ազգությամբ և նրա համար մեծագույն ցավ է 1915 թվականի երիտթուրքերի կազմակերպած հայոց ցեղասպանությունը: Այդ ազգակործան երևույթի դեմ բանաստեղծուհին բարձրացնում է իր բողոքի ձայնը թե բանաստեղծություններում, թե հրապարակախոսության և թե ուղեգրությունների մեջ:

Նրա բողոքը ազդու է այսօր և այդպիսին կլինի դարեր անց:

А.Долуханян

**Сильва Капутикян заклятый обвинитель армянского геноцида**

**Резюме**

Литературоведы в произведениях Сильвы Капутикян выделяют мотив патриотизма. Начиная с первых литературных шагов поэтесса заявляет преданность своей Родине. Для нее большой трагедией был геноцид армян 1915 года организованный младотурками.

О национальной трагедии поэтесса выступила с гневным протестом в стихотворениях, и в публицистике, и в путевых записках.

Ее протест волнует по сей день и таким будет в течении веков.

A. Dolukhanyan

**Silva Kapoutikyan as a Sworn Denouncer of the Armenian Genocide**

**Summary**

In Silva Kapoutikyan's works literary critics single out the patriotic motive. The poetess is proud of her nationality in her very first works and the Armenian Genocide implemented by the Young Turks in 1915 is a great pain to her. The poetess raises her voice of protest against that disastrous phenomenon in her poems, publicism and travelling notes.

Her appeal is powerful and will be so for many centuries later.

ԵՎԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ
Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ մայրենիի և նրա
դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ,
Բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՏԴ 821.19.0

# ԺԱՄԱՆԱԿԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՄԱՍԻՆ

**Բանալի բառեր և արտահայտություններ**. Հ. Թումանյան, գրաքննադատություն, բնագիր, թարգմանական արվեստ, լեզվամտածողություն, բնագրի ոգու ըմբռնում, կենսահայեցության բացահայտում:

**Ключевые слова и выражения**. О. Туманян, критика, подлинник, переводческое исскуство, языковое мышление, восприятие духа подлинника, выявление понимания жизни.

**Key words and expressions:** H. Toumanyan, literary criticism, original, translation art, linguistic thinking, understanding the soul of the original, reveling of life views.

Հայտնի է, որ Հովհ. Թումանյանը ստեղծագործական կյանքի բոլոր փուլերում ոչ միայն անդրադարձել է գեղարվեստական երկի թարգմանության հարցերին՝ առաջադրելով տեսական և գործնական մի շարք արժեքավոր դրույթներ, այլև կատարել է մոտ 80 արձակ և չափածո ստեղծագործությունների թարգմանություններ[1], որոնք աչքի են ընկել թե՛ իրենց «աշխարհագրությամբ», թե՛ ժանրային ու թեմատիկ բազմազանությամբ[2]: Թարգմանությունը բանաստեղծի համար չի եղել երկրորդական զբաղմունք. նա միանգամայն լուրջ և խիստ է վերաբերվել այդ գործին՝ համարելով այն տաղանդի և շնորհիքի գործ. «Լավ թարգմանությունը համարժեք է ինքնուրույն ստեղծագործության»[3]: Թումանյանը խիստ կարևորել է ժողովուրդների շփման և մերձեցման

[1] Մեզ հասած ամենավաղ կատարված թարգմանությունը Մ. Լերմոնտովի «Իղձ» բանաստեղծության փոխադրությունն է (1889), իսկ ամենավերջինը՝ Խաքանիի վեց քառյակները (1922):

[2] Հ. Թումանյանի թարգմանական աշխատանքի հիմնական սկզբունքների, մեթոդի մասին արժեքավոր դիտարկումներ է արել Էդ. Ջրբաշյանը: Տե՛ս «Թումանյանի գրական ժառանգությունը», Երևան, 2000, էջ 109-123:

[3] Ն. Թումանյան, Հովհաննես Թումանյանը և ռուս գրականությունը, Երևան, 1956, էջ 122:

այսօրինակ ուղին և իր բանաստեղծությունների բոլոր ժողովածուներում մեծ կամ փոքր չափով մշտապես տեղ է հատկացրել թարգմանություններին, որոնք էլ աննկատ չեն մնացել ժամանակի գրաքննադատական մտքի ուշադրությունից:

Այսպես, 1896 թ. առանձին գրքույկով հրատարակվում են Բայրոնի «Շիլիոնի կալանավորը» և Լերմոնտովի «Մծիրին»: Նույն թվին «Տարազի» հմ. 6-ում տպագրվում է Շիրվանզադեի գրախոսականը «Շիլիոնի կալանավորի» մասին: Հոդվածի սկզբում գրախոսը հաստատապես նշում է, որ Թումանյանը ի զորու է «բարձր բանաստեղծություններ թարգմանելու», սակայն խորհուրդ է տալիս երբեք չստանձնել այնպիսի երկերի թարգմանություններ, որոնց բնագրի լեզվին ծանոթ չէ: Անշուշտ, Բայրոնի հայերեն թարգմանությունը Շիրվանզադեն ցանկալի է համարում, սակայն նախընտրում է այն կատարված տեսնել մի անգլիագետ հայի ձեռքով, որը, իհարկե, ունենա նաև բանաստեղծական ձիրք: «Բայց քանի որ այդ չկա,- եզրակացնում է Շիրվանզադեն,- մնում է մեզ գոհ լինել Հովի. Թումանյանցի ներկա թարգմանությամբ: Ընդհանրապես վերցրած՝ այդ թարգմանությունը մեզ շատ հաջող է թվում ոտանավորների սահունության և թեթևության կողմից, եթե ուշադրություն չդարձնենք մի քանի մասնավոր թերությունների վրա»[4]:

Հետաքրքրական է, որ «Շիլիոնի կալանավորը» պոեմին բանաստեղծը կրկին անդրադառնում է «Բանաստեղծությունների» 3-րդ ժողովածուն կազմելիս: Այս անգամ Թումանյանը դիմում է անգլերենի լավ գիտակ Մ. Տեր-Անդրեասյանին՝ խնդրելով իր թարգմանությունը համեմատել բնագրի հետ և մատնանշել թերությունները: 1903 թ. մայիսի 9-ի նամակում Մ. Տեր-Անդրեասյանն արտահայտում իր անթաքույց զարմացախառն հիացմունքը. ««Շիլիոնդ» համեմատեցի բնագրի հետ: Ուղղակի զարմանալի է, թե ինչպե՞ս է հաջողվել քեզ անգլերեն չիմանալով մի այդպիսի հոյակապ թարգմանություն տալ մեզ: Համարյա բառացի... սակայն առանց խորթությունների, կանոնավոր հայերեն լեզվով, այնքան տողը բառացի, մոտիկ բնագրին, որ նույնիսկ կարճ ու երկարությունը, նույնիսկ հանգերը շատ տեղ նույն բառերիցն են»[5]: Նամակագիրը «Շիլիոնի» առանձին գլուխներին տալիս է իր գնահատականը, անում որոշակի դիտողություններ և առաջարկություններ՝ թերությունները շտկելու համար: Նամակի վերջում, ըստ երևույթին, պատասխանելով բանաստեղծի

---

[4] Տարազ, հմ. 16, Թիֆլիս, 1896, էջ 257:

[5] Թումանյան, Ուսումնասիրություններ և հրապարակումներ, հտ. 5, Երևան, 1998, էջ 291:

երկընտրանքին՝ ներառե՞լ թարգմանությունը 3-րդ ժողովածուի մեջ, Տեր-Անդրեասյանը համոզված գրում է. «Միայն մի բան պիտի ասեմ, որ դու իրավունք չունես զրկել հասարակությանը մի այդպիսի գլուխգործոցի չքնաղ թարգմանությունից: Եթե ռուսերեն անկատար, անճիշտ թարգմանությունը դասագրքերի սեփականությունն է դարձել, դու ո՛չ մի իրավունք չունես դեն գցել և մեր աղքատիկ գրականությունը **կողոպտել**»[6]:

«Մծիրիի» թարգմանությունը նույնպես արժանանում է ուշադրության. 1896 թ. «Մուրճի» հմ. 5-ում լույս է տեսնում Հար. Թումանյանի գրախոսականը «Մծիրիի» երկու թարգմանությունների վերաբերյալ: Բնագիրը համադրելով Հ. Տեր-Գևորգյանի և Հ. Թումանյանի թարգմանություններին՝ գրախոսը փորձում է համեմատել ու գնահատել դրանք: Առաջին հայացքից նկատելի է՝ հոդվածագիրը կառչում է բառերի բառարանային նշանակությունից և այս տեսանկյունից երբեմն-երբեմն «հանդիմանում» Թումանյանին այլ բառերի գործածության հարցում: Իբրև թերություն Հար. Թումանյանը նշում է նաև պոեմի տաղաչափությունը. ըստ նրա՝ թարգմանության ներքին ռիթմը խախտում է ոչ միատեսակ վանկերի քանակը. ի տարբերություն Տեր-Գևորգյանի, որ իր նյութը շարադրում է 10-վանկանի տողերով, Թումանյանը միևնույն գլխում 10-ից անցնում է 8-վանկանի տողերի՝ դրանով խաթարելով պոեմի ներդաշնակությունը: Գրախոսը զամանալիորեն իբրև թերություն է դիտում քերականական որոշ կառույցներ ևս՝ նախընտրելով հատկացուցչի նախադաս կիրառությունները, և ընդամենը մեկ-երկու բառի դեպքում գոհացուցիչ համարում Թումանյանի թարգմանությունը: Գրախոսության վերջում Հար. Թումանյանը եզրակացնում է. «...Տեր-Գևորգյանի «Մծիրին» կարդացվում է մեծ ախորժանքով և կարելի է համարել հարազատ թարգմանություն թե՛ մտքի և թե՛ ոճի կողմից... Դրա հակառակն է Թումանյանցի «Մծիրին», որը բացի շատ բազմաթիվ սխալներից, չունի Լերմոնտովի գերազանց պոեմայի ոգին, այնպես որ ոչ մի սրբագրությամբ չի կարելի ուղղել: Հովհ. Թումանյանցին ճանաչում էինք իբր հեղինակ հաջողակ ինքնուրույն ոտանավորների՝ մանավանդ գյուղական կյանքից, բայց նա իր «Մծիրի»-ով ու «Շիլիոնի կալանավոր»-ով ապացույցներ է տալիս, որ Լերմոնտովներն ու Բայրոնները նրան մատչելի չեն»[7]:

Անշուշտ, զարմանալի և վիճարկելի է այս կարծիքը, սակայն մենք ձեռնպահ ենք մնում, քանի որ հիշատակված թարգմանությունների մասին հետագայում գրեթե միշտ հնչում են արժևորման բարձր խոսքեր: Այսպես,

[6] Նույն տեղում, էջ 295:

[7] Մուրճ, հմ. 5, մայիս, Թիֆլիս, 1896, էջ 652:

1910 թ. «Հանդես ամսօրյայի» հմ. 1-ում տպագրված մեծածավալ հոդվածում Գր. Բալասանյանը, հիմնական ուշադրությունը բևեռելով Թումանյանի ինքնուրույն գործերին և հարևանցի հայացք նետելով թարգմանություններին, գրում է. «Թարգմանության մեջ էլ տաղանդավոր է երևում: Տեղ-տեղ միայն կան բնագրից աննշան շեղումներ»[8]:

Ժամանակի հայտնի գրաքննադատներից Ա. Տերտերյանը, իր «Հայրենի եզերքի քնարերգուն» գրքում քննելով Թումանյանի ստեղծագործական ուղիներն ու բանաստեղծական աշխարհի նրբերանգները, կենսական խնդիրների շրջանակները, հոգեկան ապրումներն ու հակասությունները, անդրադառնում է նաև վերը հիշված երկու ստեղծագործությունների թարգմանություններին: Ըստ գրախոսի՝ Թումանյանի բանաստեղծություններից յուրաքանչյուրը ստեղծվում է իրական ապրումների հզոր շեշտով՝ դառնալով մի «խորհրդանշան, որի տակ գալիս միանում են»[9] ընթերցողի ներքին ապրումները: Հայրենի եզերքից կտրված բանաստեղծը, հայտնվելով այլ միջավայրում, հոգեպես տառապում է, որոնում կորցրածը, ապրում վաղեմի հիշողություններով, զգում իրեն «բանտարկյալ էակ»: Հոգեբանական նույնատիպ զգացողությունն է ունենում Բայրոնի «Շիլիոնի կալանավորի» հերոսը: «Շատ քիչ հայ բանաստեղծների է հաջողվում թարգմանել օտար գրականությունից այնպիսի երգեր, որոնք հարազատ լինեին նրանց ստեղծագործությանը, այսինքն՝ թարգմանական տողերը նրանց գրչի տակից դուրս ելնեին իբրև ինքնուրույն, ինքնաբուխ և սեփական ստեղծագործություն: Հովհաննես Թումանյանը պատկանում է այդ բախտավորների թվին: Այն բոլոր թարգմանությունները, որ նա արել է, մի զարմանալի զուգադիպությամբ թարգման են հանդիսանում նրա զգացումներին ու հույզերին»[10]:

Նմանատիպ կարծիք է հայտնում Մ. Ավետիսյանը՝ անդրադառնալով Թումանյանի՝ «Լեզուն կտրած ծիտիկը» ճապոնական հեքիաթի թարգմանությանը. «Թեև գրվածքը թարգմանություն է անվանված, բայց պատմելու ձևը, լեզուն այնչափ յուրահատուկ, մաքուր հայերեն է, որ դժվար է տարբերել մեծ բանաստեղծի ինքնուրույն գրվածքներից»[11]: Փաստորեն, նրա խոսքի ներգործուն ուժը արտահայտվում էր ոչ միայն իր ստեղծագործություններում, այլև թարգմանություններում:

---

[8] «Հանդես ամսօրյա», հմ. 1, Վիեննա, 1910, էջ 72:

[9] Ա. Տերտերյան, Հայրենի եզերքի քնարերգուն, Վաղարշապատ, 1911, էջ 6:

[10] Նույն տեղում, էջ 8:

[11] «Հորիզոն», հմ. 163, Թիֆլիս, 1911:

Թումանյանը, սակայն, անչափ բծախնդիր մոտեցում է ցուցաբերում բուն թարգմանական արվեստին: Առհասարակ նա ստեղծագործությունները գնահատելու և թարգմանելու իր ուրույն մոտեցումն ուներ: Ըստ բանաստեղծի՝ թարգմանչի հիմնական նպատակը բնագիրը հարազատորեն վերարտադրելն է: Սակայն անպայման պետք է նկատի ունենալ մի կարևոր հանգամանք, այն է՝ թարգմանված ստեղծագործությունը այլ լեզվի համարժեք միավորներով չի կարող պահպանել ոգու կախարդիչ ինքնությունը, բանաստեղծական ներքին ոգեղեն թռիչքն ու հմայքը: Թարգմանված գործը ձեռք է բերում տվյալ լեզվի՝ քերականության առանձնահատկություններին և իմաստներին բնորոշ նոր երանգներ: Տարբեր են բանաստեղծի և թարգմանչի անհատականությունները: Ըստ Թումանյանի՝ թարգմանության համար անհրաժեշտ է, որ տվյալ ազգի գիտական և գեղարվեստական մտածողությունը համապատասխանի թարգմանվելիք նյութի իմաստին, ներքին էությանը, հոգեբանությանը:

Գրողներին նա խորհուրդ էր տալիս ուշադրությունը բևեռել նյութի էությանը՝ նախ ըմբռնելով դրա իմաստը, տուրք չտալ արտաքին տեսքին, բառախաղ չանել: Փ. Վարդազարյանին գրած նամակներից մեկում, անդրադառնալով ֆրանսիական գրականությունից վերջինիս կատարած մի թարգմանությանը, Թումանյանը նշում է. «...Ֆրանսերենից արած թարգմանությունդ էլ ինձ չհրապուրեց. մեղկություն է շնչում... Հիվանդական երևույթ է և այժմյան գեղարվեստը բնորոշող: Ինձ էլ դյուր չեն գալիս դրանք: Ննջարանի հոտ է գալիս: Չգիտեմ՝ ո՞ւմ խոսքերն են, այստեղ միտս եկան,- ասում է.- Ջարդեցե՛ք պատուհանները, այդ ծանր օդից դուրս եկեք մաքուր օդը, պարզ երկնքի տակ...»[12]: Թե՛ ինքնուրույն ստեղծագործություն գրելիս, թե՛ թարգմանություններ ու փոխադրություններ անելիս նա առաջնորդվում է այս սկզբունքով. արհեստականությունը ու կաղապարային մտածողությունը խորթ է բանաստեղծի հոգուն և գրչին: Նրա բոլոր երկերը պարզ են, բայց ոչ պարզունակ, մատչելի են, բայց ունեն անհուն խորություն: Պատահական չէ «Նոր հոսանքում» տպագրված գրախոսականը, որի հեղինակը՝ Ցոլակ Խանզադյանը, Թումանյանի ամեն մի նոր գրվածքը համարում է «գյուտ» «մեր սակավահյութ գրականության համար»[13]:

Գրաքննադատն անդրադառնում է նաև Թումանյանի՝ ռուսական բիլինաներից մի հատվածի՝ «Սվետագորի» թարգմանությանը: Բանաստեղծի նախկին փորձերը ևս հաջող համարելով՝ գրախոսն այն համարում է «մեծ բան», «եթե ի նկատի ունենանք գործի աներևակայելի

---

[12] Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, 5-րդ հատոր, Երևան, 1945, էջ 204-205:
[13] «Բաքվի ձայն», հմ.10, Բաքու, 1914:

դժվարությունները: «Սվետագորը» նույնպես խիստ հետաքրքրական փորձ է, որի գրական հետևանքը մեր առաջն է»[14]:

Ռուս գրականությունից կատարած թարգմանությունները բարձր է գնահատել Վ. Բրյուսովը: Վերջինս բանաստեղծին և թարգմանչին հատուկ խորատեսությամբ գրում է. «...Մեզ հիացնում է բանաստեղծի զարմանալի ներթափանցումը բնագրի ոգու մեջ, թարգմանելիք երկի ամենաէականը, կարևորը հասկանալու նրա կարողությունը»[15]: Իրապես, Թումանյանը զարմանալի վարպետությամբ է զգում թարգմանվելիք նյութի թե՛ արտաքին, թե՛ ներքին շերտերը, նրա գրչի տակ հանճարեղորեն միահյուսվում և բացվում է տարբեր ժողովուրդների ոգուն ու լեզվամտածողությանը հարազատ կենսահայեցությունը: «Մենք երբեք չենք մոռանում,- գրում է Մ. Ջանփոլադյանը,- որ կարդում ենք հենց ռուսական բիլինա, հենց սերբական վիպերգ: Բայց և այնպես այդ բիլինաներն ու վիպերգերը *Թումանյանի թարգմանություններն են* (Մ. Ջ.): Նրա ստեղծագործությանը շատ թե քիչ ծանոթ ընթերցողը դա զգում է անմիջապես»[16]:

Թումանյանի ստեղծագործությունների մասին գրված գրախոսականներում ընդհանուր առմամբ նկատելի է մի ընդհանուր միտում. ամենախիստ քննադատական հոդվածներում անգամ եթե նրա հեղինակային որոշ գործերի մասին արվում էին դիտողություններ, ապա թարգմանական արվեստի մասին հնչած կարծիքները համարյա միատեղվում էին այն գնահատականի շուրջ, որ Թումանյանին մեծապես հաջողվում է թարգմանությունները[17] բարձր արվեստով ներկայացնելը: Այսպես, 1904 թ. «Տարազի» հմ. 7-ում Ս. Մանդինյանը տպագրում է բանաստեղծությունների 3-րդ ժողովածուին վերաբերող գրախոսական: Բարձր գնահատելով հանդերձ հեղինակին՝ Մանդինյանը որոշ դիտողություններ է անում «Սասունցի Դավիթ» պոեմի մշակման վերաբերյալ: «Իր ադամանդները... ոսկի շրջանակի մեջ» լավ

---

[14] Նույն տեղում:

[15] ,,Поэзия Армении'', Москва, 1916, ст. 79:

[16] Մ. Ջանփոլադյան, Թումանյանը և ժողովրդական էպոսը, Երևան, 1969, էջ 84-85:

[17] Վ. Փափազյանը «Պատմություն հայոց գրականության. սկզբից մինչև մեր օրերը» գրքում, խոսելով Թումանյանի արվեստի մասին, թարգմանությունների վերաբերյալ գրում է. «Թարգմանությունների մեջ հաջողվածներն ու նշանավորներն են Լերմոնտովի «Մծիրի պոեման, Ժուկովսկու «Աքիլլես», Լոնգֆելլոյի համաշխարհային հռչակ ստացած և թարգմանության համար դժվար՝ «Հայավաթի երգը» պոեմայից մի կտոր (նախերգանքը), Բայրոնի «Շիլիոնի կալանավորը»... բոլորն էլ հաջող կատարված և անպաճույճ, բայց հարազատ հայերենով (Թիֆլիս, 1910, էջ 563):

համարեցնելու համար գրախոսը Թումանյանին խորհուրդ է տալիս հոգալ «իր զարգացման մասին» և բարձր արժևորելով նրա թարգմանությունները՝ առաջարկում է շարունակել այդ գործը. դա Պառնաս հասնելու այն ճանապարհն է, որով բարձրացել են Շիլլերը, Գյոթեն: «Նա արդեն շատ ընտիր թարգմանություններ է ընծայել,- գրում է Մանդինյանը,- և ուրեմն այդ ճանապարհը բանուկ է նորա համար: Նորա թարգմանած Պուշկինի «Ջրահեղձը» և «Օլեգի երգը», Բայրոնի «Շիլիոնի կալանավորը», Լերմոնտովի «Մծիրին» անշուշտ մեր աղքատ գրականության պատվական գոհարներ են»[18]:

Նույն ժողովածուի մասին մեծածավալ գրախոսականում Գ. Ենգիբարյանը Թումանյանին համարում «շնորհալի» և «ապագա ունեցող» բանաստեղծ, որի մի քանի թարգմանություններն անգամ բավարար են՝ նրա տաղանդը ապացուցելու: «Պուշկինից թարգմանած նրա «Օլեգի երգը», «Ջրահեղձը», «Եթե իրավ է» ոտանավորները, Կալցովից՝ «Գեղջուկի մտորմունքը», Բայրընի «Շիլիոնի կալանավորը» և Լերմոնտովի «Մծիրի» երգը այնքան բանաստեղծորեն փոխադրած են, այնքան սահուն և գեղեցիկ ոճով, որ հենց այս աշխատությունների համար Թումանյանը արժանի է արդար գնահատության... Եթե վիճակված է մեզ մի օր ազգային գրականությամբ կրթելու հայ սերունդներ՝ Թումանյանը պատվավոր տեղ կունենա մեր նորագույն գրականության մեջ[19]»,- եզրակացնում է Ենգիբարյանը:

Նկատենք՝ թարգմանվող ստեղծագործությունների ընտրությունը ուղղակիորեն բխում է Թումանյան բանաստեղծի, քաղաքացու, մարդու գեղագիտական հայացքներից, մտածողությունից, հոգեբանությունից, ուստի պատահական չէ, որ գրեթե բոլոր թարգմանություններն ու փոխադրությունները կրում են նրա անհատական շունչը, հույզերի դրոշմը: Սակայն, ինչպես նկատում է Էդ. Ջրբաշյանը, Թումանյանը «երբեք չի ձգտել բնագրի իմաստը փոխել՝ իր անձնական վերաբերմունքն ու ըմբռնումները արտահայտելու համար»[20]: Թումանյանը հայտնի և անհայտ հեղինակների գործերից ընտրում էր լավագույնները՝ առաջնորդվելով ընթերցող հայ հասարակությանը ինչ-որ արժեքավոր ու նվիրական բան փոխանցելու մղումով: Օրինակ՝ Գրիմ եղբայրների հեքիաթները թարգմանելիս մեծ զգուշություն է ցուցաբերել. եթե որևէ բառի վերաբերյալ կասկածներ է ունեցել, ապա դիմել է գերմաներեն իմացող մեկին՝ բնագրի հետ

[18] «Տարազ», հմ. 7, Թիֆլիս, 1904, էջ 49:
[19] «Լումա», հմ. 2, Թիֆլիս, 1904, էջ 229-230:
[20] Էդ. Ջրբաշյան, Թումանյանի գրական ժառանգությունը, Երևան, 2000, էջ 119:

համեմատելու համար: 1913 թ. նոյեմբերի 16-ի նամակում Թումանյանը Ար. Զարզարյանին գրում է. «Ես ամբողջը չեմ թարգմանիլ: Կթարգմանեմ միայն էն հեքիաթները, որ ես հավանում եմ կամ կարևոր եմ համարում»[21]: Նրա կարծիքով՝ «Գրիմները հազիվ մի քանի հեքիաթ ունեն մշակած: Մնացածը ժողովրդական հեքիաթներ են, խառնած, աղավաղած ու փչացրած»[22]:

Այսպիսով՝ Թումանյանի հանճարեղ թարգմանությունները, որ ընդհանուր առմամբ բարձր են գնահատվել ժամանակի գրաքննադատության կողմից, այսօր համարվում են հայ թարգմանական գրականության անփոխարինելի գոհարներ:

**Ե. Մնացականյան**

**Ժամանակի քննադատությունը Թումանյանի թարգմանական արվեստի մասին**

**Ամփոփում**

Հոդվածը ներկայացնում է ժամանակի գրաքննադատության՝ Հ. Թումանյանի թարգմանություններին տված արժևորումներն ու գնահատությունները, ընդգծում քննություն անցած տեսակետներն ու բացահայտումները, որոնք ոչ միայն պարզաբանում են թումանյանական թարգմանությունների տեղն ու դերը հայ գրականության մեջ, այլև այդ համապատկերում նախանշում ժամանակի գրաքննադատական մտքի՝ թարգմանական արվեստի գնահատման չափանիշներն ու սկզբունքները: Թարգմանությունների վերաբերյալ հնչած կարծիքներն ընդհանուր առմամբ ընդգծում են Թումանյանի զարմանալի ներթափանցումը բնագրի ոգու մեջ, թարգմանելիք նյութի էականը, կարևորը հասկանալու վարպետ կարողությունը:

**Е. Мнацаканян**

**Критика времени о переводческом исскустве Туманяна**

**Резюме**

В статье представляются оценки и ценности, данные переводам О. Туманяна критикой того времени, подчеркивают прошедшие экзамен точки зрения и выявления, которые не только проясняют место и роль туманянских переводов в армянской литературе, но и в данном контексте предначертывают стандарты и принципы оценивания переводческого искусства, критической мысли того времени. Прозвученные мнения о переводах в общем смысле подчеркывают удевительное внедрение Туманяна в дух подлинника, мастерское уменье понимать важное, значительное в переводимом материале.

---

[21] Հ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հտ. 10, Երևան, 1999, էջ 193:
[22] Նույն տեղում:

**E. Mnatsakanyan**

**The Critisizm of the Time About the Art of Toumanyan's Translations**

**Summary**

The article represents the appraisals given to Toumanyan's translations by the criticism of the time, highlights the scrutinized views and findings which not only explain the place and role that Toumanyan's translations have, but also the criteria and principles of criticism of the time used to assess the art of translation. The opinions generally stress the unique ability of Toumanyan to immerse into the soul of the original and the mastery to understand the essential and the vital in the materials to be translated.

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՇԱՐՈՒՐՅԱՆ
Բան. գիտ. թեկնածու, ԵՊՀ դոցենտ

ՀՏԴ 82.09:159.963

# ԵՐԱԶԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՄ

**Բանալի բառեր.** Երազ, գործառույթ, կերպար, խորհրդանիշ, Հիսուս, կանխագուշակում, դիպաշար, հոգի, Ն. Կազանձակիս, Է. Բերջես, Պ. Լագերկվիստ, Ժ. Սարամագո:

**Ключевые слова:** сон, функция, литературный образ, символ, Иисус, предвидение, сюжет, душа, Н. Казандзакис, Э. Берджес, П. Лагерквист, Ж. Сарамаго.

**Key words**. dream, function, character, symbol, Jesus, prediction, plot, N. Kazandsakis, A. Burgess, P. Lagerquist, J. Saramago.

Հայտնի է, որ գրական ցանկացած ստեղծագործության առաջնահերթ խնդիրը գեղեցիկի արարումն է, իսկ այն, անտարակույս, անթեղված է մարդկային հոգում: Վերջինս էլ իրեն բնորոշ առեղծվածներն արտահայտող միջոցների շարքում կիրառում է երազները, որոնք, որպես կանոն, լի են խորհրդանիշներով: ՙԵրազը դեպի հոգու գաղտնարանն ուղեկցող դուռ է՚,- իրավացիորեն նկատել է ժամանակի ականավոր հոգեբաններից մեկը՝ շվեյցարացի Կարլ Գուստավ Յունգը (1875-1961), իսկ այդ դռան բանալին ինչ-որ առումով գտնվում է գրական երկի հեղինակի ձեռքում:

Այս թեմային անդրադառնալիս, սակայն, անհնար է զանց առնել ավստրիացի հոգեբան, նյարդաբան և հոգեվերլուծության հիմնադիր Զիգմունդ Ֆրոյդի (1856-1939) տեսությունը, համաձայն որի՝ երազները թաքնված մտքերի արտահայտություննն են, որոնց միջոցով գաղափարները կյանք են առնում, և որոնք անգամ տրամաբանորեն միաձուլում են ժամանակն ու տարածությունը: Ուրիշ խոսքով՝ հանրաճանաչ գիտնականը երազներն ընկալում է որպես մանկությունից սկիզբ առնող պատճառահետևանքային կապ: Վերոհիշյալ գաղափարն առավել ամբողջանում ու յուրովի բացատրություն է ստանում ֆրանսիացի բանաստեղծ, սյուրռեալիստական շարժման հիմնադիրներից մեկի՝ Անդրե Բրետոնի (1896-1966) ՙՍյուրռեալիզմի մանիֆեստը՚ աշխատության մեջ, ուր հեղինակն առաջ է քաշում միտքն իբրև երազի արդյունք լինելու գաղափարը: Ըստ Բրետոնի՝ երազը կյանքի իրական բոպեների ամբողջացումն է, որը կրում է ներքին կանոնակարգման որոշակի հետքեր.

երազների պահին գիտակցությունը չի անդրադառնում տեսածի հնարավոր լինելուն: Հետևաբար այս ամենի որոշակի սինթեզն էլ նպաստում է գրական կերպարի արարմանը, քանի որ, ինչպես նշում է ավստրիացի երգահան Ֆրանց Շուբերտը (1797-1828), 'երազը զգայական աշխարհից հոգու ազատագրումն է': Ուստի այն գրական կերպարի կերտման յուրահատուկ եղանակ է, որն օգնում է հեղինակին ստեղծելու կառուցվածքային առանձնահատուկ մոդել: Իբրև այդպիսին՝ երազը բնութագրվում է ծայրահեղ համառոտությամբ, որը հնարավորություն է ընձեռում դեպքերի նվազ նկարագրությամբ արտահայտելու առավելագույն լայն գաղափարներ, ինչպես նաև խորհրդանիշների գործածությամբ ընթերցողին տալիս է սեփական կանխատեսումներ անելու բացառիկ հնարավորություն:

Գեղարվեստական ստեղծագործության մեջ երազներն աչքի են ընկնում իրենց բազմաշերտությամբ, բացահայտ և գաղտնի ուղերձներով, որտեղ վերջինիս դերն ամենամեծն ու նշանակալիցն է: Երազներին բնորոշ գրական գործառույթներից ամենաուշագրավը թերևս կանխատեսելու կամ գուշակելու գործողությունն է, որն իր հերթին բաժանվում է երկու ներքին ենթաշերտերի՝ ա) երբ երազները պարզապես կատարում են ապազան կռահելու գործառույթն ու, իբրև այդպիսին, կիրառում են խորհրդանշային պատումը, բ) երբ երազները սերտորեն առնչվում են գեղարվեստական երկի բուն դիպաշարին ու հետամուտ են՝ ստեղծելու սպասման նպատակը: Այս ամենի հետ մեկտեղ երազները կերտում են նաև գեղարվեստական կերպարի բարոյական նկարագիրը, որը կարող է ուսանելի լինել ընթերցողի համար: Առաջնայինը, հարկավ, ապազան կանխատեսելու գործառույթն է, որը հիմնականում առնչվում է սպասումի զգացմանը, կարող է ունենալ դավանաբանական բնույթ ու ներկայացնել իրադարձությունների որոշակի միավորված հաջորդականություն և կազմել գրական ստեղծագործության բովանդակային էությունը: Այսպիսով, համաձայն իրենց կատարած գործառույթի և արտահայտած իմաստի, կարող ենք երազները դասակարգել որոշակի ենթաշերտերի:

**Երազ-բովանդակություն (դիպաշար)** փոխհարաբերության ժամանակ հեղինակը երազն օգտագործում է որպես վիպական գործողությունների հենակետ և գլխավոր հերոսի հաջորդական երազների միջոցով կերտում է գեղագիտական ընկալման հստակ պատկերը: Այսպես, օրինակ, հույն վիպասան Նիկոս Կազանձակիսի (1883-1957) 'Հիսուսի վերջին գայթակղությունը' վեպի սկզբում գլխավոր գործող անձը տեսնում է խորհրդանշական երազ. ոչ թե քարից, այլ տձև հսկաների խառնամբոխից ստեղծված մի սար, որ մերթ հալվում էր, մերթ կրկին վերստանում նախկին տեսքը: Ամբոխը կրնկակոխ հետևում էր սարն ի վեր բոկոտն մագլցող երիտասարդին: Ապա հսկաների այս զազրելի խառնամբոխից

առանձնանում է մի շիկամորուս տղամարդ, որի կրկնվող բացականչությունները վերաբերում էին Իսրայելի հետագա ճակատագրին: Այս տեսիլքը հանկարծ ընդհատվում է Հորդանան գետի, Հովհաննես Մկրտչի ու Ավետյաց երկրի պատկերով, որն անասելի ուրախություն է պատճառում երիտասարդին: Սակայն պատրանքներից հյուսված սրբազան հողն անհետանում է, և երիտասարդի աչքի առջև հառնում է այս անգամ բազմագլուխ մի ամբոխ, որը ձեռքին ուներ փշեպսակ ու կտտանքի գործիքներ: Նրա առաջնորդ շիկամորուսը հորդորում է ամբոխին բռնել մշուշապատ Նազարեթում բնակվող Իսրայելի փրկչին: Հատկանշական է, որ այդ հալածական նահատակին, որին հետապնդում էր ամբոխը, ճանաչում էր միայն շիկամորուս առաջնորդը, որն էլ խոստանում է համբույրով առանձնացնել նրան մնացյալներից: Քնած երիտասարդը ամբոխի կողմից հալածական փախստականի մեջ սարսափով ճանաչում է իրեն: Ինչպես տեսնում ենք, հենց վեպի սկզբում երազային հնարքի միջոցով հեղինակն ընթերցողին հասկացնում է, որ համեստ հյուսնը, որը խաչեր էր պատրաստում ապստամբ զելոտներին խաչելու համար և այդպիսով արժանանում էր Իսրայելի ժողովրդի նզովքին ու քամահրանքին, հենց Հիսուսն է, որը կոչված է փրկելու համայն մարդկությանը: Իսկ շիկամորուսը, որը պատկերվում է որպես հայրենասեր և Իսրայելի ճակատագրով խորապես անահանգստացած առաջնորդ, հենց Հուդան է, որին էլ կանխորոշված է կերտել Հիսուսի հետագա ճակատագիրը: Այսպիսով, Աստծո Որդու առաքելության մասին հույն վիպագիրը պատմում է երկարաշունչ, խորհրդանիշներով լի ու ոլորապտույտ նման երազով, մինչդեռ անգլիացի գրող Էնթոնի Բերջեսի (1917-1993) ՙՄարդը Նազարեթից՚ վեպում հեղինակը ներկայացնում է Փրկչի երազի համառոտ նկարագիրը. անապատում դեգերելիս Հիսուսը երազում լսում է սոսկ մի նախադասություն. ՙԳտի՛ր մեկ այլ թագավորություն՚[1]:

**Երազ-կանխազուշակում** զուգակշռում երազները սովորաբար մշուշապատ են, լի ենթիմաստով ու անմեկնելի հուշումներով: Այսպես, վերոհիշյալ ՙՀիսուսի վերջին գայթակղությունը՚ վեպում գլխավոր հերոսի մայրը՝ Մարիամը, տեսնում է երազներ, որոնք վերջինիս հասկացնում եմ որդու բացառիկ լինելու հանգամանքը: Հատկանշական է, որ զավակի ծնվելու գիշերը նա տեսնում է մի խումբ հրեշտակների, որոնք մտնում են համեստ խրճիթն ու նախապատրաստում երեխայի լույս աշխարհ գալը: Ապա հայտնվում է մի ուրիշ հրեշտակ՝ ձեռքին առկայծող աստղ, որը լուսավորում էր երկիրը, իսկ այդ լույսը մարում էր հենց Մարիամի ոտքերի

[1] **Берджесс Энтони**, “Человек из Назарета”, М., 2000, ст. 101.

մոտ: Ինչպես տեսնում ենք, վիպասանը վարպետորեն ընթերցողին է ներկայացնում մարդկության ապագա Փրկչին՝ լույս, որը պետք է ցրեր երկրային խավարը, իսկ այն, անշուշտ, սկիզբ էր առել սեփական մոր երակներում: Մարիամի երազի շարունակությունն առավել քան պերճախոս է. այդ լույսը ճառագում է դեպի երկինք, ուր հայտնվում են արքայական պատմուճանով զարդարված սպիտակամաշկ, սևամորթ ու դեղնամաշկ երեք ձիավորներ: Նրանք հերթագայությամբ ծնրադրում են Մարիամի առջև ու համապատասխանաբար տալիս իրենց ընծաները՝ թագ, թանկարժեք քարեր և սիրամարգի փետուր: Իսկ նորածինը նայում է նրանց, ժպտում, բայց ընծաներին ձեռք չի տալիս: Ասել է թե՝ ապագա երկնային թագավորի համար ունեցվածքը ոչինչ է, քանի որ նա հետամուտ է մարդկային հոգիների փրկությանը, որն էլ և իրական հարստությունն է: Ապա ինչ-որ տեղից հայտնվում է գառան մորթիների մեջ փաթաթված մի հովիվ՝ ձեռքին կավե ամանով լի կաթ: Նորածինը հովվին տեսնելուն պես սկսում է պարել մոր գրկում, երեսը թաղում է կաթով լի թասի մեջ ու ագահորեն խմում այն: Նկատելի է, որ հեղինակի մտահղացումը հասնում է իր վերջնակետին. նորածին Փրկչին հոգեհարազատ են ժողովուրդն ու վերջինիս համեստ ապրելակերպը:

Ապագա Փրկչին ի վերուստ վերապահված առաքելության մասին վկայում է նաև հենց Հիսուսի երազը: Ահա թե ինչպես է հույն գրողը պատկերում այդ դրվագը. ՙՊատանին քնող թռչունի նման գլուխը հպեց կրծքին, փակեց աչքերը, ու քունը վայրկենապես պատեց նրան: Եվ նրան անմիջապես թվաց, թե ծոցից մի խնձոր հանեց, կիսեց, միջից հանեց սերմերն ու ցանեց իր առջև՝ հողի վրա: Եվ երբ նա ցանեց, սերմը մտավ հողի մեջ, ծլարձակեց, դարձավ ծառ, ճյուղավորվեց ու տերևակալեց, ծաղկեց, պտղակալեց և ալ կարմիր խնձորների ահռելի բերք տվեց՚[2]: Ինքնին հասկանալի է, որ խնձորի սերմերը հիսուսյան քարոզներն են, որոնք, ընկնելով պարարտ հողի վրա, ծլարձակել են ու մարդկության համար դարձել երկրային բարեպաշտ կյանքի ուղեցույցներ:

Ասվածի հաստատումն է մեկ այլ երազի պատկերումը, որն այս անգամ տեսնում է Հիսուսի աշակերտներից Պետրոսը, որ հետագայում պետք է դառնար իր Ուսուցչի արժանի հետևորդը.՝-Ուսուցի՛չ,- ասաց Պետրոսը: Մինչ աքաղաղը կկանչեր, ես երազ տեսա: Դու վերցրիր փայտի երկու խաչաձևված կտոր, որը քո ձեռքում դարձավ քնար և աղեղ, նվագեցիր ու երգեցիր, և քեզ մոտ հավաքվեցին գազաններ աշխարհի բոլոր ծայրերից

---

[2] **Казандзакис Никос**, “Последнее искушение Христа”, изд, Азбука-Аттикус, 2012, ст. 131.

ու սկսեցին ականջ դնել՛[3]: Ավելորդ է նշել, որ հոգին առինքնող խոսքերը, որոնք հնչել են Փրկչի շուրթերից, գերել են բազում սրտեր՝ անկախ մաշկի գույնից ու հոգեկան կերտվածքից, և հանդարտեցրել մարդկային գազանաբարո կրքերը: Սակայն բավական ուշարժան է Հուդայի երազի մեկնությունը, որը նշյալ վեպում պատկերվում է հետևյալ կերպ. ՙՔունն ակնթարթորեն պատեց Հուդային, և նրան թվաց, թե լսում է Մկրտչի ձայնը, որն արտաբերում էր առանձին, միմյանց հետ առնչություն չունեցող բառեր՝ ՙԿրա՜կ: Սոդոմ և Գոմոր: Մորթի՜ր՛[4]: Բայց այս բառերը սոսկ առաջին հայացքից են թվում չկապակցված, խառնիխուռն բացականչություններ, մինչդեռ իրականում վիպասանը հղում է յուրատեսակ ուղերձ. ապականված կյանքն արժանի է պատժի, Աստծո պարսավանքի և տանում է դեպի կործանում: Ուշագրավ է, սակայն, որ այս՝ ինչ-որ առումով մարգարեական երազը տեսնում է Հուդան, որն այստեղ ևս դավաճանի մարմնավորումն է, բայց արդեն այլ նրբերանգով. Հիսուսն ինքն է ընտրում նրան որպես մատնիչ, հորդորում գնալ քահանայապետի մոտ և հայտնել իրենց գտնվելու վայրի մասին:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում երազների մեկ այլ տեսակ, որն ընդունված է անվանել **հոգեբանական երազ**: Այն բնութագրում է գրական կերպարի հոգեվիճակն ու վերածվում հոգին մաքրագործող գեղագիտական հնարքի: Նման դասակարգմանը պատկանող երազներում բացահայտվում են գրական կերպարի ենթագիտակցության շերտերը, որոնք ի հայտ են բերում արտաքին աշխարհից թաքցված նրա հույզերը: Ասվածի ապացույցը կարելի է գտնել շվեդ գրող, Նոբելյան մրցանակի դափնեկիր Պեր Լագերկվիստի (1891-1974) ՙԲարաբբա՛ խորագրով վեպում: Ստեղծագործության գլխավոր հերոսը ակամա կյանքի հատակում հայտնված, մաղձոտված հոգով մի ավազակ է, որին խորթ է մարդկային որևէ զգացում: Սակայն երազի դրվագի կերտումով վիպասանը ընթերցողին հուշում է այս ավազակի բուն էության գաղտնիքը: Բարաբբան երազում տեսնում է մի ստրուկի, որի հետ նա գամված էր միևնույն շղթայով, ու այդ ստրուկը աղոթում էր: Բարաբբան չի տեսնում նրան, բայց լսում է ձայնը, որը նրան ծանոթ էր, և ավազակի հարցին՝ թե ՙում համար ես աղոթում՛, հետևում է պատասխանը. ՙՔեզ համար եմ աղոթում՛[5]: Այդ աղոթողը հայազգի ստրուկ Սահակն էր, որը խաչ էր բարձրացել հանուն իր հավատի,

---

[3] Նույն տեղում, էջ 280:

[4] Նույն տեղում, էջ 167:

[5] **Լագերկվիստ Պ.**, ՙԹզուկը. վեպ, վիպակներ, պատմվածքներ՛, ՙԽորհրդային գրող՛ հրատ., 1990, էջ 357:

բայց երազում շարունակում էր մնալ Բարաբբայի միակ ընկերը: Երազում հնչող ցածրաձայն աղոթքի ազդեցությունից Բարաբբայի աչքերն արտասուքով են լցվում, բայց արթնանալիս նա տեսնում է, որ կողքին ոչ ոք չկա: Այս դրվագը վիպասանն ավարտում է հետևյալ համապարփակ նախադասությամբ. ՙԱմբողջ աշխարհում Բարբբան մենակ էր՚[6]: Այսպիսով, շրջապատի համար հավերժական խնջույքներով ապրող ավազակն իրականում անհատ է, որի հոգում անթեղված է անասելի միայնություն. հենց այդ զգացումն էլ նրան դարձրել էր դեգերող ու անապաստան, անգամ վայրագ, բայց միաժամանակ ընդունակ՝ չգիտակցված սիրով սիրելու իր բախտակիցներին:

Երազներն իրենց էությամբ նման են առասպելների ու հեքիաթների, որովհետև երևակայության արդյունք են և, իբրև այդպիսին, ունեն որոշակի ուշագրավ առանձնահատկություն. երազ տեսնողը կարող է մասնակցել սեփական երազին, անգամ փորձել որոշակի ուղղումներ մտցնել արդեն տեղի ունեցած կամ ակնկալվող իրադարձությունների մեջ: Բացի այդ՝ գրական երկերում կերտված երազները կարող են ունենալ կրկնվող բնույթ, որպեսզի սաստկացնեն տվյալ ստեղծագործության մեջ առկա ծածկագրված գաղափարը: Այսպես, օրինակ, համաձայն հայտնի գրականագետ Յուրի Լոտմանի (1922-1993)՝ երազը նշան է, քանի որ անհատը գիտակցում է, որ երազ է տեսնում, սակայն չի ընկալում տեսածի նշանակությունը: Ավելին, Լոտմանը երազը համարում է սեմիոտիկ հայելի, ուր յուրաքանչյուրը տեսնում է սեփական լեզվի արտացոլումը, իսկ երազների կրկնությունն իր հերթին ընդգծում է վերջինիս շեշտադրված կարևորությունը, առավել ևս, եթե այն կիրառվում է որպես իրականության դրսևորում:

Այս առումով հիշարժան է պորտուգալացի գրող, Նոբելյան մրցանակակիր Ժոզե Սարամագոյի (1922-2010) ՙԱվետարան ըստ Հիսուսի՚ վեպը ուր Հիսուսին ու նրա հորը՝ Հովսեփին, պարբերաբար այցելում է միևնույն երազը: Սկզբում այդ երազը տեսնում է Հովսեփը. տարիներ շարունակ նա իրեն տեսնում է սպառազինված, ինչ-որ տեղ շտապելիս և հռոմական զինվորի տված հարցին, թե ուր է աճապարում հյուսնը, սոսկումով լսում է սեփական պատասխանը. ՙԲեթղեհեմ՝ սպանելու սեփական որդուս՚[7]: Ուշագրավ է , որ այս երազը հետապնդում է նրան մինչև մահ: Ըստ հեղինակի՝ այս երազը խորհրդանշում է այն փաստը, որ երբ Հովսեփը լսում է հռոմեացի զինվորների զրույցը նորածին մանուկներին այդ գիշեր սպանելու Հերովդեսի հրամանի մասին ու շտապում փրկել

[6] Նույն տեղում:

[7] Сарамаго Ж., “Евангелие от Иисуса”, 2007. Изд. Эксмо, ст. 88.

սեփական զավակին, ակամա դառնում է մյուս երեխաների մահվան պատասխանատուն. ծնողներին չնախազգուշացնելով վերահաս վտանգի մասին՝ նա թույլ է տալիս մահացու մեղք, որը և հալածում է նրան, տանջում խիղճն ու հասցնում տրամաբանական ավարտին. Հովսեփն այդ երազից ազատվում է միայն խաչի վրա մահ գտնելով: Բայց պորտուգալացի վիպասանն ավելի հեռուն է գնում և զարմանալի հմտությամբ շարունակում է այդ երազի թեման ու այն ժառանգաբար փոխանցում որդուն. Հիսուսը պատմում է Մարիամին, թե ինչպես օրեր շարունակ նրան հետապնդում է միևնույն երազը, երբ ինքը ի թիվս այլ մանկանց ինչ-որ անծանոթ քաղաքում պառկած է գետնին ու լաց է լինում, քանի որ զգում ու տեսնում է զինվորների մոտենալը, որն անխուսափելի մահ էր նշանակում: Բայց ամենից սարսափելին զինվորների մեջ սեփական հորը տեսնելն էր, որը շտապում էր սպանելու սեփական զավակին: Այսինքն՝ հոր մեղքը ենթագիտակցորեն փոխանցվել էր որդուն. անմեղ մանուկները զոհվել էին, որպեսզի ապրեր միայն մեկը: Բայց Հիսուսի երազն այդքանով չի ավարտվում. նա տեսնում է իրեն իբրև հասուն երիտասարդ, բայց պարփակված դատապարտված մանկան մարմնում, որից անջատվելու նրա ջանքերն անհաջողությամբ են պսակվում: Հեղինակի մտահղացած մարգարեական այս երազը հուշում էր Հիսուսին սեփական ճակատագրի անդառնալիության մասին. նրա պատճառով անմեղ մանուկներ էին զոհվել, որպեսզի ինքն էլ հետագայում արժանանար նույն ճակատագրին՝ փրկելով բազում անմեղ հոգիներ:

Այսպիսով, գեղարվեստական վերոհիշյալ երկերի քննությունը ցույց է տալիս, որ երազը չի կարող համարվել սոսկ ֆիզիոլոգիական վիճակ, ուր մենք հայտնվում ենք ամեն գիշեր. այն նաև գեղարվեստական արտահայտչամիջոց է, որը բացահայտում է կերպարի բնավորությունը, թաքուն խոհերը, հոգեկան աշխարհը, նվիրական զգացմունքերն ու ցանկությունները:

Հ. Շարուրյան

**Երազի հոգեբանական գործառույթները գեղարվեստական արձակում**

**Ամփոփում**

Հոդվածը նվիրված է գեղարվեստական արձակում դրսևորվող երազի հոգեբանական գործառույթներին: Ներկայացված է հայտնի հոգեբանների՝ Կ. Յունգի, Զ. Ֆրոյդի՝ երազների վերաբերյալ տեսությունների, ինչպես նաև Ա. Բրետոնի ՛Սյուրռեալիզմի մանիֆեստը՛ աշխատության համառոտ նկարագիրը: Հիմք ընդունելով երազների վերաբերյալ նշյալ տեսությունները, ինչպես նաև ընդունված դասակարգումները՝ քննության են առնվել եվրոպացի գրողների (Ն. Կազանձակիս, Է. Բերջես, Պ. Լագերկ-

վիստ, Ժ. Սարամագո) այն երկերը, ուր կենտրոնական տեղ են զբաղեցնում երազները: Մի կողմից շեշտադրվում է դրանց սոսկ ֆիզիոլոգիական երևույթ լինելու հանգամանքը, մյուս կողմից՝ ընդգծվում կերպարի ներաշխարհի բացահայտման գործառույթը:

**А. Шарурян**

**Психологические функции сна в художественной прозе**

**Резюме**

Статья посвящена анализу психологических функций сна, проявляемых в художественной прозе. Представлены теории известных психологов К. Юнга, З. Фройда, а также краткое описание труда А. Бретона «Манифест сюрреализма». Основываясь на указанные теории относительно снов и на принятые классификации, проанализированы те произведения европейских писателей (Н. Казандзакиса, Э. Берджеса, П. Лагерквиста, Ж. Сарамаго), в которых центральное место отведено снам. С одной стороны, акцентируется сугубо физиологическая суть этого явления, с другой – подчеркивается функция выявления внутреннего мира образа.

**H. Sharuryan**

**Psychologigal functions of dreams in literary prose**

**Summary**

The article is devoted to the psychological functions of dream expressed in literary fiction. It presents the theories about dreams by famous psychologists C. Jung and S. Freud, as well as, the brief description of ‘Surrealist Manifesto’ by A. Breton. Taking into consideration the above mentioned theories on dreams, as well as, the adopted classifications of dreams we have examined those works of the European writers (N. Kazandsakis, A. Burgess, P. Lagerquist, J. Saramago) where dreams are the central part of them. On one hand this article emphasizes the notion that dreams are physiological phenomena while on the other hand it underlines the function of dreams in revealing the inner world of the literary character.

ԱՆԺԵԼԱ ԽՈՐԵՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՏԴ 821.19.0

# ԱՆՀԱՏԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԴՐԱՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ԱԲՈՒ-ԼԱԼԱ ՄԱՀԱՐԻ» ՊՈԵՄՈՒՄ

**Բանալի բառեր և արտահայտություններ.** ազատություն, անհատ, Աբու-Լալա, հասարակություն, հոգի, փիլիսոփայական խոհեր, հավերժություն և անսահմանություն, տիեզերք, աշխարհ

**Key-words and expressions:** freedom, Individual, Abu-Lala, Society, Soul, Philosophic thoughts, Eternity and Infinity, Universe, World

**Ключевые слова и выражения:** свобода, личность, Абу-Лала, общество, дух, философские мысли, вечность и бесконечность, космос (вселенная), мир.

Ավ. Իսահակյանի աշխարընկալման հայեցակարգը բարդ է ու հետաքրքիր. խոհերը հայրենիքի, մարդկային կեցության, սիրո, հզոր անհատի, նրա ազատության, նյութ-ուժի, կյանքի և մահու, ժամանակի-տարածության, տիեզերքի անհունության գոյավորում են նրա գեղարվեստական համակարգը: Ազատության ձգտումը՝ որպես ազգի, անհատի, մարդկության շքեղ երազանք, բազմիցս անդրադարձվել է Իսահակյանի ստեղծագործությունում, փիլիսոփայական մտորումներում: Բռնադատված ժողովրդի զավակը լավ գիտեր, թե որքան թանկ է ազատությունը, և ինչ գնով է այն ձեռք բերվում: Ստեղծագործական ճանապարհի սկզբին արդեն Իսահակյանը ազգային-ազատագրական պայքարի ջատագով էր. «Մասսա Մանուկում», «Հայդուկի երգեր» շարքում, այլ ստեղծագործություններում ազատության ձգտումը մարմնավորվում էր պայքարի գնացող հերոսի կերպարով: Առհասարակ մարդը բնությունից ծնվում է ազատ, և նա՝ որպես բնության բարձրագույն էակ, որպես անհատականություն, որպես հերոս, «հենի», բացարձակ արժևորվում է Իսահակյանի ստեղծագործության մեջ: Իր՝ հեղինակի՝ աշխարհի ընկալումն ու մեկնաբանումը ձևակերպվում էր նրա ստեղծագործական մտորումներում, որի բանաձևումը հրաշալիորեն տրված է «Աբու-Լալա Մահարի» պոեմում: «…այնտեղ («Աբու-Լալա Մահարի» պոեմում) ես եմ,

ուրիշ ոչ ոք,- ասում է Ավետիք Իսահակյանը,- միայն ուրիշի վերարկուի տակ[1]»:

Գրականության մեջ ստեղծագործություններ կան, որ խտացված կրքերի ու զգացմունքների պոռթկումի արդյունք են, դրանցից է «Աբու-Լալա Մահարի» պոեմը: Հայտնի է այն խոստովանությունը, որ արել է Իսահակյանը այս ստեղծագործության ենթատեքստի՝ պոեմի վրա ազգային ճակատագրի խաղացած դերի մասին, իսկ այն այսպիսին է. «…և վերջապես հայության աղետը, որ մոռցնել է տալիս անհատական վիշտ ու ցավ: Եվ Մահարին նրանց արդյունքն է: Պետք չէ, որ կոտորածները երգեմ, ցույց տալու համար իմ վիշտը (Սիամանթոյից հետո դժվար է երգել), սակայն Աբու-Լալայիս» ռուս և գերման թարգմանությունների մասին գրախոսները ասացին, որ միայն հայ մարդը կարող է այսքան սև հոռետես լինել: Անբացատրելի, զարհուրելի ջարդերը միայն կարող են այսպես մթագնել մի հոգի, հայ մարդու հոգին»[2]:

Այն, որ Իսահակյանը պատկանում է մի ժողովրդի, որի գոյությունը անցել է պայքարի, տառապանքի միջով, բնականաբար, չէր կարող իր ազդեցությունը չունենալ զգայուն բանաստեղծի վրա,ինչպես նաև այն իրողությունը, որ Իսահակյանը երջանկությունն ունեցավ լինելու արտասահմանում, սովորելու ժամանակի լավագույն ուսումնական հաստատություններից մեկում, կարդալու, ուսումնասիրելու համաշխարհային մեծություններին, հատկապես Նիցշեին, չէր կարող չձևավորել բանաստեղծի աշխարհայացքը, այս ամենը, սակայն, միայն այնքանով, որքանով հոգեհարազատ պիտի լինեին նրան, աշխարհընկալման նրա կերպին: Ե՛վ հայկական ճակատագիրը, և՛ Նիցշեի գաղափարախոսությունը, ինչպես նաև արաբ բանաստեղծի՝ իրական Աբու-լ Ալա ալ Մահարու ստեղծագործությունը՝ Իսահակյանի հոգեկերտվածքին հարազատ, նախանշել են Իսահակյանի պոեմի ստեղծագործական ճակատագիրը[3]: Այս ամենը, սակայն, ենթատեքստային իրողություններ են, էականը պոեմի ստեղծագործական շրջագիծն է. առ այն, որ հզոր անհատը, կրելով իր ներսում մարդկային հասարակության ողջ արատների գիտակցման բեռը, փորձում է ազատվել դրանցից՝ մեկուսանալով, որ, սակայն, իբրև աշխարհաճանաչության ամբողջական արդյունք՝ անհատի գիտակցումն է՝ հոգու ու մտքի ազատության

[1] Ավիկ Իսահակյան, Ավետիք Իսահակյանի պոեմները, Երևան, 2007, էջ 102:
[2] Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու վեց հատորով, հ.6, Երևան, 1979, էջ 217:
[3] Այս երկու խնդիրներին հանգամանալից անդրադարձել է գրականագետ Ավիկ Իսահակյանը իր «Ավետիք Իսահակյանի պոեմները» գրքում:

ընկալումով, հոգու ճախրանքի մեջ իրեն գտնելու ու ճանաչելու հնարավորության լինելիությամբ: Սա անհատի իրավունքն է. փախչել հասարակությունից՝ սեփական «ես»-ը գտնելու համար, ի տարբերություն հասարակության, որը չի փորձում և չի էլ կարող փախչել ինքն իրենից: Անհատականությունները վեր են իրենց իսկ ծնող հասարակությունից, և սրա մեջ է նրանց առաքելությունը. ազատվել, ինքնամաքրվել այն գործությունից, որ կարող է զրկել մարդուն ինքնուրույն լինելուց: Հասարակությունից փախչող հերոսը, ինչպիսին Աբու-Լալան է, այդ իրավունքը ունենում է նրանից ավելի լավը լինելու խոր գիտակցությամբ: Պայմանականությունը, որքան էլ այն հարմարավետ է, ատելի է խորհող ու ըմբոստ հոգիներին: Ազատության զգացողությունը ոչնչով չի սահմանափակվում, այն տարրալուծվում է անվերջի որոնումների մեջ, որը կարող է երկու լուծում ունենալ՝ շարունակության մեջ հանգել պայքարի գաղափարին՝ այդ նույն հասարակությանը փրկելու միտումով կամ ինքնամեկուսացումով՝ հասարակության դատապարտության ընկալումի մեջ. «Եվ նրա խորաթափանց ոգին ճանաչեց մարդուն //Ճանաչեց և խորագին ատեց մարդուն // Եվ նրա օրենքները»[4]: Աշխարհի ժխտման մահարիական որոշումը աշխարհը կատարելապես ճանաչելու արդյունքում է գոյավորվում. «Ատում եմ, ինչ որ սիրել եմ առաջ, ինչ որ տեսել եմ մարդկային հոգում // Մարդկային հոգում զազիր ու նանիր՝ համրել եմ հազար գարշանք ու նողկում»(II, 55): Պոեմի շարունակական ընթացքը՝ սուրահների բաժանումով, ավարտվում է հոգու կուտակումների վերջին պարպումով. ազատության զգացողության վայելումով՝ որպես հոգու վերջնական հանգրվան, որպես մարդու զգացմունքների, ցանկությունների, բանականության անպարագիծ անվերջության. «Ո՜հ, ի՜նչ ազատ եմ, անպարփակ ազատ, մի±թե կարող է այս մեծ սահարան // Պարուրել, զրկել իր ծիրերի մեջ ազատությունըս՝ անհուն, անսահման»(II, 74): Հերոսի պոռթկուն ինքնախոստովանանքը բանաձևային կերպ է ստանում. «Իմ գլխի վերև չպետք է լինի ո՜չ մի հովանի, ո՜չ մի իրավունք,// Եվ իմ կամքից դուրս ամեն ինչ բանտ է, և՜ ստրկացում և՜ բռնադատում // Ես կուզեմ լինել անսահման ազատ, անպարտք, անիշխան, այլև անաստված // Հոգիս տենչում է միայն, միմիայն՝ մեծ ազատության՝ անհուն, անաստված» (II, 64): Շարունակության մեջ մտքի այսպիսի թռիչքը բանաստեղծի և Մահարու հոգեբանական լարվածության տրամաբանական վերջնագիծն է.

---

[4] Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու վեց հատորով, հ. 2, Երևան, 1974. էջ 53: (այսուհետ հղումները տեքստում, լատինական թվով կնշվի հատորը, արաբականով՝ էջը):

մարդուն տիեզերականացնել՝ յուրովի փորձելով հասկանալի դարձնել առեղծվածայինի անմեկնելիության խորհրդավոր գաղտնիքը: Մահարու անհուն, անաստված լինելու ցանկությունը տարրալուծվում է անմահության զգացողություն-տենչանքի մեջ: Հոգին ձգտում է ազատվել ամեն տեսակ կապանքներից: Անսահման ազատությունը ազատում է նաև Աստծուց, քանի որ դա ևս յուրահատուկ կապանք է: Այդ կապանքների ոչնչացումը մարդուն այս դեպքում դուրս է դնում ժամանակից ու տարածությունից՝ մերձեցնելով անեզր տիեզերքին. «Սուրբ է իմ կամքը, իմ կիրքը, իմ խելագարումը. Ես կամենում եմ, որովհետև ես եմ ստեղծել ամեն ինչ, որովհետև տիեզերքը ես եմ, որովհետև առանց ինձ ոչինչ չկա»[5]: Գրառումը կատարվել է ճիշտ այն ժամանակ, երբ գրվում էր «Աքու-Լալա Մահարի» պոեմը: Իսահակյան ստեղծագործողի փիլիսոփայական խոհերում առկա է հավերժության ու անսահմանորեն նրան ձգտող անհատի գիտակցության հոգեբանական երկատվածությունը: Հատկապես կյանքի վերջին տարիներին գրված ստեղծագործություններում դրսևորվում էր կյանքի տևողության սահմանափակության մասին բանաստեղծի ցավագին մտածումը, և մարդուն տիեզերքի կենտրոն համարող բանաստեղծի համար աշխարհին ունայն է, առանց մարդու, այն պարզապես գոյություն ունենալ չի կարող: Այս երկատվածությունն է նաև գոյավորել նրա ստեղծագործության հուզական շերտը: Խոր փիլիսոփայության՝ մտքի ծավալման ու զգացմունքայնության կատարյալ միաձուլումը այս ստեղծագործության անհերքելի արժանիքներից է:

Վերջնականապես հիասթափվելով և իրեն դուրս դնելով հասարակությունից՝ հերոսը, այնուամենայնիվ, չի անջրպետվում նրանից, իրականում նրա ատելությունը մարդկային բոլոր պայմանականությունների, նրա ապրելու կերպի նկատմամբ այդ նույն հասարակությունը փրկելու միտում ունի՝ ժխտելով, բացասելով, ցասումնալից մերժելով այն ամբողջ արգահատելին, որ բույն է դրել մարդու հոգում: Արատների թվարկումը ոչ այնքան իրենից մարդկային մեղքը հեռացնելու, սեփական «ես»-ը գերագնահատելու, որքան մարդ արարածին իր գործության պատյանից դուրս քաշելու, նրան ազատագրվելու հնարավորություն տալու միջոց է: Թվում է՝ պարադոքս է, սակայն որքան Աքու-Լալան մեղադրում է մարդկությանը, այնքան ծանրանում է սեփական մեղքի զգացումը, որպես ընդհանրապես մարդ արարածի մեղք, սա հայելու մեջ նայելու և սեփական «ես»-ը տեսնելու ու նրա խորքը թափանցելու պես է, որ այդպես էլ հանգիստ չի տալիս հերոսին, քանի որ հզոր անհատի

[5] Ավ. Իսահակյան «Հիշատակարան», Երևան, 1977, էջ 306:

երջանկությունը ինքնակատարելագործման մեջ է, առաքինի ու պարկեշտ լինելու մեջ: Պոեմի հերոսի աշխարհասիրությունից են ծնվում աշխարհի մասին երբևէ հյուսված ամենահուզիչ տողերը. «Աշխարհն էլ ասես, մի հեքիաթ լինի՝ անսկիզբ, անվերջ, հրաշք դյութական // Եվ ո՞վ է հյուսել հեքիաթն այս վսեմ, հյուսել աստղերով. Բյուր հրաշքներով //Եվ ո՞վ է պատմում բյուր-բյուր ձևերով՝անդուլ ու անխոնջ՝ այսպես թովչանքով» (II, 61): Երկնքում առկայծող աստղերը, լուսինը, ճանապարհի եզրերին օրորվող նոճիները և քարավանը, հատկապես քարավանը, ուղտի վճիտ աչքերը խորհրդանիշեր են հոգու հենարանի, որ օգնում են Մահարուն գտնվելու հոգևորի տիրույթներում, ուր կեղծիքն ու քսությունը, ստրկամտությունն ու բռնադատումը տեղ չունեն: Սրանք ուժ են տալիս հիասթափված հերոսին զգալու և ապրելու կյանքի հավերժող գեղեցկությունը և գոյություն ունենալու հաճույքը. «Միրով գուրգուրեց, ջերմ շրթունքներով համբուրեց ուղտի աչքերը վճիտ. //Եվ թարթիչներից նրա կախվեցին անզուսպ արցունքի երկու այրող շիթ»(II, 56):

Գրականագիտությունը անդրադարձել է քարավանի խնդրին Իսահակյանի ստեղծագործության մեջ: Քարավանը Իսահակյանի համար ոչ այնքան սովորական հնարանք է, որքան հոգեվիճակ՝ երազանքի, գեղեցկության, հեռուներին ձգտելու, անվերջ ընթացքի, մտքի հոսունության, երևույթները լրջորեն քննելու միջոց: Այն իր առանձնահատուկ դրսևորումը կարող էր ստանալ նաև նրա անավարտ վեպի՝ «Ուստա Կարոյի» մեջ, ուր չափազանց կարևորվում էր քարավանի դերը գլխավոր հերոսի էության բնութագրման առումով՝ իր մեջ խտացնելով հոգեբանական ապրումների մի ամբողջ փիլիսոփայություն: Ուստա Կարոն էլ ճշմարտությունը որոնում է այնպես, ինչպես Աբու Լալան, և նրա հիասթափությունն էլ մարդկային հասարակությունից նույնքան մեծ էր, որքան Աբու-Լալայինը: Ի դեպ, վեպի և պոեմի գրության ժամանակները համընկնում են: Ու թեև տարբեր հայեցակետերից, այս երկու ստեղծագործություններում էլ Իսահակյան մտածողի փիլիսոփայական խոհերը ընդհանրանում են:

Պոեմի ավարտը սահմանազատումն է լույսի և խավարի: Մահարին իր տենչերի մարմնավորումը տեսնում է հզոր բնության մեջ, արևի՝ իբրև կյանքի գոյի, իբրև հոգու մաքրագործման միակ կենսատուի, միակ մայրական գրկի. «Ո՜հ, իմ մայր-արև, քո ոսկեփրփուր ծիրանիդ շքեղ ձգի՛ ուսերիս, //Որ ես հաղթական, լուս փառքերիդ մեջ սրարբած սուրամ դեպի, դեպի քեզ» (II, 76): Աբու-Լալայի խոհերի ընդգրկումը ժամանակի ու տարածության առումով անսահման է, ինչին, ըստ էության, միտում է Ավետիք Իսահակյանի ստեղծագործությունը: Հերոսի փիլիսոփայական

խորհրդածությունը չափվում է ապրածի հասունության, զգացածի ու տեսածի խորության մեջ:

Այս ստեղծագործության հիմայքը, գեղարվեստականությունը կարևորվում է և՛ այն հզոր պոռկումի մեջ, որով անհատը հեռանում է իրեն շրջապատող միջավայրությունից, ինչն ընթերցողին իր և հերոսի միջև նմանություն տեսնելու պատրանք է ստեղծում, և՛ հոգու այն կոչի, որը միտում է կատարյալի ու հոգևորի միավորման՝ որպես մաքրագործում, և՛ պոեմի կառուցվածքի (սուրահների բաժանումը), որը հնարավորություն է տալիս քայլ առ քայլ միաձուլել խոհերի շղթան մի ամբողջության մեջ, և՛ լեզվական այն բառաէներգիայի, որով շնչում է ստեղծագործությունը. գործողությունների բացակայության պարագայում ստեղծագործության մեջ ծանրության կենտրոնը դառնում է բառը՝ բառ-պատկերը, բառ-ապրումը՝ ստեղծելով այն հզոր էներգետիկ դաշտը, որ պայմանավորում է գրական ստեղծագործության գեղարվեստական ազդեցությունը: «Աբու-Լալա Մահարի» պոեմի գոյությունը չափվելու է հազարամյակներով. սա հավերժության կնիքն ունի իր վրա. սա մարդու մասին է ազատության իր ձգտումով, որ կաշկանդված չէ հարմարվողականության պատյանով, մարդու կամքի՝ կեղծիքից զերծ ու անկաշկանդ, սա ազգություն ու տեղայնություն չի սահմանում, այլ սահմանումն է տիեզերքի մեջ ճախրանքի սովոր մարդ արարածի ապրելու կերպի, ինչը գրականության թեմատիկայի խնդիրներից մեկն է: «Աբու-Լալայի» փիլիսոփայությունը հոգու ազատության, կատարյալ մարդկության երազանքն է, ժխտման միջոցով հաստատման սկզբունքը, որ հայ գրականության մեջ գալիս է դեռ Խորենացուց:

**Ա. Խորենյան**

**Անհատի և հասարակության հակադրամիասնությունը**
**Ավ. Իսահակյանի “Աբու-Լալա Մահարի” պոեմում**

**Ամփոփում**

Ավ. Իսահակյանի ստեղծագործությունում կարևորվում է հզոր անհատի կերպարը. Նա ազատության ձգտող հերոսն է, որ փախչում է հասարակությունից՝ չցանկանալով ապրել կեղծիքի ու խաբեության մեջ. իրեն դուրս դնելով հասարակությունից՝ հերոսը, այնուամենայնիվ, չի անջրպետվում նրանից, նրա բացասումը մարդուն իր գործության պատյանից դուրս քաշելու, նրան ազատագրվելու հնարավորություն տալու միջոց է: Թվում է՝ պարադոքս է, սակայն որքան Աբու-Լալան մեղադրում է մարդկությանը, այնքան կարծես ծանրանում է սեփական մեղքի զգացումը, որպես ընդհանրապես մարդ արարածի մեղք: Պոեմի փիլիսոփայությունը

հոգու ազատության և կատարյալ մարդկության երազանքն է՝ ժխտման միջոցով հաստատման սկզբունքը:

**А. Хоренян**

**Противоположность и единства личности и общества в поэме Ав. Исаакяна« Абу- Лала Маари»**

**Rезюме**

В произведениях Исаакяна важное место занимает образ сильной личности. Герой Исаакяна стремиться к свободе, он убегает из социума, не желая жить во лжи и обмане. Выходя из общества, тем не менее герой не отождествляет себя от него, его побег является своего рода способом освобождения человека из своей серой жизни. Это кажется парадоксальным, но сколько Абу-Лала обвиняет человечество, столько нарастает его собственное чувство вины, как человеческого существа в целом. Философия поэмы состоит в мечте человечества о свободе духа и совершенном человечестве: принципа утверждения через отрицания.

**A. Khorenyan**

**The Contradistinction and Unity of the Individual and Society in Avetik Isahakyan's poem "Abu-Lala Mahari"**

**Summary**

The character of power hero is highlighted in Isahakyan's work. It is a hero that strives to liberty, runs away from the society not liking to live in falsification and equivocation. Keeping himself outside of society, the hero still doesn't stand out from the same society, his negation is a means of pulling man out of dullness and giving the opportunity to be liberated. It seems to be a paradox but as much Abu-Lala blames humanity, as more his sense of guilt becomes accepting it generally as guilt of mankind. The philosophy of the poem is the freedom of soul and dream of perfect humanity, revealing defects of mankind thus affirming the idea that perfection is a must for humanity.

ՍԻՐԱՆՈՒՇ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի հայ գրականության, նրա դասավանդման մեթոդիկայի և լրագրության ամբիոնի հայցորդ
ՀՏԴ 821.134.2.0:94(479.25)

# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿԵՐՊԱՎՈՐՈՒՄԸ ՄԱՐԻԱ ԱՆԽԵԼՍ ԱՆԳԼԱԴԱՅԻ <<ԱՐԱՄԻ ՀՈՒՇԱՏԵՏՐԸ>> ՎԵՊՈՒՄ

**Բանալի բառեր և արտահայտություններ.** վեպ-հուշագրություն-օրագրություն, վարուժանական պոեզիա, կենսասիրություն, հիշողության ցավ:

**Ключевые слова и выражения**: роман-дневник-мемуары, Варужанская поэзия, жизнерадостность, бол воспоминаний.

**Key words and phrases:** novel-memoirs-diary, poetry of Varujan, love of life, pain of memory.

Մարիա Անխելս Անգլադան (1930-1999) կատալոնացի արձակագիր, բանաստեղծ ու խոհագիր է, դասական բանասիրության պրոֆեսոր, Ժոսեֆ Պլայի անվան մրցանակի դափնեկիր: Ժանրային առումով հարուստ գրական ժառանգություն է թողել՝ ակնարկ, պատմվածք, վեպ, պոեմ, զբաղվել է թարգմանությամբ. հատկապես կարևորվում են իտալերենից կատարած նրա թարգմանությունները: Անգլադան նույնպես անտարբեր չի եղել անարդարությունների ու դրանցից ծնվող մարդկային ողբերգությունների նկատմամբ, ինչի վկայությունն են «Սարաևո» պոեմը, «Օսվենցիմի ջութակը» վեպը: Անհատի բարոյական պարտավորվածության գիտակցումով «Արամի հուշատետրը» վեպով նա անդրադարձել է նաև հայոց ցեղասպանությանը:

Դասական բանասիրության ու մշակույթի հանդեպ ունեցած սերն ու վերաբերմունքն իրենց արտահայտությունն են գտել նրա ստեղծագործություններում, որոնցում գրողը զուգահեռել է մշակույթն ու ատելությունը, համամարդկային ողբերգությունը՝ վերջիններիս առաջացման պատճառը տեսնելով մշակույթի բացակայության համապատկերում: Կատալոնացի գրողն առաջին անգամ հայ գրականությանը ծանոթացել է 1970-ականներին, երբ Ալֆոնս Մասերասի թարգմանությամբ կարդացել է Հրանտ Նազարյանցի բանաստեղծությունները, իսկ ավելի ուշ Վահե Գոդելի՝ բնագրից ֆրանսերեն կատարած թարգմանության շնորհիվ ծանոթանում է հայ բանաստեղծներից

մի քանիսին, այդ թվում Դ.Վարուժանին, ում հատընտիրի թարգմանության ու հրատարակության հեղինակն է նաև: Թերևս վարուժանական պոեզիայի հետ ծանոթությունը պիտի դրդրեր իմանալ ավելին, իր խոսքն ասեր ընդդեմ մոռացության: <<Արամի հուշատետրը>> վեպ-հուշագրություն-օրագրություն է (թվագրված են միայն այն օրերը, երբ եղեռնի <<հեղինակների>> մահվան լուրերն է գրառում՝ մեջբերելով ֆրանսիական օրաթերթերից հատվածներ) մի հայ ընտանիքի մասին, որը, հաղթահարելով տարագրության ու հարազատների կորստի ծխացող ցավը, հանգրվանում է օտար երկրում՝ փորձելով վերահաստատել ազգային գոյությունը:

Վեպը լայն արձագանք է գտել Կատալոնիայում և Իսպանիայում, իսկ գրաքննադատների կողմից անվանվել <<հայոց ցեղասպանության հավաստի ու ցնցող վավերագրություն>>: Գիրքը հայերեն լույս է տեսել 2008թ., վեպի հայերեն թարգմանությունը կատարել է Գրիգոր Ջանիկյանը: Անգլադան կերտել է պատմական հիմքով, ճշմարիտ իրողություններով կերպավորված վեպ, որը պատմում է 1915թ. կացնահարված հերթական ընտանիքի պատմությունը, որի բեկորները՝ մայր ու որդի, անցնելով Գողգոթան, կարողանում են փրկվել ու հաստատվել Մարսելում: «Օրագիրը գեղեցիկ, անձնական բան է, անկաշկանդ, հատվածական: Քանի որ վեպն ավելի շատ միասնականության և շարունակականության կարիք ունի, քան պատմվածքը, օրագիրը կատարյալ ձև չէ վեպի երկար կտորների համար»[1]: Թերևս ժանրատեսակի՝ օրագրի նաև այսպիսի առանձնահատկությամբ պետք է բացատրել ստեղծագործության փոքր ծավալը, իսկ կերպարի աստիճանական զարգացման համար հատկացված փոքր տարածքի, վեպի արտաքին բնորոշ հատկանիշների՝ բազմաճյուղ սյուժեի, բազմաթիվ հերոսների բացակայության պատճառով այն ավելի շուտ կարելի է և պետք է վիպակ համարել:

Անգլադան ստեղծել է վեպ-հուշագրություն, որտեղ կերպարների օրագրային գրառումները հարստացված են մամուլում լույս ընծայված վավերաթղթերով ու վկայություններով: Գլխավոր կերպարը՝ տասնհինգամյա Արամը, հոր նվիրած հուշատետրում պատմում է իր ընտանիքի ու իր ժողովրդի ողբերգության մասին, վերակենդանացնում իր և մոր Վան ուխտի գնալու, կոտորածների սկսվելու, իրենց տարագրության, Էջմիածնում և Երևանում անցկացրած ծանր օրերի դրվագները, ապա ներկայացնում Հունաստանում անցկացրած դժվարին օրերն ու Մարսելում հաստատվելը: Չնայած դաժան իրականությանը՝

[1] Լեոն-Ջավեն Սյուրմելյան, Արձակի տեխնիկա. Չափ և խենթություն, Երևան, 2008, էջ 117:

ցրոնված ընտանիքի բեկորները չեն կորցնում հավատը մարդու հանդեպ, շարունակում են պայքարել ինքնության պահպանման համար և փորձում օտար երկրում վերագտնել կորցրածը:

Գոյություն ունեն որոշակի թեմաներ ու որոշակի իրադարձություններ, որոնք չափից ավելի ցցուն չպետք է մատուցվեն: Դժվար է խոսել ցեղասպանության մասին, կրկնակի անգամ դժվար է գրել այդ մասին, որովհետև խոսքը նյութականանում է, ոգի ստանում, բայց գրվածքը անմահ մի բան է, որը թույլ չի տալիս, որ ճշմարտությունը կորստյան մատնվի: Եղեռնի մասին գրելիս կա զոհերին անարգելու, մխացող ցավը բորբոքելու, դժոխքը վերակենդանացնելու ու դժոխային պատմությունների մեջ խճճվելու վտանգը: Հեշտ չէ պատմել սարսափը, ողբերգության մասին հնարավոր չէ անխառն գրել, այն գոնե պիտի համեմվի ժպիտով կամ հեգնանքով (երկուսն էլ հեռավորություն են պահանջում): Գեղարվեստական նմանօրինակ մեթոդով Աղետի մասին շատերն են գրել, իսկ կատալոնացի հեղինակը 1915թ.-ի մասին գրելիս ողբերգությունն ու պոեզիան միահյուսում է: Անգլադան չի ներկայացնում սարսափելի դրվագներ, ինչն ինքը <<գրական սադիզմ>> էր որակում, նույն կերպ նաև իսպանացի գրողները դիպաշարը չեն թունավորում սարսափի տեսարաններով, սակայն դրանք երևակվում են հերոսների հոգում ու մղձավանջներում: Պատումը զերծ է եղեռնի սահմռկեցուցիչ տեսարաններից, փոխարենը ողբերգության մասին պատմում են Հրանտ Նազարյանցի <<Վանի խաշնարածները>> բանաստեղծության <<չարիքի գերանդին հնձեց նրանց>>, <<բայց կռհակներն արյուն էին բերում>> մետաֆորները (բայց ոչ հիպերբոլաները): Անգլադան նման մոտեցում է հանդես բերում ոչ միայն <<գրական սադիզմի>> և զոհերին անարգելու, այլև տեքստը ապազեղազիտականացնելու վտանգից խուսափելու համար:

Անցյալի ուրվականներն ու մղձավանջները շարունակում են սողոսկել ներկա, ու Արամը պիտի խոստովանի, որ անցածը մտքում դրոշմվել է այնպես, <<ինչպես շիկացած պայտի խարանները Վանի արոտավայրերի եզների գավակներին>>[2]: Կերպարի մտապատկերում վերակենդանանում են մանկության տրապիզոնյան վերհուշերը քույրերի, տատի ու հատկապես բանաստեղծ հոր մասին, վեր են հառնում անցյալի չքնաղ պատկերները, մանկության երջանիկ տեսիլներն, ու նա միտումնավոր չի գրի հաղթահարած գաղթի սարսափների մասին, որովհետև ապրելու համար պետք էր մոռանալ գաղթի շատ մանրամասներ: Հիշենք, որ առհասարակ ինքնակենսագրական վեպի

[2] Անգլադա Ա. Մ., Արամի հուշատետրը, Երևան, ԱՕԿՍ, 2008, էջ 51:

ժանրում բավական ավանդական էր «մանկության թեման» օգտագործելը, որտեղ կյանքի երևույթները բեկվում են երեխայի ներքին աշխարհում և մեկնաբանվում փոքրիկ հերոսի ընկալումների ու հոգեբանության շրջանակում: Այսպիսի մեկնակետից ու գեղարվեստական մեթոդով է գրել իր վեպը նաև կատալոնացի գրող Մարկ Մորտեն: Երկու վեպերի գլխավոր կերպարներն ու սյուժետային զարգացումը ապահովողները փոքրիկ հերոսներն են, ովքեր ցեղասպանությունը վերապրել են ամբողջ դաժանությամբ և մինչև կյանքի վերջ կրել հիշողությունների ու սարսափների խարանը, ովքեր մեկ օրում կորցրել են իրենց մանկությունը: Վեպի մի քանի էջեր ասես մահարիական մանկության ու պատանեկության խտացումները լինեն. Արամը մանկության լուսարձակի տակ մանկան հայացքով ներկայացնում է Վանի ու հարակից բնակչության գաղթը: Զարմանալի համանմանությամբ կենդանանում է անգամ տարագրության ճանապարհին սիրելի շանը կորցնելու դրվագը, ապա որբերի Էջմիածինը, տխուր ու մռայլ Երևանը: Եվ դարձյալ լսվում է մեկ օրում կորցրած մանկության ու հասունանալու խոստովանությունը:

<<Արամի հուշատետրը>> կառուցվածքային ու գեղագիտական տիրույթով տարբերվող ստեղծագործություն է: Վեպի գլուխները սկսվում են հայ պոեզիայի նմուշներով, որոնք բովանդակում են տվյալ գլխի հիմնական պատումը: Յուրահատուկ է վեպի հորինվածքն ու հղացքը. Անգլադան իրեն բնորոշ քնարականությամբ պատկերում է ազգային խառնվածք, սովորույթներ, մշակույթ՝ մասնավորապես պոեզիա՝ հավաստելով, թե հնարավոր չէ մոռացումով քողարկել անջնջելի հիշողությունը: Ազգային գիտակցությունը կպահպանվի ու կվերընձյուղվի յուրաքանչյուր հայի հոգում. հնարավոր է սպանել մարմինը, բայց ոչ հոգին, հնարավոր է սպանել ժողովրդին, բայց ոչ ազգային գիտակցությունը:

Վեպի գլխավոր կերպարը Վահեն է, ով չի մասնակցում գործողություններին, բայց որի կերպարն ամբողջանում է Արամի ու Մարիկի հիշողություններով: Հատկապես Մարիկի՝ Արամի մոր հիշողություններով թանձրանում է Վահեի՝ Վենետիկում ու Գենտում ուսանած բանաստեղծ ամուսնու կերպարը: Վահեն կերպավորում է բանաստեղծին, ում նախատիպը Դ. Վարուժանն է, բայց ամենից առաջ այն հայ ժողովրդի սպանված հատվածի հավաքական կերպարն ու խորհրդանիշն է վեպում: Արամը երբեք չի կարողանում հոր՝ Վահեի մասին անցյալ ժամանակով խոսել, նրա համոզմամբ բանաստեղծները չեն մեռնում, քանի դեռ կենդանի է նրանց բանաստեղծությունը: Իսկ Վահեի (Վարուժանի) պոեզիան չի մեռնի, կապրի անգամ այն ժամանակ,

երբ չեն լինի եղեռնագործները, կհնչի վարուժանական բանաստեղծությունը, ու չի մոռացվի եղեռնագործությունը:

Ողբերգությունը հաղթահարելու համար պետք է շարունակել ապրել՝ միաժամանակ չմոռանալով անցյալն ու ազգայինը, ինչի հաստատումն է վարդի խորհրդանիշ-մետաֆորը. Մարիկը շատ էր սիրում վարդեր, սիրում էր խնամել, փայփայել դրանք: Վարդերը միշտ ներկա են Մարիկի կյանքում՝ Տրապիզոնից մինչև Մարսել: Վարդերը Մարիկի համար Վահեի պոեզիայի խորհրդանիշն են, հավերժ գեղեցկության ու ներդաշնակության աշխարհ: Պոեզիայի ու վարդերի գեղեցկությունը չի մահանա, մինչև անգամ եթե ինչ որ մեկը ցանկանա սպանել բանաստեղծին և խլացնել նրա ձայնը:

Վեպը զերծ է հեղինակային ցանկացած բարձրագոչ մեկնաբանությունից ու դիրքորոշումից: Չկա զուտ գրողական հայացք, փոխարենը կա հայացք կերպարի դիտակետից: Անգլադան մշակույթի լեզվով քողազերծել է Մեծ Եղեռնի հակամարդկային ու հակամշակութային բնույթը: Ցեղասպանությանը նվիրված գործերում գրեթե միշտ կարևորումը մարդկային գոյի ոչնչացման համապատկերում է, այնինչ Անգլադան ցեղասպանությունը դիտարկել է մարդկային ստեղծագործ էության ու պոտենցիալի տիրույթում: Եղեռնին նվիրված ստեղծագործություններում միշտ առաջին պլանում մարդկային կյանքն է, Մարիա Անխելս Անգլադան ցեղասպանությունը դիտարկում է մշակութային հարթության մեջ՝ զուգահեռելով բանաստեղծին ընդդեմ մարդատյացների, իսկ պոեզիան՝ ընդդեմ բարբարոսության: Կիրառելով բռնության ու մշակույթի հակադրման հնարքը՝ նա զարգացնում է մշակութային ցեղասպանության գաղափարը: Վեպում թեմատիկ առանցքը մշակույթի ու բարբարոսության, մարդասիրության ու մարդկային ատելության հակադրությունն է, որի շնորհիվ զուգահեռվում է անհատն ու ազգը, անհատի ճակատագրով ներկայացվում ժողովրդի պատմությունը: Մշակույթը ատելության դեմ լավագույն դեղամիջոցն է, արդարության, ճշմարտության հետ առերեսվելու և ատելությունից զերծազատվելու կռվանը: Համեմատությամբ մատնանշվում է, թե բարբարոսությունն ու բիրտ ատելությունը ծնվում են մշակույթի պակասից կամ, որ ավելի վատ է՝ բացակայությունից: Անգլադան ավելի է խորացնում հիշողության դերը՝ հաստատելով առհասարակ մշակույթի ու մասնավորապես գրականության միջոցով հիշողությունը փոխանցելու, արդարության ու ճշմարտության հասնելու կարողությունը: Վեպը շնչում է պոեզիայով ու հատկապես վարուժանական բանաստեղծությամբ, որովհետև արվեստը կարող է վշտի ու ցավի համար հակաթույն լինել: Բայց հիշողությունը մոռացության, ժխտողականության դեմ լավագույն զենքն է ու միջոցը հաստատելու-պահպանելու, վերջապես

առաջ շարժվելու-ապրելու: Չնայած հիշողության ցավին՝ անհրաժեշտ է խոսել այդ մասին անցյալը անէանալուց փրկելու ու ապաքինվելու նպատակով: Մարդկության դեմ իրագործված ոճիրների մասին յուրաքանչյուր ստեղծագործություն ևս մեկ անգամ հաստատում է իր դիրքորոշումը ընդդեմ ցեղասպանությունների, պատերազմների, մարդկային տառապանքի: Արամի համար ցավի տրամագիծն ավելի է լայնանում, երբ իմանում է հոր սահմռկեցուցիչ մահվան մասին թուրք կառապան Հասանի վկայությունից: Սրանից հետո Արամն արդեն չի արձանագրում ոչ մի տող՝ անավարտ թողնելով հուշատետրը: Առհասարակ հերոսի հիշողություններից ընտրողաբար վերցրած դրվագները չեն ապահովում պատումի գեղարվեստական ամբողջականության զգացումը, բայց հստակում են հերոսների թափառումների երթուղին: Արամը խուսափում է հիշողությունների հոսքից, որպեսզի չտառապի հարազատների բացակայության ու գուրգուրվելու կարոտից: Սա ընտանեկան պատմություն է (ընդ որում մակերեսային ու անավարտ պատումով, չնայած վերը նշվածը հաշվի առնելով ու Մարիկի <<ես ոչինչ մոռանալ չեմ ուզում: Ոչ էլ ներել: Բայց և չեմ ուզում նկարագրել գաղթի տառապանքները>>[3]: խոստովանությունը հաշվի առնելով՝ հոգեբանական լավագույն պատճառաբանվածությամբ), որ ընդմիջվում է համազգային ողբերգության հիշատակումներով: Գրողի համար էական է անդրտեքստային հոգեբանական ու համամարդկային հարցադրումների շղթան: <<Սահմանային իրադրության>> մեջ հայտնված ժողովրդի համար ճակատագրական է դառնում ընտրության ազատության հարցը (այս դեպքում արդեն ազգի համար) ու դժոխքի այդ ընդմեջին (երբ տարածվեց վայրագությունը) հերոսները բախվում են կյանքի ողջ դաժանությանը, ու կյանքն ընդմիշտ կորցնում է իր անմեղությունը, խարխլվում են աշխարհի հանդեպ մարդկային հավատի հիմքերը: Ապրած սարսափելի տեսարանների ու կրած սոսկալի տառապանքի բացած վերքը՝ իբրև անդառնալի դրոշմ դաջվում է նրա ու նրա սերունդների հոգում: Այլևս անհնար է ապրել այդ ցավի հետ, հիշողություններն ու ցավը կարծրանալով պատյանի են վերածվում, և անձը թաքնվում է՝ փորձելով ընդմիշտ լռել ու չխոսել այդ մասին (**այդ պատճառով նրանք ոչ թե խոսում, այլ գրում են եղեռնի մասին**- ընդգծումը մերն է ): Շատ դեպքերում ոչ թե պետք է շարունակել ապրել, այլ պետք է սովորել նորից ապրել՝ անկեղծանալով ու երկխոսելով սեփական անցյալի հետ: Այս ճանապարհին վեպի հերոսները հանդիպում ու ճանաչում են

---

[3] Նույն տեղում, էջ 71:

մարդկանց, որ նրանց կապացուցեն, թե կյանքն ընդունակ է նորից կյանք շնորհել, ու նրանք կհաղթահարեն մահն ու պարտությունը, որովհետև չմեռնելն արդեն հաղթանակ է:

Հակադրությունն ու զուգահեռումը դառնում են վեպի կերտման ու ասելիքի մատուցման գլխավոր ձևերն ու գրական հնարքները: Ցեղասպանությունը զուգահեռվում է դանթեական դժոխքի, իսկ տարագրությունը՝ ոդիսևսյան փորձություններին: Հստակվում է նաև չարիքը. հրեշն այլևս ոչ թե Կիկլոպի կամ <<խաբեպատիր>> սիրենների տեսքով է, այլ մարդու՝ իր նմանին սպանելու մոլուցքով ու դրանից բավականություն ստանալու <<կարողությամբ>>:

Վեպը ոչ հաստատում, ոչ էլ փորձում է ապացուցել ցեղասպանության գոյությունը, այլ պոեզիայի լեզվով ու բանաստեղծի ընդհանրական կերպարով պատմում է եղեռնի մասին՝ ընդդեմ եղեռնի <<խաղաղություն թող ըլլա>> ցանկության բանաձևումով:

Հեղինակի արձակի արժանիքը ոչ միայն հերոսների ճակատագրերի ու պատմական վավերագրերի զուգակցումով հետաքրքիր վեպի ծնունդն է ու ընթերցողին հայկական պոեզիայի դասական նմուշներին ծանոթացնելը, այլ Վարուժան բանաստեղծ-անհատի կերպարի ճշմարտացի ու խորքային պատկերումը: Անգլադյին հաջողվել է հասնել վարուժանական ոգու <<պաշտումով կը վերաբերվիմ կովողներուն հանդեպ>> թռիչքին ու նման գաղափարով կերտել Արամին (Վահե-Վարուժանի տղային), ով գերադասում էր թուրք դահիճների դեմ մարտնչել ու զենքը ձեռքին զոհվել, ու որի համար ազատագրական մաքառումը նաև անցյալի ստվերներից ազատվելու և կյանքի շարունակականության երաշխիք էին: Ինքնապաշտպանական մարտերի մասին գրողական դիրքորոշումը վեպի կարևոր ձեռքբերումներից է, գաղափարական ձեռքբերումներից: Անգլադան պաշտպանում է վարուժանական պայքարի գաղափարը, որի միջոցով մեծանուն գրողը պայքարի էր կոչում հանուն արդարության ու ազատության, առաջադրում սեփական փրկության ու ազգի պաշտպանության համար կազմակերպվող դիմադրության գաղափարը: Սա նախ և առաջ գրողի դիրքորոշումն է. Նազարյանցի բանաստեղծության առաջ բերած <<հայերը մորթվեցին ոչխարների պես>> համեմատությանը գրողը հակադրվում է հայ վրիժառուների, իսկ ավելի ուշ Միսաք Մանուշյանի ու Լուիզ Ասլանյանի նման հերոսների ազատատենչ ոգով, <<ովքեր որոշել էին պայքարել իրենց հայրենիքի ազատության համար>> ու նրանց դեմ, ովքեր <<ցանկացան շրջել պատմությունը՝ միանշանակ

հայտարարելով, թե ցեղասպանություն տեղի չի ունեցել>>[4]: Վերջաբանում խոսելով այսպիսի հերոսական կերպարների մասին, ովքեր պայքարել էին արդարության ու մարդկային արժանապատվության համար, զոհել սեփական կյանքը հանուն այս գաղափարների, գրողն իր դրական վերաբերմունքով ու հիացմունքով վերջակետում է վեպը՝ հաստատելով, որ գրականության մեծագույն առաքելությունը մարդկության բարձրագույն արժեքների պաշտպանությունն է:

Գրականություն

1. Անգլադա Ա. Մ., Արամի հուշատետրը, Երևան, ԱՕԿԱ, 2008, 150 էջ:
2. Սյուրմեյան Լ. Զ., Արձակի տեխնիկա. Չափ և խենթություն, Երևան, 2008, 333 էջ:

Ս. Կարապետյան

**Հայոց ցեղասպանության գեղարվեստական կերպավորումը Մարիա Անխելս Անգլադայի «Արամի հուշատետրը» վեպում**

**Ամփոփում**

Հոդվածը նվիրված է կատալոնացի գրող Մարիա Անխելս Անգլադայի «Արամի հուշատետրը» վեպին, որով հեղինակը անդրադարձ է կատարել հայոց ցեղասպանությանը: Վեպում պատմվում է եղեռնի ժամանակ մի հայ ընտանիքի տարագրության պատմությունը, որը ներկայացվում է տասնհինգամյա տղայի ու նրա մոր հուշատետրի միջոցով: Անգլադան մշակույթի լեզվով քողազերծել է Մեծ Եղեռնի ողջ հակամարդկային ու հակամշակութային բնույթը:

С. Карапетян

**Художественное изображение армянского геноцида в романе Марии Анхелс Англади <<Дневник Арама>>**

**Резюме**

Статья посвящена роману каталонской писательнице Марии Анхелс Англады <<Дневник воспоминаний Арама>>, в котором автор обтразился к армянскому геноциду. В романе рассказывается о хронологии одной армянской семьи, что представляется посредством воспоминаний во время геноцида пятнадцатилетнего мальчика и его

[4] Նույն տեղում, էջ 142:

матери. Англада с языком искусства разоблачала бесчеловечный и противокультурный характер армянского геноцида.

**S. Karapetyan**

**The art projection of the Armenian Genocide in Maria Ankhels Anglada 's novel "Aram's notebook"**

**Summary**

The article is devoted to the novel "Aram's notebook" written by Catalonian writer Maria Ankhels Anglada. With this novel the writer reflected the Armenian Genocide. It is told about an Armenian family's elimination during the Genocide, which is presented in a form of notes of fifteen years old boy and his mother. Anglada with the help of art language exposes all anti-human and anti - cultural nature of Great Genocide.

ԷՄՄԱ ՆԻԿՈՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի հայցորդ

ՀՏԴ 821.19.0

# Ս. ԱՅՎԱԶՅԱՆԻ ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐԸ

**Բանալի բառեր**. մանրապատումներ, արձակ, բնություն, հայրենիք, սեր, կարոտ:

**Ключевые слова:** рассказы, проза, природа, родина, любовь, ностальгия.

**Key words:** short stories, prose, nature, fatherland, love, nostalgia.

Ս.Այվազյանի փոքր արձակի քնարական երակը լիարյուն կերպով տրոփում է նաև «Գարունս ձյուների տակ» (1972) խորագրով ժողովածուում:

Թեմատիկ առումով բազմազան են հեղինակի մանրաքանդակները, որոնք ամփոփված են «Կյանքի հմայքը», «Գարունս ձյուների տակ», «Ինքս ինձ հետ» շարքերում:

Կենսաթրթիռ լիցքերով, վառ ու թանձր գույների վարպետորեն գտնված համադրություններով ու հակադրություններով, անցավորի ու մնայունի վերաբերյալ փիլիսոփայական խորհրդածություններով, առաջին սիրո ջերմ թրթիռներով, հասունության շրջանի զգացմունքների տաք բռնկումներով են լեցուն Ս.Այվազյանի մանրապատումները:

«Գարունս ձյուների տակ» շարքի մանրապատումները քնարական ու խոհափիլիսոփայական խորհրդածություններ են մարդու էության, անհատի ինքնաքննության, գեղեցիկի, բարոյական անանց արժեքների՝ հայրենիքի ու հայրենասիրության, երջանկության, փոխադարձ ու մերժված սիրո, պատվի ու պատվախնդրության վերաբերյալ:

Ս.Այվազյանի «խորաթափանց հայացքը միշտ ուղղված էր իր արմատներին, հայրենիքը միշտ ուղղված էր նրա հոգու մեջ՝ ինչպես անանց կարոտ, սուրբ մասունք»[1]: Ուխտավորի երկյուղածությամբ է Կավարտցի Գալուստը այցելության գնում Օշական՝ սուրբ Մաշտոցի գերեզմանին: «Չարչարանքների մեջ սփոփվելով՝ հողագործ Գալուստը՝ «որդին Մկրտչի», հասնում է Օշական՝ ծնկաչոք աղոթելու այն «մարդու գերեզմանին, ով վառվեց, հանգավ և լույս դառավ հայոց աշխարհին», լույս տվեց մեզ, որ մենք միշտ լինենք, տեսնենք ու մեզ տեսնեն: Թշնամիներ շատ ունենք մենք, ու

[1] «Հայագիտական հանդես», № 11 (15), 2011, էջ 43

քանի դեռ կան, սրով ու գրով ենք ապրելու, հետո միայն գրով («Ուխտ և երդում»):

Լայն ու խորն է հայի հոգին՝ թեպետ լցված է կորուստների ցավով, երախտապարտ է հայը: Ալեքսանդրիայի փողոցներում զբոսաշրջիկ հայը հիշում է եղեռնի օրերին իր նախնիներին ապրաստան տված արաբներին ու սիրով է լցվում իրեն շրջապատած սիրունատես, բոկոտն ու կիսամերկ երեխաների հանդեպ: «Նայում եմ ձեզ, ինչպես իմ անցյալին և ասում եմ. «Էսսալամ ալեյքում, իմ փոքրիկ բարեկամներ...» («Էսսալամ ալեյքում»):

Հայրենիքի կարոտ կա աշխարհասփյուռ հայերի աչքերում, կորուսյալ եզերքի կարոտ, որ «հայաբառ կբարբառի». «Հայաստանե՞ն եկած ես բեր պագնեմ բերանդ, աչքերդ,- ու պառավն ահով շուրջն է նայում,- հոս հայ ըլլալը հանցավոր ըլլալ կնկատվի: Թույլ չեն տա Հայաստանեն եկած հայերու հետ խոսիլ...»: Պառավը հայացքով Բոսֆորի մյուս ափն է ցույց տալիս, ուր Սկյուտարի գերեզմանատունն է. «Հոն ամփոփված են իմ հարազատներուս ոսկորները... Ամեն արևամուտեն առաջ հոս կուգամ, կնայեմ գրերուն և Սկյուտարում ամփոփված իմ մերձավորներու բերանով կանիծեմ եղեռնը, եղեռնագործներուն... Կըսեն Երևանում Քուռկիկ-Ջալալիի ոտքերի տակ շուռ եկած է համբերության բաժակը, և օր ու գիշեր ջուր կըհոսի: Ճի՞շտ կըսեն, որ կհոսի... («Բեր պագնեմ աչքերդ»):

Ստամբուլի փողոցներում ու վաճառատներում խաբում են զբոսաշրջիկներին, իսկ մոլլան հավատացյալի ջերմեռանդությամբ «ազան» է կանչում, մի ծերունի «գովում է Աբդուլ Համիդի պատկերով նամականիշը որպես ունիկում և ուզում է խոթել ափս... Ես հեռացնում եմ ձեռքս ինչպես օձից...» («Ստամբուլում շոգ է»):

Ալեքսանդրիայի արմավենիների մի կանաչ պուրակում՝ Կահիրեի հայոց գերեզմանատանը, հանգչում է Պողոս-Նուբար փաշան. «Աստ հանգչի մարմինը լուսահոգի Յուղաբեր Չմշկյանի, ով զաղթել է Սեբաստիայից՝ գաղթի ճանապարհին թողնելով ութ որդուն՝ հիշատակ միակ որդուց, Արմենակ Եկարյան՝ Վանի ինքնապաշտպանության հերոս... Եվ հետո իրար կողքի Արփիար Արփիարյան, դերասանուհի Սիրանույշ, Երվանդ Օտյան... Հասկանալի է....

- Բայց մի՞թե հասկանալի է,- ասես բողոքում են բոլոր քարերը:- Հայը կարող է զինվոր լինել, կռվել հայրենիքի համար և ընկնել օտար հողում, ինչպես իսպանացին, ինչպես բուլղարացին, լեհը կամ հույնը: Հայը կարող է տարագիր լինել, ինչպես մարդն ամեն մի փոքրացած ազգի: Բայց կա՞ն թաղված մի այլ ժողովրդի հոգևոր մշակները մի ուրիշ հողում:

- Չկա՜ն,- ասես հողի տակից լսվում է Սիրանույշի ձայնը՝ թրջված արցունքով...»[2] («Հայոց գերեզմանատունը»):

Հայրենական տան, անցած գնացած օրերի ու մանկության կարոտ կա շարքի մանրապատումներում: Հիշողության արահետները տանում են հայրենի գյուղ, ուր հինավուրց թթենու տակ մայրը սպասում է որդուն, ու նրա ձեռքերն առաջվա պես փաղաքշում, լռությամբ խորհուրդներ են տալիս, անցած օրերն են հիշեցնում՝ որպես մեծ ու դժվարին պատմություն»: Ահա հայրական տան ճանապարհը՝ ոլոր-մոլոր, եղինջի թփերով պատված... Քանի՜-քանիսն են այդ ճանապարհով գնացել ու հետ չեն եկել... Քանի-քանի այդպիսի ճանապարհներ են դուրս գալիս գյուղից, խառնվում մեծ քաղաքներ տանող մայրուղիներին: Հիմա դրանք նաև տունդարձի ճանապարհներ են, մայրական վշտերը փարատելու, հայրական տան կարոտն առնելու, հայրենի հողի բույրերով արբենալու Ճանապարհներ. «Ես որդու սիրով եմ սիրել այս հողը և դրա հմայքով եմ զգացել հմայքը մի պատառ հողի ու ամբողջ աշխարհի: Ես ծնվել եմ այդ հողից և դառնալով մի բուռ հող, կուզեմ խառնվել այդ հողին, որ չպակասի դրանից մի բուռ հողն աշխարհում»[3] («Կտակ»): Ինչպես մեծ հայրենապաշտ Ա.Բակունցի, այնպես էլ Ս.Այվազյանի համար հայրենի հողը «և՛ կեցության անփոխարինելի աղբյուր է, և՛ զգացմունքների բյուրեղացման ճանապարհ», և՛ բարոյական արժեքների զարգացման հենարան»[4]:

Հարյուր տասնիննամյա մաճկալ Վարդազարին ևս տասը տարվա կյանք են ցանկանում բարեկամները, ու մաճկալը սրտնեղում է. «Բա ապրելու համար էլ ժամանակ կնշանակե՞ն: Տասը տարին ի՞նչ է որ...» («Կյանքի հմայքը»): Մահվան մահճում անգամ Վարդազարը մտովի գարունը բացվելուն պես բարձրանում է լեռները, զգում նոր շուռ տված հողի, խոտարմատների խառը բույրը, ու երջանկությունից փայլում են աչքերը: Մանուշակ մայրիկը ստանում է որդու սև թուղթը, բայց չի հավատում նրա զոհվելու լուրին. «Կարող է դեռ թշնամու արթուն աչք կա մեր վրա, դրա համար էլ չի վերադառնում մոր մոտ, որ հետո ուրիշ մայրեր չկսկծան» («Մայրը սպասում է»): Աբգար պապը չի պատսպարվում հորդառատ անձրևից և թրջվում է մինչև ոսկորները. «Թող մրսեմ, հապա ինչպե՞ս պիտի իմանամ, որ ծարավ ծիլն արդեն կշտացավ ջրից» («Անձրևը»): Մայրը տեսնում է որդու հասունանալը, աչքերը լցվում են արցունքի

[2] Այվազյան Ս., «Գարունս ձյուներ տակ», Երևան, 1972, էջ 37:
[3] Նույն տեղում, էջ 45:
[4] Աղաբաբյան Ս., Հայ սովետական գրականության պատմություն, h. 1, էջ 471:

կաթիլներով, ու նրա ժպիտն ասում է. «Մոր արցունքները երբեք չեն ցամաքում» («Մայրս»):

Սիրո ջերմ խոստովանություններ, մերժվածության ցավ ու կսկիծներ կան Ս.Այվազյանի մանրապատումներում. «Դու որ ինձ չմերժեիր, ես ինչպե՞ս պիտի իմանայի, որ արցունքը սրտից է բխում, ոչ աչքերից, ինչպե՞ս պետք է իմանայի, որ մերժումն ուժ է դառնում.... Ես քո կրակով եմ դիմացել կրակներին...» («Դու որ ինձ չմերժեիր»):

Մերժված սերն ավելի է ազնվացնում ու մաքրում հոգին, տանում մանկության ձորերը, ուր սիրահարներն աղավնիների պես պատսպարվում էին թև-թևի տված՝ իրար շունչ շնչելով: Մերժումն ավելի է բորբոքում սիրող սրտի կրակը. «Ա՜խ, դու չգիտեիր, թե ինչ է անում կրակը փակվածության մեջ»: Մերժված սերը երբեք չի մոռացվում. «Դու հեռացար ինձնից, բայց դարձար ինձ համար դարձի ճամփա, օջախի ծուխ դարձար՝ ելնող հայրենական երդիկից: Դու ինձ ետ կանչող ձեռք դարձար բոլոր ափերից»:

Սիրով է սկիզբ առել աշխարհը և սերն է իշխելու աշխարհում: Եվ ինչքան հեռու են սիրող սրտերը, այնքան խորն է կարոտը. «Երբեմն հեռանում եմ քեզնից, որ ավելի շատ կարոտեմ քեզ, որ հեռվից տեսնեմ քեզ, որ լրիվ տեսնեմ: Երբեմն հեռանում եմ քեզնից, որ տարածություն լինի մեր մեջ, որ վերադարձի ճանապարհ լինի... Հեռանում եմ, որ նյութեղեն չլինես, այլ երազ դառնաս, տենչ, ձգտում ու իղձ... Հեռանում եմ, որ ավելի մոտ լինեմ քեզ... («Երբեմն հեռանում եմ»):

Գրողի փիլիսոփայական խորհրդածություններն ամփոփված են «Ինքս ինձ հետ» շարքում: Նա պեղում է իր ներաշխարհը, բացվում ընթերցողի առջև, ու ընթերցողի համար բացահայտվում է, թե որտեղից են բխում գրողի պատմվածքների անսահման բարությունն ու կենսասիրությունը. «Իմ ապրած ձմեռների մեջ այս ձմեռն ավելի ցրտաշունչ էր: Այս ձմռանը ես ավելի շատ եմ մտորում գարունների մասին և անցած ձմեռների աղմկոտ ձնհալների: Արևն իմ աչքին առաջվա փայլը չունի, և ես դրա համար խղճում եմ նրան: Ես ամբողջությամբ խիղճ եմ դարձել և անխիղճ բաներ փնտրելով իմ արարքների մեջ, տանջվում եմ»[5]:

Գրողի մտասևեռումները պտտվում են երկնայինի ու տիեզերականի ոլորտներում, նա հավիտենության ձայնն է լսում ակնթարթի տրոփյունի մեջ («Ակնթարթի մեջ մահ կա և կյանք. սթափվիր սիրելիս և ըմբռնիր ակնթարթի էությունը»):

---

[5] Այվազյան Ս., Գարունս ձյուների տակ, Երևան, 1972, էջ 83:

Բազմաթիվ «ինչուների» պատասխանն է փորձում գտնել գրողը և ուրախ է, որ չի գտնում, որովհետև կյանքը կդառնա անիմաստ ու անհետաքրքիր. «Փնտրումների մեջ է իմ անդորրը»: Նրա հոգում «աստվածներ են ապրում, և ինքը հարատև ու հաճելի վիճաբանությունների մեջ է նրանց հետ», և «այն աստվածը, որ բացահայտվում է, մեռնում է իմ մեջ»:

**Էմմա Նիկոյան**

**Ս.Այվազյանի մանրապատումները**

**Ամփոփում**

Ս.Այվազյանը փոքր կտավի ստեղծագործությունների մեծ վարպետ է: Նրա մանրապատումները քնարական հուզիչ պատմություններ են մարդու և բնության, սիրո, հայրենիքի, անցավորի և մնայունի մասին:

Հեղինակն իր մանրապատումներում ավետում է բարության ու լույսի խորհուրդը, շարունակում բնական մարդու իր որոնումները:

**Эмма Никоян**

**Миниатюры С. Айвазяна**

**Резюме**

С. Айвазян – мастер миниатюрных произведений. Его миниатюры – трогательные лирические рассказы о человеке и природе, о любви, родине, о преходящем и вечном.

В своих миниатюрах автор описывал жизнь простых людей, исповедуя завет света и добра.

Emma Nikoyan

Miniatures by S.Ayvazyan

Summary

S.Ayvazyan is a great master of small canvases. His miniatures are touching lyrical stories about the human and nature, love, motherland, fleeting and lasting matters. In his miniatures the author heralds the kindness and the light and pursues his search of the natural man

**ՔՐԻՍՏԻՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի հայցորդ
ՀՏԴ 821.19.09

# ԳԵՎՈՐԳ ԷՄԻՆԻ ՊՈԵԶԻԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

**Բանալի բառեր և արտահայտություններ.** Գ.Էմին, բանաստեղծություններ, քննադատություն, առաջին ժողովածուներ

**Ключевые слова и выражения**: Г. Эмин, стихотворения, критика, первые сборники.

**Key words and phrases**: G. Emin, poems, criticism, first collections.

Գեղարվեստական զարգացման ընթացքը պայմանավորված է <<հասարակական-քաղաքական, բարոյաէթիկական, փիլիսոփայական ու հոգեբանական բազմաթիվ գործոններով, և այդ ընթացքի ընդհանուր դիմապատկերն ամբողջացնում են ժամանակաշրջանի բոլոր գրողները, սակայն զարգացման հիմնական ուղղություններն ու օրինաչափությունները դրսևորվում են առանձին անհատականությունների ստեղծագործություններում>>[1]:

Այս առումով դժվար է գերագնահատել Գ. Էմինի դերը, ով մոտ կես դար, գտնելով գրական կյանքի հորձանուտում ու ակտիվորեն մասնակցելով գրականության ամենատարբեր հարցերին նվիրված բանավեճերին ու քննարկումներին, ունեցել է մակընթացությունների ու տեղատվությունների շրջաններ, արժանացել քննադատության և դրվատանքին, և՛ հարվածներին:

Գ. Էմինը գրականություն եկավ 1940-ականներին, երբ գրական շուկան հեղեղված էր քաղաքական ձոներով ու ներբողներով և իբրև դրանց հակազդեցություն՝ աշուղական <<նեյնիմներով>>, ինչը, ինչպես նկատում է Պ. Սևակը, <<ավելի վտանգավոր երևույթ էր և նույնպես չէր կարող առնչություն ունենալ իսկական գրականության հետ>>: 1940-ականներին Գ. Էմինը հրատարակեց <<Նախաշավիղ>> (1940), <<Նոր ճանապարհ>> (1949) ժողովածուները:

Բանաստեղծությունների առաջին ժողովածուն նոր ու թարմ շունչ էր ժամանակի գրական գորշ մթնոլորտում, և, բնականաբար, երիտասարդ բանաստեղծի ձայնը չէր կարող հաճո լինել <<աղմուկի, ծափի>> սովոր շատ քննադատների լռությանը: Արձագանքները չուշացան. բանաստեղծի առաջին գործերն արժևորվեցին ժամանակի գաղափարախոսության լույսի ներքո, բնութագրվեցին որպես յուրահատուկ <<կոնգլոմերանտ հաջող և

անհաջող, հավակնոտ բանաստեղծությունների>>[2], <<Ոչ սովետական գաղափարազուրկ, ճղճիմ և սովետական գաղափարախոսությանը միանգամայն խորթ պոեզիա>>, <<հորդ և ջրալի>>[3] վիժում, <<մանր բուրժուական, անարխիստական գաղափախոսությամբ ներթափանցված>>[4] երգերի հավաքածու:

Ի տարբերություն քաղաքականացված այս կարծիքների՝ հնչեցին բանաստեղծի հետագա գործունեության համար խիստ ոգևորիչ խոսքեր: Գ. Էմին մուտքը ողջունեցին Ստ. Զորյանը, Դ. Դեմիրճյանը, Զ. Դարյանը:

<<Նախաշավիղի>> մասին գրախոսականում Ստ. Զորյանը գրում է <<Առաջին բանը, որ աչքի է ընկնում երիտասարդ հեղինակի մոտ-դա այն ուրախալի թարմությունն ու զվարճությունն է, որ այնպես պակասում է մեր շատ պոետների, որոնք երբեմն ուրախ ու զվարթ երևալու համար դիմում են ճիգի և արհեստականության, և բնականաբար չեն համակում ընթերցողին: Մինչդեռ մեր սկսնակ հեղինակը իր ուրախ տրամադրությամբ տալիս է համոզիչ, զվարթ մի հումորով համակված>>[5]:

Անվանի արձակագիրը երիտասարդ բանաստեղծի առաջին գրքում արդեն տեսնում է <<խոսքի և արվեստի>> ըմբռնում, <<անիմաստ տողերի ու պատկերների կուտակման, մանավանդ՝ պոեզիային մեծապես վնասող հռետորության>>[6] բացակայություն:

Իսկ Դ. Դեմիրճյանը <<Նոր ճանապարհ>> ժողովածուի գրախոսականում իբրև գլխավոր հատկանիշ տեսնում է բանաստեղծի <<հակումն ու ընդունակությունը մեր արդիական իրականությունը և նրա բոլոր երևույթները տեսնել իրենց ներքին իմաստով, իմաստավորել իրականությունը, գտնել նրա առաջընթացի շարժիչ ուժերը, ըմբռնել ամեն մի խոշոր կամ <<չնչին>> իրի, անցքի, գործի պատմականորեն պայմանավորվածությունը>>[7] բանաստեղծն ունի աշխարհաճանաչողության իր տեսանկյունը, ինչը <<նրան դրդում է խուզարկու հայացքը ոչ թե սահեցնելով անցնել կյանքի իրականության վրայով, այլ կանգ առնել և տեսնել, խորհել, հասկանալ... Սա պոետի ներքին հոգեկան աշխարհի պատկերավոր փիլիսոփայությունն է՝ էմոցիոնալ շնչով ջերմացած ու կենդանացած>>[8]:

Հետագա տասնամյակներում, հատկապես անհատի պաշտամունքի հաղթահարումից հետո, երբ հասարակական-քաղաքական մթնոլորտի վերակենդանացնող շունչը ներթափանցեց նաև գրականության, ու գեղարվեստական զարգացումները մտան առաջընթացի նոր հուն, փոխվեց նաև քննադատության վերաբերմունքը Գ. Էմինի ու նրա սերնդի բանաստեղծների նկատմամբ:

Գրականագետների նոր սերունդը (Ս. Աղաբաբյան, Հր. Թամրազյան, Ս.Սարինյան) առաջադրեց արժևորման նոր մոտեցումներ,

գեղարվեստական ստեղծագործության վերլուծության նոր եղանակներ ու մեթոդներ: Խոսելով 1950-ականների երկրորդ կեսի՝ «Ձնհալի» տարիների բանաստեղծական նվաճումների մասին՝ Ս. Սարինյանը գրում է. <<Մեր նվաճումներն, իհարկե, քանակի մեջ չէ, մեր պոեզիան հասել է նաև լուրջ հաջողությունների գաղափարական ու գեղարվեստական տեսակետից: Այժմ արդեն կարելի է ասել, որ հիմնականում հաղթահարվել են կեղծ հռետորաբանությունը և մեծացել է պոեզիայի էմոցիոնալ-լիրիկականությունը, նկատելի արդյունքի է հասել մեր պոեզիան բանաստեղծական տեխնիկայի կատարելության իմաստով>>: Նա միաժամանակ նշում է, «Սակայն մեր պոեզիան չի հասել այն գերագույն նպատակին, որն իսկական ժողովրդային գրականության իմաստն է՝ շեշտված արդիականության և մեծ բովանդակության»[9]:

20-րդ դարի արվեստի հիմնական առանձնահատկությունը անվանի գրականագետ պայմանավորում է <<փիլիսոփայական, հասարակական և հոգեբանական գործոններով, արվեստագետի աշխարհըմբռնմամբ>>: Ուշագրավ են Գ. Մահարու դիտարկումները. <<Պոեզիայի դռներից ներս է մտնում նոր, իսկական պոետների մի պլեադա, որին վիճակված է դառնալ սովետահայ պոեզիայի առաջատար գումարտակը: Դրանից մեկն է պոետական վառ անհատականությամբ օժտված Գ. Էմինը>>[10]:

Անվանի բանաստեղծը հատկապես ուշադրություն է հրավիրում Գ. Էմինի բանաստեղծական վարպետությանը և լեզվական բարձր կուլտուրային. «Իր լեզվական կառուցվածքով և հանգերի ու վանկերի հնարքներով մեր բանաստեղծն ամենաինքնատիպ շարունակողներից է տերյան-չարենցյան տրադիցիաների: Սակայն Էմինը գերի չի մնում այդ տրադիցիաներին: Չհասնելով հանդերձ նրանց դասական մակարդակին՝ նա ստեղծում է մի նոր սեփական պոետական տնտեսության, առանց որի նա Էմին չէր լինի»[11]:

«Էմինին բնորոշ էր զննողական տարերքը, մտքերի աֆրիզմային խտացումը»[11]:

## Օգտագործված գրականություն


1. Գիլավյան Մ, Պոեզիան և ժամանակը, Երևան <<Հայաստան>>, 1990, էջ 3:
2. Վարդազարյան Ռ, Անհիմն հավակնություն, <<Գրական թերթ>>, 1946, 31 օգոստոսի:
3. Բաքայան Ա, Գաղափարազուրկ լիրիկայի և գրական մեծամտության մասին, <<Գրական թերթ>>, 1946, 6 սեպտեմբերի:

4. Գրիգորյան Ա, Ընդդեմ քաղքենիության գաղափարախեղաթյուրումների, <<Սովետական Հայաստան>>, 1946, 8 սեպտեմբերի:
5. Զորյան Ստ, <<Նախաշավիղ>>, <<Սովետական գրականություն և արվեստ>>, 1946, №1, էջ 96:
6. Նույն տեղում:
7. Դեմիրճյան Դ, Գ. Էմինի <<Նոր ճանապարհ>> գիրքը, Երկերի ժողովածու, հ 13, Երևան, 1982, էջ 60:
8. Նույն տեղում:
9. Սարինյան Ս, Պոեզիայի մեծ բովանդակության համար, <<Գրական թերթ>>, 1958, 30 սեպտեմբերի:
10. Մահարի Գ, Գրական նամականի, <<Գրական թերթ>>, 1959, 20 մարտի:
11. Նույն տեղում:



**Ք. Համբարձումյան**

**Գևորգ Էմինի պոեզիան քննադատության գնահատմամբ**

**Ամփոփում**

Սկսած 1940-ական թվականներից՝ Գ. Էմինի բանաստեղծությունները գտնվել են քննադատության ուշադրության կենտրոնում: Նրա առաջին ժողովածուներում 40-ականների քաղաքականացված քննադատությանը որակեց որպես խորհրդային մտածողությունը խորթ երևույթներ: Հետագա տասնամյակներում (1950-90-ական թթ.) Գ. Էմինի ստեղծագործությունը գնահատեց ըստ արժանվույն:



**К. Амбарцумян**

**Творчество Г. Эмина в критической оценке**

**Резюме**

Начиная с 1940-х годов, стихотворения Г. Эмина находились в центре критики. Его первые сборники подвергались политизированной критике 40-х годов, свойственной советскому мышлению. В последующие десятилетия (1950- 1990-е) творчество Г. Эмина получило должную критику.

Chr. Hambartzumyan

**Gevorg Emin's creative work in the critical appreciation**

**Summary**

Since 1940-s Gevorg Emin's poems were in the centre of criticism. His first collections were criticized by typical politicized soviet criticism of 1940-s. In the following decades (1950- 1990-s) the creation of Gevorg Emin underwent the appropriate criticism.

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնիպրոֆեսոր
Բանասիրական գիտությունների դոկտոր
ԳԱՅԱՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ
Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ հայոց լեզվի և
նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ

ՀՏԴ 37.091.3:811

# ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԲԱԶՄԻՄԱՍՏ ԲԱՌԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

**Բանալի բառեր և արտահայտություններ.** բազմիմաստ գոյականներ, անձնանիշ, իրանիշ, թեմատիկ խումբ, մեթոդ, պրոբլեմային, մակածման, փոխներգործուն, վարժությունների համալիր:

**Ключевые слова и выражения**: полисемичные существительные, персональные, объектные существительные, смысловая группа, проблемно-поисковый, кейс-стадии, индуктивный, интерактивный, комплекс упражнений.

**Key words and phrases:** polysemantic nouns, personal // things noun, thematic group, method, problematic, induction, interactive, a complex of exercises.

Գոյականական բազմիմաստ բառերի ուսուցման նպատակը սովորողների լեզվաբանական և հաղորդակցական կոմպետենցիաների ձևավորումն է: Այս թեմատիկ միավորի ուսուցման ընթացքում լուծվում են ճանաչողական, իմացական, գործնական և միջառարկայական մի շարք խնդիրներ: Ուսումնական այս կարևորագույն խնդիրների իրականացումը պայմանավորված է ուսուցման մեթոդների և տեխնոլոգիաների ճիշտ ընտրությամբ:

Ժամանկակակից մանկավարժական-մեթոդական գրականության մեջ առկա են «մեթոդիկա» հասկացության տարբեր ըմբռնումներ: Մեթոդիստների մեծ մասը մեթոդիկան համարում է ուսուցման բովանդակության, հնարների, մեթոդների, միջոցների և տեխնոլոգիաների ամբողջություն, մեկ այլ խումբ (Մ.Մ.Մկրտչյան և ուրիշներ) կարծում է, որ մեթոդիկան չի կարելի նույնացնել տեխնոլոգիայի հետ, կամ մեթոդիկան չի ներառում տեխնոլոգիաների ամբողջությունը:

Ա.Ն.Իոֆֆեն նշում է. «Մեթոդիկան մեթոդի իրականացման տեխնոլոգիական հնար է ուսումնասիրվող օբյեկտի վերաբերյալ գիտելիքների ճշտման նպատակով կամ մեթոդի մարմնավորումն է»[1]:

Մեր կարծիքով, այս տեսանկյունից առարկայի դասավանդման մեթոդիկայի իմաստային և բովանդակային սահմանման ճշգրտումը զարգացման նոր հեռանկարներ է բացում հայոց լեզվի ուսուցման մեթոդիկայի կատարելագործման համար: Մեր հետազոտության հիմնախնդրի համատեքստում այսօր էական նշանակություն ունի գոյականական բազմիմաստ բառերի ուսուցման մեթոդիկայի կատարելագործումը հիմնական դպրոցում, այն առումով, որ բառերի ներբառութային իմաստային հարաբերությունների տեսանկյունից կարևորվում են մենիմաստության և հատկապես բազմիմաստության ուսուցման հարցերը:

Մինչ գոյականների բազմիմաստության և նրա ուսուցման արդյունավետ մեթոդներին անդրադառնալը, քննարկենք՝ ինչ ասել է բառիմաստ ընդհանրապես:

Իմաստաբանությունն ուսումնասիրում է բառերի իմաստները, իմաստային խմբերը և բառիմաստային փոփոխությունների տեսակները: Ըստ որում, կարևոր է տարբերակել բառական և քերականական ¥հատկապես խոսքիմասային¤ իմաստներ հասկացությունները:

Լ.Մ.Խաչատրյանը նշում է. §Բառական իմաստները կարող են լինել՝մենիմաստ և բազմիմաստ, ուղղակի կամ փոխաբերական, կարող են ունենալ հոմանշային, հականշային և համանունական զույգեր, կարող են լինել վերացական կամ թանձրացական և այլն: Բառերի քերականական իմաստները պայմանավորված են նրանց բառական իմաստներով. դրանք վերացարկված իմաստներ են, որոնք լինում են ձևաբանական և շարահյուսական¦[2]:

Գոյականին հատուկ իմաստային խմբերի ու տեսակների դասակարգումը կարելի է կատարել ոչ միայն մենիմաստ, այլև զուտ բազմիմաստ բառերի շրջանակներում, որտեղ ըստ բառի իմաստային ճյուղավորումների կամ իմաստային բաշխման ի հայտ են գալիս մի շարք առանձնահատկություններ, իմաստային խմբեր և տեսակներ, խոսքամասային տարբեր արժեքներ, փոխաբերական իմաստներ, բազմիմաստություն, համանուն բառերի բազմիմաստություն, ինչպես նաև

---

[1] Иоффе А.Н. Целеполагание в преподавании истории и обществознания // Преподавание истории в школе. - 2014. - № 5. - С. 5.

[2] Լ.Մ.Խաչատրյան, Լեզվաբանության ներածություն, Ե., 2008, էջ 138:

բազմիմաստ գոյականների միջբառութային իմաստային հարաբերություններ (հոմանիշություն, հականշություն և համանունություն¤ և այլն:

Վերոբերյալը վկայում է, որ և՛ քերականական, և՛ իմաստաբանական, և՛ խոսութային տեսանկյունից այս թեմայի ուսուցումը կարևոր դեր է խաղում սովորողների բառապաշարի հարստացման, խոսքի զարգացման, լեզվամշակութային կոմպետենցիաների զարգացման գործում:

Այս թեմայի ուսուցման նպատակն է առաջին հերթին գաղափար տալ նախադասության մեջ գոյականի՝ որպես խոսքի մասի քերականական դերի մասին, զարգացնել սովորողների՝ խոսքի մեջ մենիմաստ և բազմիաստ գոյականների ճիշտ օգտագործման, մտքերի ճիշտ արտահայտման կարողությունները:

Հայտնի է, որ կան բառեր, որոնք ունեն միայն մեկ իմաստ գիտաբառեր՝ ***աղաթթու***, ***մոլեկուլ***, բուսական և կենդանական աշխարհի անվանումներ՝ ***ղողո, արջամուկ***, բաղադրյալ բառեր՝ ***ուղղաթիռ, օդաչու,*** հապավումներ՝ ***ՄԱԿ, աշխղեկ*** և այլն:

Մեկից ավելի իմաստներ կամ իմաստային առումներ ունեցող բառերը կոչվում են բազմիմաստ: Ըստ որում, բազմիմաստ բառերի իմաստներից մեկը, որպես կանոն, համարվում է գլխավոր իմաստ, մյուսները կոչվում են երկրորդական: Բայց իմաստներն իրենց կարևորությամբ կարող են համարժեք լինել: Երկրորդական իմաստների շարքում կարող են լինել նաև բառերի փոխաբերական /այլ բառի իմաստով/ ու բանաստեղծական կիրառության դեպքեր: Փոխաբերական իմաստները միշտ երկրորդական են[3]:

Բազմիմաստ բառերի իմաստների միջև կա ընդհանուր տարր: Բազմիմաստ բառերի իմաստները միմյանց նկատմամբ անգամ հոմանիշ են համարվում: Եթե այդ միավորող ընդհանրությունը չլինի, բառի իմաստների անկախացում կկատարվի և բառերը կվերածվեն համանունների:

Յուրաքանչյուր բազմիմաստ բառ կիրարկության մեջ հանդես է գալիս իր իմաստներից միայն մեկով:

Ինչպես նշում է Է.Աղայանը, «Բառերի բազմիմաստությունը լեզվի բառապաշարի պատմական զարգացման անխուսափելի հետևանքն է, նրա կատարելագործման ու մշակման ցուցանիշը, իբրև լեզվի վիթխարի հարստություն և, դրա հետ միաժամանակ, լեզվի խնայողության չափանիշը»[4]:

---

[3] Նույն տեղում, էջ 140:

[4] Է.Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 336:

Ա.Ղարիբյանը ընդհանրապես բառագիտության ուսուցման մասին նշում է. «Բառագիտության ուսուցումը մեծ չափով կընդարձակի աշակերտի բառապաշարը և գիտակցական կդարձնի նրա վերաբերմունքը դեպի բառը: Բառագիտությունը հնարավորություն կտա աշակերտին հասկանալու բազմահազար անծանոթ բառեր, որ նրան բացատրելու հնրավորություն չունի ուսուցիչը»[5]:

Ավելացնենք, որ բազմահազար անծանոթ բառերի մեջ կարևոր ենք համարում նաև արդի հայերենի բազմիմաստ գոյականների մասին ոչ միայն գաղափար տալը, այլև հնարավորինս մեծ քանակությամբ բազմիմաստ գոյականների վերաբերյալ հիմնավոր գիտելիքների փոխանցումը սովորողներին:

Այս ամենի վերաբերյալ սովորողների ստացած գիտելիքներն անշուշտ կնպաստեն նրանց բառապաշարի հարստացմանը: Վերջինիս առումով առանձնանում է բազմիմաստ բառերի և ըստ իմաստի տարբերակվող բազմիմաստ գոյականների ուսուցման անհրաժեշտությունը:

Ինչպես գիտենք, գոյականի իմաստային տեսակներն են՝ հատուկ և հասարակ, անձնանիշ և իրանիշ: Անշուշտ, բազմիմաստ գոյականները գերազանցապես հասարակ անուններ են:

Բազմիմաստ գոյականների ուսուցումն այս առումներով մի շարք յուրահատկություններ է ցուցաբերում:

Այս թեմայի ուսուցման համար մենք առաջարկում ենք ուսումնական հետևյալ առաջադրանքերը՝

- Կազմեք 4-5 նախադասություն՝ օգտագործելով մենիմաստ և բազմիմաստ գոյականներ: Ցույց տվեք դրանց հոլովները:
- Փոփոխե՛ք նախադասության մեջ օգտագործված գոյականները՝ դրանք օգտագործելով տարբեր հոլովներով:
- Բերեք նախադասության մեջ օգտագործված մենիմաստ և բազմիմաստ գոյականների օրինակներ և դուրս գրեք դրանք, կատարեք նախադասության քերականական վերլուծություն:
- Գրե՛ք անձնանիշ և իրանիշ գոյականների օրինակներ, հոլովեք դրանք:
- Գրե՛ք փոքր շարադրություն՝ օգտագործելով մենիմաստ և բազմիմաստ անձնանիշ և իրանիշ գոյականներ:

---

[5] Ա.Ղարիբյան, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Ե., 1954, էջ 246:

Ուսումնական առաջադրանքների կատարմանը պետք է հաջորդի ստուգողական աշխատանքը հետևյալ ձևաբանական առաջադրանքների կատարմամբ.

- Հանձնարարել առաջադրանքներ՝
- ցույց տալ գոյականի համաձայնեցումը դերանվան և բայի հետ,
- որոշել բառերի բառական և քերականական նշանակությունը:
- Կատարել վարժություններ սովորողների բառապաշարի, քերականական գիտելիքների և հմտությունների ակտիվացման նպատակով:

Մեր փորձարարական աշխատանքների ընթացքում մենք փորձարկել ենք մասնավորաբար անձի և իրի քերականական կարգի ուսուցման առումով հետևյալ մոտեցումները.

Որոշակիորեն պետք է պարզաբանել և սահմանել հետևյալ հասկացությունները. 1.անձի անուն ¥անձնանիշ¤, իրի անուն ¥իրանիշ ¤, 2.անձի, իրի քերականական կարգ, 3. անձի առում, իրի առում, 4. անձնավորում:

Մեր կողմից քննարկվող գոյականական բազմիմաստ բառերի առումով կարևորվում են անձի անուն ¥անձնանիշ¤, իրի անուն ¥իրանիշ ¤ գոյականները, որոնց առանձնացումը լեզվում ունի կարևոր ճանաչողական նշանակություն, լեզվի ուսուցման գործընթացում այն կնպաստի սովորողների բառապաշարի հարստացմանը: Այս առումով կարելի է տարբերակել երեք տեսակի բազմիմաստ գոյականներ՝

ա. անձնանիշ գոյականներ

բ. իրանիշ գոյականներ

գ. ըստ իմաստային առումների՝թե՛ անձնանիշ, թե՛ իրանիշ գոյականներ, որոնք խոսքում անշուշտ հանդես են գալիս իմաստային դրսևորումներից միայն մեկով:

*Բազմիմաստ անձնանիշ գոյականների* ուսուցման ժամանակ ուսուցիչը կարող է օգտագործել ուսուցման *մակածման մեթոդը* և այդ ճանապարհով ներկայացնել բազմիմաստ գոյականների տեսակներն առանձին-առանձին:

Սովորողները արտածման մեթոդի կիրառման ընթացքում գտնում են գոյականների տեսակների միջև եղած օրինաչափությունները: Ուսուցիչը այս թեմայի ուսուցման ժամանակ վերլուծության հիման վրա կարող է կիրառել ուսուցման ժամանակակից փոխներգործուն մեթոդներ, օրինակ, *քեյս-ստադիի մեթոդը:*

Այս պարագայում նա հանձնարարում է կազմել աղյուսակ, որի մեջ սովորողները տեղադրում են գոյականի տեսակները և վերլուծում դրանց

իմաստային առումները, փոխաբերական նշանակությունները, այլաբանական իմաստով գործածությունը:

Ուսուցիչի՝ որպես ուսուցման գործընթացի սուբյեկտի հաջորդ քայլը այն է, որ նա թեմայի շրջանակներում ուսումնական խնդիր է առաջադրում՝ սահիկների միջոցով ներկայացնում բովանդակությունը. դասարանում ստեղծվում է խնդրահարույց իրավիճակ, որի լուծման համար սովորողները ուսումնասիրում են թեմայի վերաբերյալ նյութերը և պատասխանում են ուսումնական խնդրի հարցերին:

Այսպիսով, բազմիմաստ գոյականների էությունը, կառուցվածքն ու նշանակությունը բացահայտելուց հետո անհրաժեշտ է ընտրել դրանց ուսուցման մեթոդիկան: Մեր կարծիքով այդ գործընթացը պետք է իրականացնել ըստ որոշակի քայլաշարի: Որպեսզի ցույց տանք մենիմաստ և բազմիմաստ, իրանիշ և անձնանիշ գոյականների տարբերությունները աշակերտներին հանձնարարում ենք համեմատել, մակածել, արտածել, վերլուծել և ցուցադրել դրանք ըստ ստուգաշարի:

Հայտնի է, որ անձնանիշ են մարդկանց հատուկ և հասարակ անունները. սովորողները նշում են, որ հատուկ և հասարակ գոյականները պատասխանում են *ո±վ, ո±վքեր* հարցերին: Նրանք նշում են, որ այդ շարքում ուշագրավ են անձնանիշ հասարակ անունները, առավելապես նրանք, որոնք բազմիմաստ են և իրենց բոլոր իմաստներով էլ դասվում են անձնանիշ գոյականների շարքը:

Այդպիսի բազմիմաստ բառեր են՝

Սպասավոր- 1. տնային ծառա, 2. մատուցող,

վարձակ- 1. խնջույքներում պարող կին, 2. թեթևաբարո կին,

ամուրի- 1. դեռևս չամուսնացած տղամարդ, 2. տղամարդ, որի կինը մահացել է, 3. ամուսնաթող կին կամ մարդ,

գործակալ - 1. հանձնարարություն կատարող, 2. լրտես, դրածո,

խափշիկ - 1. սևամորթ, 2. հաբեշ,

կուսակալ - 1. նահանգապետ, 2. ծայրագավառի կառավարիչ,

համհարզ - 1. թիկնապահ, 2. հանձնակատար,

հոգաբարձու - 1. խնամակալ, 2. հնում՝ դպրոցի տնտեսական վիճակը հսկող,

հրեշտակ -1. գերբնական արարած, աստծու առաքյալ, մարգարե, 2. բարի՝ հեզ՝ անարատ՝ չքնաղ էակ,

մոգ - 1. զրադաշտական կրոնի քարոզիչ, 2. կախարդ, մարգարե,

մոնթ - 1. վանքի դպրոցի աշակերտ, 2. տիրացու,

պարետ - 1. ամրոցի՝ քաղաքի զորքերի պետ, 2. հասարակական շենքի հսկողության պետ,

է - 1. գոյություն ունեցողը, 2. Աստված, 3. Էակ,

որդի - 1. երեխա, զավակ, 2. արու զավակ,

պապ - 1. մեծ հայր, հոր հայր, 2. նախնի,

քարագործ -1. քարտաշ, 2. որմնադիր և այլն:

Ուսումնական գործընթացի առաջին խնդիրը լուծելուց հետո աշակերտներին բացատրում ենք, որ կան այնպիսի բազմիմաստ գոյականներ, որոնք իրենց երկրորդական իմաստային առումներից մեկը կամ մի քանիսը ձեռք են բերել *փոխաբերության* հետևանքով: Հարցերով պարզում ենք, որ առհասարակ բազմիմաստության հետ անմիջականորեն առնչվում է փոխաբերությունը: Վերջինիս միջոցով առարկաներն ու երևույթները արտահայտվում են ոչ ուղղակիորեն՝ հիմնվելով նրանց արտաքին կամ ներքին նմանության վրա:

Նորից հարցերի միջոցով պարզում ենք բազմիմաստ բառի իմաստային մեկ կամ մի քանի առումները՝ որոնք կարող են լինել հենց փոխաբերական նշանակությունները: Նշում ենք, որ Էդ.Աղայանը ներկայացնում է երեք կարգի փոխաբերություններ՝ ա) անհատական-ստեղծագործական կամ հեղինակային բ) գործուն պատկերավոր կամ ընդհանրական պատկերավոր, գ) ավարտուն կամ մարած: Ըստ հեղինակի, «Փոխաբերական գործածությունների այս երեք կարգերից և դրանցով բառերի ստացած փոխաբերական իմաստներից վերջինն իբրև բառին արդեն ամրացված իմաստ՝ անկախ փոխաբերությունից, բառարաններում տրվում է որպես բառի առանձին նշանակություն, երկրորդ կարգի՝ գործուն ընդհանուր փոխաբերություններով ստեղծվող իմաստները բերվում են իբրև փոխաբերական իմաստներ՝ փխբ./ փոխաբերական/ նշումով, իսկ անհատական կամ ստեղծագործական փոխաբերությունները, իբրև ընդհանուր կանոն, բառարաններում չեն արձանագրվում»[6]:

Կիրառելով *ուսուցման փոխներգործուն* մեթոդները՝ գոյականի յուրաքանչյուր իմաստային խմբի համար աշակերտներին հանձնարարում ենք բերել օրինակներ՝ նշելով նաև նրանց փոխաբերական իմաստները: Այսպես, օրինակ՝ հետևյալ բազմիմաստ բառերն անձնանիշ են համարվում նաև իրենց փոխաբերական իմաստների շնորհիվ՝

Կնքահայր -1. քավոր, 2. փխբ. պաշտպանող՝ հովանավորող անձ,

Երեխա – 1. մանուկ, 2. փխբ. անփորձ՝ միամիտ մարդ,

Գրչակ – 1. անտաղանդ գրող, 2. փխբ.ծախու գրող,

Մոհիկան - 1. անհետացած ցեղ, 2. փխբ. վերջին ներկայացուցիչ,

Հսկա -1. տիտան, 2. փխբ. որևէ բնագավառի մեծագույն ներկայացուցիչ և այլն:

---

[6] Էդ.Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 53:

Մեթոդական նպատակներով անձնանիշ գոյականներին հաջորդում է *բազմիմաստ իրանիշ գոյականների* ուսուցումը՝ ինչը մենք իրականացնում ենք՝ կիրառելով *պրոբլեմային- որոնողական մեթոդը:*

Սովորողներին առաջարկում ենք մի շարք բազմիմաստ գոյականներ, որոնք իրենց բոլոր իմաստներով դասվում են իրի անունների շարքը: Կարևոր ենք համարում նշել, որ բազմիմաստ գոյականների իմաստային այս դասակարգման շրջանակներում իրանիշ անունները համեմատաբար մեծամասնություն են կազմում ժամանակակից հայերենում: Սովորողներին հանձնարարում են դիտարկել գոյականները և դրանց դիմել որոշակի հարցերով: Ընդ որում սովորողներն արդեն գիտեն, որ իրանիշ գոյականները պատասխանում են *ի՞նչ, ի՞նչեր* հարցերին և անվանում են ընդհանրապես ոչ անձ ցույց տվող առարկաներ: Ահա այդպիսի օրինակներ:

Բազմիմաստ իրանիշ գոյականներ են՝

Վիպերգ- 1. հերոսավեպ, 2. քնարական ստեղծագործություն

Վիրապ-1. խոր փոս, 2. գետնափոր խուց

Տազնապ-1. խուճապ, իրարանցում, 2. վտանգի ազդական

Տարազ-1. հագուստի ընդունված ձև, 2. որևէ ազգային յուրահատուկ հագուստ՝ զգեստ, համազգեստ

Ագարակ-1. հողային կալվածք, 2. հողամաս՝ իր շինություններով, 3. անդաստան

Բալասան-1. բույսերից պատրաստված դեղ՝ բազզում, 2. սպեղանի, դարման,

Դարավանդ – 1. բարձր տեղ, բարձրունք, 2. գետի զառիվայր, ափ,

Ելուստ-1. դուրս ցցված մաս, 2. ոստ, ընձյուղ,

Թնջուկ-1. խճճված թել, 2. հանգույց,

Ծիր-1. հետք, հետագիծ, 2. ճանապարհ, շավիղ,

Հարգ-1. պատիվ ,2. արժեք, արժանիք,

Նշանաբան-1. պայմանական գաղտնի բառ, 2. գործունեության սկզբունք,

Չարիք-1. չարագործություն, 2. աղետ,

Պուրակ-1. ոչ մեծ անտառ, 2. այգի, զբոսայգի,

Ակնարկ-1. աչքով արված նշան, 2. հարևանցի նայվածք, 3. աննուղակի ասված խոսք, 4. համառոտ քննություն, տեսություն, նկարագրություն,

Բազուկ-1. թև, ձեռք՝ ուսից մինչև արմունկը, 2. գետի ճյուղավորում, 3. լեռնաշղթայի ճյուղ, 4. աթոռի արմնկակալ,

Պարեն-1. սննդամթերք 2. օրապահիկ, 3. մթերքների պաշար,

Դաս-1. Դասաժամ, 2. ուսումնական պարապմունք, 3. խրատ,

Հարված-1. բախյուն, 2. զարկ, 3. կործանարար գործողություն պատերազմի ժամանակ, 4. չարչարանք, տանջանք, 5. աղետ, չարիք, 6. բարոյական՝ հոգեկան դժբախտություն, 7. երկրաշարժի հերթական ցնցում,
Կտոր-1. կտորեղեն 2. լաթ, շոր, 3. մի բանի կտրված մասը և այլն:

Ներքոհիշյալ բազմիմաստ բառերն իրենց թե՛ հիմնական, թե՛ երկրորդական և թե՛ երկրորդական- փոխաբերական իմաստներով դասվում են իրանիշ գոյականների շարքը՝

**Սեմ** - 1. դռան շեմք, 2. փխբ. մուտք,սկիզբ,

**Վիհ**-1. անջրպետ, 3. փխբ. խոր փոս, անդունդ,

**Արփի**-1. արև,արեգակ, 2. փխբ. արևածագ,

**Յաթաղան**-1. կարճ ու կեռ թուր, 2. փխբ. ջարդերի խորհրդանշան,

**Էջ**-1. գրքի թղթի մի երեսը, 2. շարվածքի սյունակ, 3. փխբ. իրողության մի դրվագ, 4. փխբ. դարագլուխ, 5. հատված ստեղծագործությունից և այլն:

Այս տիպի օրինակներ որոնելուց գտնելուց և համադրելուց հետո սովորողներին հանձնարվում է կազմել նախադասություններ:

Այս թեմայի ուսուցումը ունի ճանաչողական, իմացական նշանակություն: Դրա նպատակն է տալ գիտելիքներ բազմիմաստ բառերի վերաբերյալ, զարգացնել նրանց բառակազմության կարողությունները:

Այս թեմատիկ միավորի ուսուցումը կազմակերպում ենք *ուսումնական վարժությունների միջոցով:* Այդպիսի վարժությունների շնորհիվ հնարավոր է խթանել սովորողների տրամաբանական մտածողությունը, նպաստել նրանց բառապաշարի համալրմանը, բառային և քերականական իմաստների մասին գիտելիքների յուրացմանը:

**Վարժություն 1.** Խմբավորի՛ր տրված գոյականները ըստ իմաստների, դրանց համապատասխան հարցեր վերագրելով, բացատրիր նրանց անձնանիշ, իրանիշ բնույթը:

**Ամիրա**, արքունիք, կոչնակ, թաղ, հորդա, մայր, սեր, վիճակ, քամելեոն, ականջ, տանիք, դիակ, սղոց, ուրագ:

**Վարժություն 2**. Ցույց տուր դրանց անձնանիշային և իրանիշային դրսևորումները:

**Վարժություն 3.** Ներկայացված հատվածից դուրս գրիր բազմիմաստ իրանիշ և անձնանիշ գոյականները, կազմի՛ր նոր նախադասություններ:

Այսպիսով, բազմիմաստ գոյականների իմաստային թեմատիկ խմբերի մեջ որոշակի կարևորություն ունեն *անձնանիշ գոյականները,* որոնց ուսուցումը կարող է խթանել սովորողների լեզվաիմացական կարողությունները, նպաստել նրանց բառապաշարի հարստացմանը և խոսք կառուցելու հմտությունների զարգացմանը: Լեզվական այդ թեմայի

ուսուցումը իրականցվում է որոշակի մեթոդական համակարգով, որի անմիջական բաղադրիչներն են՝

ա) պրոբլեմային- որոնողական մեթոդը,

բ) քեյս-ստադիի մեթոդը,

գ) մակածման մեթոդը,

դ) ուսուցման փոխներգործուն մեթոդը,

Լեզվական նյութի յուրացումն ամրապնդվում է ուսումնական վարժությունների համալիրի միջոցով:

Գրականություն


1. Աղայան Էդ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987:
2. Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984:
3. Խաչատրյան Լ., Լեզվաբանության ներածություն, Ե., 2008:
4. Ղարիբյան Ա., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Ե., 1954:
5. Иоффе А.Н. Целеполагание в преподавании истории и обществознания // Преподавание истории в школе. - 2014. - **№ 5**. - С. 3-7.


**Լ. Խաչատրյան, Գ. Ավետիսյան**

**Գոյականական բազմիմաստ բառերի ուսուցման մեթոդիկան**

**Ամփոփում**

Բազմիմաստ գոյականների իմաստային թեմատիկ խմբերի մեջ որոշակի կարևորություն ունեն *անձնանիշ և իրանիշ գոյականները,* որոնց ուսուցումը կարող է խթանել սովորողների լեզվաիմացական կարողությունները, նպաստել նրանց բառապաշարի հարստացմանը և խոսք կառուցելու հմտությունների զարգացմանը: Լեզվական այդ թեմայի ուսուցումը իրականցվում է որոշակի մեթոդական համակարգով, որի անմիջական բաղադրիչներն են՝ պրոբլեմային- որոնողական, քեյս-ստադիի, մակածման և ուսուցման փոխներգործուն մեթոդները: Լեզվական նյութի յուրացումն ապահովվում է ուսումնական վարժությունների համալիրի միջոցով:

Л. Хачатрян, Г. Аветисян

**Методика обучения полисемичным существительным**

**Резюме**

В смысловых группах полисемичных существительных важную роль играют персональные и объектные существительные. Обучение этим словам способствует развитию умений построения речи, языковых навыков учащихся, а также обогащению словарного запаса.

Обучение языковому материалу осуществляется определёнными методами, как: проблемно-поисковый, кейс-стадии, индуктивный, интерактивный и тд. Освоение языкового материала обеспечивается комплексом учебных упражнений.

L. Khachatryan, G. Avetisyan

**Teaching methodology of a noun polysemantic words**

**Summary**

In semantic thematic groups of polysemantic nouns, personal // things nouns have particular importance, whose training can enhance students' grammatical abilities, contribute to the enrichment of vocabulary and word building skills. The theme of language learning is carried out in a methodological system, the components of which are problematic and search, case-stage, induction and training interactive methods. Language acquisition is supported by educational material through a complex exercise.

ԼԻԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԵՊՀ դիվանագիտական ծառայության և
մասնագիտական հաղորդակցման ամբիոնի դասախոս
Բանասիրական գիտությունների թեկնածու

ՀՏԴ 378.016:811

# ԵՐԿՐՈՐԴ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԲՈՒՀԵՐՈՒՄ

**Բանալի բառեր և արտահայտություններ.** երկրորդ օտար լեզու, միջմշակութային կապեր, լեզվաընտանիք, լատինական տառատեսակ, բառապաշար, երկխոսություն, հնչյունական համակարգ, թիրախային լեզու, խաղային մոտեցում, դարձվածքներ ու ասույթներ:

**Ключевые слова и выражения:** второй иностранный язык; межкультурные связи; языковая семья; латиница; лексика; диалог; фонетическая система; обучаемый язык; игровой подход; фразеологизмы; афоризмы.

**Key words and expressions:** second foreign language, intercultural ties, family of languages, Latin font, vocabulary, dialogue, phonetic system, target language, game approach, idioms and sayings.

Արդի գլոբալիզացված աշխարհում, երբ ժողովուրդներն արդեն ունեն ազատ շփման լայն ու աննախադեպ հնարավորություն, իսկ փորձի և տեղեկատվության փոխանակումն էլ դարձել է բավական մատչելի, բնականաբար մեծ է օտար լեզուների դերը հասարակության կյանքում: Աշխարհում զուգահեռաբար ընթանում են ինտեգրացիոն նոր գործըն-թացներ, ակտիվանում է աշխարհաքաղաքական ազդեցության համար մղվող պայքարը: Ուստի միջազգային ասպարեզում օտար լեզուների իմացությունը դառնում է հրամայական պահանջ: Մայրենիին զուգահեռ, որպես կանոն, ուսանողները տիրապետում են որևէ օտար լեզվի: Սակայն ներկայումս երկլեզու շփումն այլևս բավարար չէ, և ուսանողները ձգտում են ուսումնասիրել նաև երկրորդ օտար լեզու:

Ինչպես հայտնի է, 20-րդ դարի երկրորդ կեսից պետությունների միջև կրթական, գիտամշակութային, բարեկամական փոխադարձ կապերի զարգացումը ձեռք է բերել նոր որակ, ընդարձակվել ու դարձել է անհրաժեշտություն: Որոշ երկրներ, օրինակ, Հարավային (Լատինական) Ամերիկան իր մոտ մեկ տասնյակ իսպանալեզու պետություններով ապագա դիվանագետներին պարտադրում է անգլերենին զուգահեռ որպես երկրորդ օտար լեզու ուսանել եվրոպական կամ ասիական որևէ լեզու. չէ՞ որ դրա իմացությունն ունի ոչ միայն արարողակարգային նշանակություն, այլև

նպաստում է ժողովուրդների միջև միջանձնային ու միջմշակութային կապերի զարգացմանն ու շփման դյուրությանը: Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, ապա այստեղ իրավիճակը փոքր-ինչ այլ է. մենք ունենք մի շահեկան հանգամանք. Խորհրդային Միության ազգային փոքրամասնությունները, մայրենին զուգահեռ, պատշաճ մակարդակով ինքնաբերաբար տիրապետում էին ռուսերենին, իսկ իբրև օտար լեզու (նույնիսկ այսօր)՝ ընկալվում էին անգլերենը, ֆրանսերենը, գերմաներենը: Այդ իսկ պատճառով, խոսելով երկրորդ օտար լեզվի ուսուցման մասին, իրականում հանգում ենք արդեն հիշատակված *եռալեզու* ուսուցման գաղափարին:

Երկրորդ օտար լեզվի ուսուցման նպատակներից մեկը հաղորդակցության ոլորտի ընդարձակումն է, որը ուսանողներին հնարավորություն է ընձեռում ստեղծելու նոր փոխհարաբերություններ, ծանոթանալու այլ երկրների մշակույթին, պատմությանն ու ավանդույթներին: Սա էլ իր հերթին խթանում է մտահորիզոնի զարգացմանն ու հասարակության մշակութային զարգացմանը: Երկրորդ օտար լեզվի ուսուցման նպատակներից է նաև ուսանողների գրավոր և բանավոր խոսքային մշակույթի զարգացումը, որի արդյունքում լեզուների համեմատության շնորհիվ ձեռք են բերվում խորքային հմտություններ:

Ցանկացած օտար լեզվի ուսուցում ամենից առաջ պայմանավորված է այն խնդիրներով, որոնք բխում են ժամանակի շահերից, այն է՝ արդի ժամանակաշրջանում առավել հետաքրքրություն ներկայացնող քաղաքական իրադրությունը պայմանավորում է երկրորդ օտար լեզվի ընտրության հարցը: Բացի այդ՝ քանի որ ուսանողները, որպես կանոն, արդեն տիրապետում են մի օտար լեզվի, ապա երկրորդի ընտրությունը կատարվում է գիտակցաբար: Նման պարագայում երկրորդ օտար լեզվի ուսանումը մատչելի է ուսանողներին, քանի որ նրանք կարող են կատարել համեմատություններ առաջին և երկրորդ օտար լեզուների միջև՝ բացահայտելով երկու լեզուներում առկա նմանություններն ու տարբերությունները:

Երկրորդ օտար լեզվի ուսուցումն առաջացնում է նաև մեթոդաբանական որոշակի մոտեցումների ու խնդիրների պահանջ: Դրանցից կարևորագույնը, անշուշտ, ուսանողի հանդեպ ցուցաբերվող մոտեցումն է, որը պետք է լինի անհատական, որպեսզի նպաստի վերջինիս մտավոր ունակությունների լիարժեք բացահայտմանը: Մեթոդաբանական մեկ այլ խնդիր է վավերական նյութերի կիրառումը, որը հնարավորում է ուսանողին համեմատություն անցկացնելու ուսումնասիրվող լեզուների և սեփական երկրի մշակույթի միջև: Երկրորդ օտար լեզվի ուսուցման ընթացքում էական է գրավոր և բանավոր խոսքի միաժամանակյա զարգա-

ցումը, որի համար կարևոր նախապայման է այն փաստը, որ ուսանողն արդեն ծանոթ է լատինատառ այբուբենին, քանի որ տիրապետում է մեկ օտար լեզվի: Մեթոդաբանական հետաքրքիր մոտեցումներից է նաև համադրման կիրառումը. երկրորդ օտար լեզվի ուսուցման ժամանակ ուսանողը կարող է համադրել մայրենին, ինչպես նաև առաջին օտար լեզուն ուսումնասիրվող երկրորդ լեզվի հետ: Ուսանողի կողմից լեզուների մեջ հայտնաբերված նմանությունններն օգնում են վերջինիս դյուրությամբ յուրացնել երկրորդ օտար լեզուն: Վերն ասվածից հետևում է, որ երկրորդ օտար լեզվի ուսուցման ընթացքում ուսանողն անհրաժեշտաբար առնչվում է որոշակի օրինաչափությունների հետ՝ լեզվաընտանիք, լատինական տառատեսակ, բառապաշար, քերականական կառույցների նմանություններ, լեզվական կռահումներ, բառարանի հետ աշխատելու ունակություն, ինչպես նաև մի լեզվից մյուսին անցում՝ շրջասացություններ...

Երկրորդ օտար լեզվի և մյուս լեզուների կիրառման ընթացքում հնարավոր խառնաշփոթից խուսափելու համար անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել հնչյունական համակարգին: Այդ նպատակով պետք է կիրառվեն հնչյուններն ամրապնդող որոշակի վարժություններ: Երկրորդ օտար լեզվի արդյունավետ ուսուցման մեթոդներից է նաև երկխոսության ջանադիր օգտագործումը, որը նպաստում է մտքերի անկաշկանդ փոխանակմանը, քերականական կանոնների ու բառապաշարի լիարժեք օգտագործմանը: Երկխոսությունն օգնում է ուսանողին զարգացնելու վերլուծական միտքը, ինքնուրույն արտահայտվելու ունակությունն ու մի լեզվից մյուսին սահուն և հստակ անցումը:

Ուսանողների համար երկրորդ օտար լեզվի ուսուցումն առավել արդյունավետ դարձնելու նպատակով կիրառվող մեթոդաբանական մոտեցումներն ու եղանակները կարելի է դասակարգել որոշակի համակարգով.

ա) Քերականական-թարգմանական մոտեցումն սկզբնապես ենթադրում է քերականական կանոնների բացատրում ուսանողի մայրենիով, ապա ամրապնդող վարժությունների միջոցով ձեռք բերված գիտելիքի ընդարձակում: Այս մեթոդի ժամանակ ներկայացվում են նաև երկրորդ օտար լեզվին բնորոշ առանձին բառեր ու արտահայտություններ, ապա կատարվում է տեքստի ընթերցում, որի ժամանակ էականը իմաստի ընկալումն է:

բ) Վերոնշյալ մեթոդին հետևում է անմիջական մոտեցման կիրառումը, որի ժամանակ նյութը մատուցվում է բանավոր կերպով, և մայրենին բնավ չի օգտագործվում: Այս փուլում դասախոսը նյութը կարող է

մատուցել նկարների կամ երկխոսությունների միջոցով, ինչպես նաև մասամբ ներկայացվում է թիրախային լեզվին բնորոշ մշակույթը:

գ) Երրորդ եղանակն ընթերցման փուլն է, որի ժամանակ դեռևս նվազ ուշադրություն է դարձվում արտասանությանը, իսկ բառապաշարն ընդարձակվում է, հնարավորինս արագ և կրկին էական ուշադրություն է դարձվում թարգմանչական հմտություններին:

դ) Ձայնագրությունների և տեսանյութերի կիրառումն ավելի շուտ անմիջական մեթոդի շարունակությունն է և լրացնում է ընթերցման հմտության պակասը: Այս մոտեցումը վարքագծային հոգեբանության մասն է, որի արդյունավետությունը կախված է լեզվի ուսուցումն իբրև սովորություն ընկալելու հմտությունից: Դասախոսն առավել ուշադրություն է դարձնում դիմախաղերի, մտապահման ունակությունների զարգացմանը, իսկ կառուցվածքային բացատրությունները դառնում են սակավ: Լսելու, խոսելու, կարդալու և գրելու հմտությունները հաջորդում են մեկմեկու, և դասախոսի խնդիրն է ապահովել հնչյունների հստակ արտաբերումը: Այս փուլում մայրենիի կիրառումը նախընտրելի է դասախոսի, սակայն ոչ երբեք ուսանողի կողմից: Ի դեպ, հնչյունականական համակարգն ամրապնդող վարժությունները պետք է լինեն հնարավորինս շատ, իսկ ձայնագրություններում ներառված տեքստերի անծանոթ բառապաշարը պետք է թարգմանվի և բացատրվի:

Երկրորդ օտար լեզվի ուսուցման մեթոդների շարքում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում ամերիկացի հոգեբան Չարլզ Քարրանի՝ խորհրդատվության միջոցով լեզուն ուսուցանելու մոտեցումը, որը նպաստում է վերացնելու ուսանելու ընթացքում ծագած անհատական խնդիրները: Ըստ հոգեբանի՝ լեզուն ուսանողը դիտվում է որպես այցելու, իսկ դասավանդողը՝ խորհրդատու: Ասել է թե՝ ամերիկացի հոգեբանը քաջալերում է խմբակային ուսուցման մեթոդը, որը ներառում է որոշակի հաջորդական փուլեր: Առաջին փուլում լեզուն ուսանողը մայրենիով խմբին և խորհրդատուին ներկայացնում է այն թեման, որը նա ցանկանում է քննարկել: Սրան հաջորդող փուլում խորհրդատուն այդ թեմային վերաբերող գաղափարները համապատասխանաբար ներկայացնում է ուսուցանվող օտար լեզվով, որից հետո կազմակերպվում է նշված թեմայի խմբային քննարկումը: Այս մեթոդի կիրառման ժամանակ բավական կարևոր է խորհրդատուի կողմից լսարանում ապահովված բարեկամական մթնոլորտի առկայությունը, որն օգնում է լեզուն ուսումնասիրողներին անկաշկանդ արտահայտելու իրենց մտքերն ու սեփական դիրքորոշումները: Լեզվի խմբային ուսուցումը հետևաբար դառնում է աշխույժ, բազմաբովանդակ, քանի որ ուսուցանողը որոշակի պահերի միջամտում է քննարկումներին և ավելացնում նոր բառապաշար:

Երկրորդ օտար լեզվի ուսուցման գործընթացի ժամանակ իր առանձնակի կարևորությունն ունի ուսանողի համար պատճառաբանված խթանիչների ստեղծումը, որը կնպաստի վերջինիս մոտ լեզվի հանդեպ հետաքրքրության առաջացմանը: Ապագա մասնագետներն առաջին լեզվի ուսուցման հիմնական մոտիվացիայի խնդիր չունեն. նրանք խորապես գիտակցում են մեկ օտար լեզվի, հիմնականում՝ անգլերենի, պարտադիր իմացությունը (բավարար մինիմալիզմի գործոն):

Երկրորդ օտար լեզվի ուսուցումը, անշուշտ, ունի նաև հոգեբանական բարդ կողմ: Դասախոսը պետք է լինի լավ հոգեբան, որպեսզի կարողանա ուսանողի մեջ արթնացնել հետաքրքրություն դեպի երկրորդ օտար լեզուն, նրա գիտակցությանը հասանելի դարձնել այն հանգամանքը, որ երկրորդ օտար լեզվի ուսանումը բացում է նոր հնարավորություններ, օգնում է հաղորդակից լինելու նոր մշակույթին, ներթափանցելու նոր աշխարհ: Ընդհանրապես երկրորդ օտար լեզու ուսանելու ժամանակ ուսանողը փորձում է մեքենայաբար սերտել բառերն ու արտահայտությունները: Նույնիսկ երկրորդ օտար լեզուն սովորելու բացահայտ անհրաժեշտությունը շատ անգամ չի բարձրացնում այն սովորելու մոտիվացիան: Հետևաբար դասախոսի խնդիրն է ուսանողի ներսում կոտրել այդ կարծրատիպն ու մղել նրան երկրորդ օտար լեզվի գիտակցաբար ուսանելուն, որին հասնելու համար անհրաժեշտ է ստեղծել դասախոս-ուսանող փոխադարձ աշխույժ հարաբերություններ, այսինքն՝ դասավանդումն անհրաժեշտ է իրականացնել ընկերական մթնոլորտում՝ հարց ու պատասխանի ձևով: Դասախոսը պետք է ուսանողի հոգում արթնացնի մանկանը, որին հետաքրքրում է շրջապատում կատարվող ցանկացած երևույթ: Երկրորդ օտար լեզվի դասավանդման ժամանակ լսարանում անհրաժեշտ է ստեղծել ստեղծագործական մթնոլորտ, որպեսզի ուսանողները հնարավորություն ունենան արտահայտելու սեփական կարծիքներն ու տեսակետները, անգամ բանավիճեն դասախոսի հետ:

Արդի դարաշրջանում, երբ տեղեկատվական դաշտը դարձել է բավական ընդարձակ, երկրորդ օտար լեզվի ուսուցման խնդրում մեծ է նաև համացանցի կիրառման դերը: Դասախոսը պետք է կարողանա ուղղորդել ուսանողին, որպեսզի վերջինս համացանցից քաղի իրեն անհրաժեշտ տեղեկությունը՝ միաժամանակ կարողանալով արտահայտել այդ նյութի վերաբերյալ սեփական դիրքորոշումը:

Երկրորդ օտար լեզվի արդյունավետ ուսուցման համար կարևոր գործոն է ուսումնական ծրագրի առկայությունը, որն օգնում է դասախոսին կողմնորոշվելու մատուցվող նյութի հանդեպ կառուցվածքային մոտեցման խնդրում, իսկ ուսանողն էլ իր հերթին կարողանում է ստացած գիտելիքները համակարգել և կիրառել: Այս տեսակետից կարևոր է գործնական

նամակագրական հմտությունների զարգացումը, մասնագիտական գրականության և մասնագիտությանն առնչվող ընթացիկ նյութերի ընթերցումը, քննարկումն ու թարգմանությունը: Երկրորդ օտար լեզվի ուսուցման ժամանակ բավական մեծ կարևորություն ունի օգտագործվող նյութը, որը պետք է լինի բազմաբովանդակ ու ճանաչողական: Լեզվի ուսուցումն առավել արդյունավետ դարձնելու նպատակով ցանկալի է տարանջատել դրան բնորոշ կառուցվածքային և լեզվաբանական տարրերը:

Երկրորդ օտար լեզուն դյուրությամբ ընկալելու նպատակով ուսանողների համար կարելի է կազմակերպել նաև խաղային ուսուցում, որը հիմնականում հեշտ ճանապարհով մատուցում է դժվար քերականական նյութը:

Ներկա տեխնոլոգիապես զարգացած դարաշրջանում, անշուշտ, բավական ընդարձակվել են մարդկանց փոխադարձ շփման ոլորտները, որի արդյունավետության համար բավական կարևոր է երկրորդ օտար լեզվի ուսուցման ժամանակ հաղորդակցման հմտությունների զարգացումը: Տարբեր ազգերին պատկանող մարդկանց միջև լիարժեք հաղորդակցումն ապահովելու նպատակով լեզվի ուսուցման ժամանակ անհրաժեշտ է ուսանողներին հնարավորինս ծանոթացնել տվյալ լեզվում գործող խոսակցական ու ժարգոնային տարբերակներին և, որ ամենակարևորն է դարձվածքներին ու ասույթներին: Հաղորդակցման հմտությունների զարգացման համար արդյունավետ միջոց է որոշակի թեմաների շուրջ բանավեճերի կազմակերպումը, որը ստիպում է ուսանողներին կիրառելու արդեն ձեռք բերված լեզվական բառապաշարը, քերականական կառույցներն ու հնչյունական համակարգը: Հաղորդակցման ունակությունների զարգացման նպատակով կազմակերպված երկխոսությունների ժամանակ դասախոսը չպետք է շատ հաճախ միջամտի և ուղղի ուսանողի կողմից թույլ տրված սխալները, քանի որ նման ընդհատումները խոչընդոտում են լեզուն ուսանողի կողմից իմացած գիտելիքների ցուցադրման գործընթացը: Ուսանողի կողմից թույլ տրված սխալները պետք է գրի առնվեն և քննարկման ավարտից հետո առանձին բացատրությունների արժանանան: Հաղորդակցման ունակությունների զարգացման ժամանակ բավական օգտակար են տեսաֆիլմերի, նկարների կիրառումը:

Այսպիսով, երկրորդ օտար լեզու արդյունավետ ուսուցանելու համար անհրաժեշտ է մշակել այնպիսի քայլերը, որոնք կապահովեն նշված ծրագրային կետերի իրագործումը: Սա, անշուշտ, ժամանակատար և միանգամայն անհատական մոտեցում պահանջող գործընթաց:

Լ. Պետրոսյան

**Երկրորդ օտար լեզվի ուսուցման արդի խնդիրները ՀՀ բուհերում**

**Ամփոփում**

Հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետության բուհերում ուսուցանվող երկրորդ օտար լեզվի ժամանակակից հիմնախնդիրներին: Մասնավորապես շեշտադրվել է երկրորդ օտար լեզվի իմացության կարևորությունը ներկա ժամանակաշրջանում, հատկապես դրա նշանակությունը միջանձնային ու միջմշակութային հարաբերություններում: Բնականաբար ուշադրություն է դարձվել թիրախային լեզվի ուսուցման մեթոդներին ու առանձնահատկություններին՝ հնչյունական համակարգ, բառապաշար, քերականական և ոճական կաղապարներ, դարձվածքներ ու ասույթներ, երկխոսություններ: Զանց չեն առնվել նաև երկրորդ օտար լեզվի ուսուցման ընթացքում անհրաժեշտաբար առաջացող հոգեբանական բարդությունների ու դրանց հաղթահարման ուղիների բացահայտումները:

Л. Петросян

**Актуальные проблемы обучения второму иностранному языку в вузах РА**

**Резюме**

Статья посвящена актуальным проблемам обучения второму иностранному языку в вузах Республики Армения. В частности, акцентируется важность знания второго иностранного языка на современном этапе, в особенности его значение в сфере межличностных и межкультурных отношений. Особое внимание уделяется методам обучения, таким особенностям обучаемого языка, как фонетическая система, лексика, грамматические и стилистические конструкции, фразеологизмы и афоризмы, диалоги. Не осталось вне поля нашего внимания и выявление трудностей психологического характера, возникающих в процессе обучения второму иностранному языку, а также путей их преодоления

L. Petrosyan

**Contemporary Problems in Teaching Second Foreign language at the Universities in RA**

**Summary**

The article is dedicated to the contemporary problems in teaching second foreign language at the universities in Armenian Republic. It particularly emphasizes the importance of mastering second foreign language in modern world and especially its vitality in interpersonal and intercultural communication. Naturally attention was paid to the methods and peculiarities of target language,

i.e. phonetic system, vocabulary, grammatical and stylistic patterns, idioms and sayings, dialogues. It also considers the rise of psychological complexes and the ways of revealing and overcoming them in the process of teaching the second foreign language.

ՆԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ թանգարանագիտության,
գրադարանագիտության, մատենագիտության ամբիոնի
ասպիրանտ, գիտական գրադարանի ավագ գրադարանավար

ՀՏԴ 02

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ-ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ

**Բանալի բառեր և արտահայտություններ.** գրականություն, ընթերցող, գրադարան, գրադարանավար, մատենագետ, դասակարգում, գրադարանային-մատենագիտական գործունեություն, ընթերցանության մշակույթ:

**Ключевые слова и выражения:** литература, читатель, библиотека, библиотекарь, библиограф, классификация, библиотечно-библиографическая деятельность, культура чтения.

**Key words and expressions:** literature, reader, library, librarian, bibliographer, classification, ibrary-bibliographic activities, culture of reading.

Գրադարանագիտության և մատենագիտության մեջ հաճախ են քննարկվում ընթերցանության ղեկավարման և ընթերցողների ընդհանուր դասակարգման չափորոշիչների մասին հարցերը: Առաջ է քաշվում <<ընթերցանության մշակույթ>>[1] հասկացությունը՝ միավորելով ընթերցող-ների դասակարգման բնագավառում ամեն ինչ: Մեր նպատակն է՝ընթերցողների դասակարգումը դիտարկել կախված նրանց պահանջմունքներից, հանձնարարական-մատենագիտական գրականու-թյունից, տեղեկատվական և սոցիալ-հաղորդակցական հարաբերու-թյուններից:

<<Ընթերցանության մշակույթ>> հասկացությունը, որպես ընթերցո-ղական գործունեության տեսակ, խմբավորում է ընթերցողական փորձը, ակնհայտորեն բացահայտում ընթերցողի կենսագրական կողմերը, գրականության ընթերցանության ձևի յուրացումը: Հարց է առաջանում՝ ընթերցանության մշակույթի ո՞ր տարրերն են անհրաժեշտ ընթերցանության ղեկավարման ընթացքում ընթերցողների տարբերակման համար:

[1] Вороничева О. В. Читательская деятельность и культура чтения //Библиотековедение. 2011, №. 5 , с. 59- 63.

Մեր կարծիքով, ընթերցողների դասակարգման ժամանակակից ըմբռնումներում կարելի է առանձնացնել հոգեբանական մոտեցումը, երբ հաշվի են առնվում ընթերցանության խորությունը, ընթերցողական ակտիվությունը, ընթերցողական հետաքրքրություններն ու դրդապատճառները, գրականության ընկալման որակը: Նկատվում է նաև մանկավարժական մոտեցումը, որի դեպքում ընթերցողները դասակարգվում են ըստ ինքնակրթական ընթերցանության պատրաստվածության, գրքի հետ աշխատելու ունակության աստիճանի: Անհրաժեշտ է նշել, որ դեռ անցյալ դարի 70-ական թվականների կեսին Օ. Ս. Չուբարյանը խորացրել և զարգացրել է այդ դրույթները[2], որոնք արդիական են նաև այսօր: Մի շարք հեղինակներ[3] անհրաժեշտ են համարել ընթերցողների դասակարգման ժամանակ հաշվի առնել նաև սոցիալական (սոցիալ-ժողովրդագրական) հատկանիշները:

Ընթերցագիտության տեսանկյունից[4] կարելի է պնդել, որ ընթերցանության մշակույթը պետք է դիտարկել համակողմանիորեն: Ընթերցանության հոգեբանա-մանկավարժության հետազոտությունների արդյունքների, գրադարանային-մատենագիտական տեսության և պրակտիկայի տվյալների հիման վրա[5] մենք կարող ենք նշել <<ընթերցանության մշակույթ>> հասկացության հիմնական բաղադրիչները, որպես ընթերցողական տարբերականության հատկանիշների, որոնք են՝ ընթերցանության ուղղվածությունը, գրքերի ընտրությունը, ընկալման ընթացքը և ընթերցանության յուրացումը:

---

[2] Чубарьян О.С. Человек и книга. Социальные проблемы чтения.- М.; Книга, 1978,с. 58-62.

[3] Մկրտրյան Գ. Գ. Աշխատանք ընթերցողների հետ: Ուս.ձեռնարկ կուլտ.ֆակ. գրադ. բաժնի ուսանող.համար:-Եր., 1979, էջ 24-39: Смирнов С. М. Дифференциация читателей и воспитание всесторонне развитой личности // Сов. библиотековедение. 1973.№ 1, с. 32 – 40 . Тугов Ю.М., Куликова А.П. Психолого-педагогические основы классификации читателей // Сов. библиотековедение.1980 , № 4. с. 51 – 65.

[4] Սուքիասյան Գ.Ա. Գրքագիտություն և հայ գրատպության պատմագրություն: -Եր., 2013, էջ 47

[5] Специалист – библиотека – библиография; Опыт исследования профес. потребностей в информации. – М., 1971, 222-225. Теоретико– методологические проблемы библиотечно – библиографической науки и практики. межвуз. сб. науч. трудов.- М.,1992.

Ընթերցողական դասակարգման հիմքը մշակելու ժամանակ շատ կանոր է հաշվի առնել այն փաստը, որ ընթերցանության մշակույթը գրադարանավարի և մատենագետի համար մասնագիտական գործունեության առարկա է, գործունեության անհրաժեշտ պայման: Գրադարանավարը և մատենագետը ընթերցողների հետ աշխատանքում առնչվում են իրական <<ընթերցողական մշակույթի>> հետ, որին անհատը հասել է ինքնուրույն աշխատանքի արդյունքում և պետք է կարողանա զարգացման տվյալ ժամանակաշրջանում այն համապատասխանեցնել հասարակության կողմից առաջադրված խնդիրներին:

<<Ընթերցանության մշակույթը>> կազմվում է անհատի դաստիարակության և կրթության հասարակական խնդիրներից, նրա համակողմանի զարգացման առանձնահատկություններից, գրադարանային-սոցիոլոգիական տվյալներից և կարող է բնութագրվել հետևյալ կերպ.

1. Անհատի բազմակողմանի դաստիարակությանը նպաստող տպագիր ստեղծագործություններին ընթերցանության ուղղվածություն: Ընթերցողի ակտիվությունը ուղղված է դեպի նրա գիտական աշխարհայացքը, գեղարվեստական և գեղագիտական արժեքները բացահայտող գրականությանը:

2. Մտածված գրքերի ընտրություն (նպատակաուղղված և պատճառաբանված) անհրաժեշտ ստեղծագործության ընտրության ժամանակ կողմնորոշվելու ունակություն: Ստացած տեղեկատվության հիման վրա ընթերցողը կազմում է ստեղծագործության ամբողջական կերպար, որը ընթերցողական գործունեության մեջ երկակի դեր է կատարում. նախ՝ ընթերցողը բացահայտում է ստեղծագործությունն իր համար այն դեռևս չկարդացած, տպավորություն է ստանում դրա առավելությունների և թերությունների մասին, ապա՝ ձևավորում է այն ընթերցելու և ընկալելու հրահանգը:

3. Ընթերցանություն: Գեղարվեստական ստեղծագործության ընկալումը ամբողջական է, ընթերցողը յուրացնում է ոչ միայն դրա որոշակի(փաստերի շերտը), այլև՝ կոնցեպտուալ (գրողի ընդհանուր գաղափարական մտածելակերպը, տեսությունը, կերպարների համակարգը, գեղարվեստական արտահայտության միջոցները) բովանդակությունը, կարողանում է կիրառել ստացած գիտելիքը: Ընթերցանության բարձր մշակույթի հասնելը բարդ գործընթաց է: Անհրաժեշտ է նախ լուծել մի շարք հերթականորեն առաջադրված խնդիրներ, տարբերակել ընթերցողներին, հաշվի առնել գրադարանավարին և մատենագետին առաջադրված, փոփոխվող նպատակները՝ ընթերցողի կողմից ընթերցանության մշակույթի մեկ մակարդակից մյուսին անցնելիս: Համեմատել ընթերցողի օբյեկտիվ

հնարավորությունները (ընթերցողական գործունեության կատարելագործման սոցիալ-հոգեբանական պայմանները) առաջադրված նպատակների հետ:

Ընդհանրացնելով ասվածը ընդգծենք, որ անհատների ընթերցողական մշակույթի զարգացման համար անհրաժեշտ է կազմել ընթերցողների դասակարգիչ՝ ելնելով ընթերցողների մակարդակի երկու համեմատելի չափանիշներից՝ իրական և կատարյալ (կանխատեսվող): Այս մակարդակների համեմատության ժամանակ դուրս բերված հատկանիշների համադրումը կազմում է ընթերցողների մշակույթի այս կամ այն տիպը, բնականաբար նաև՝ <<ընթերցողների խումբը>>:

Այժմ ներկայացնենք ընթերցողական մշակույթի հետևյալ երեք տարբեր աստիճաններ.

I. Ընթերցողներ, որոնց ընթերցողական մշակույթը պետք է համապատասխանի անհատի հասարակական ուղղվածության ձևավորմանը, նրա բարոյական կայացմանը: Այդ խմբին են պատկանում կրտսեր և միջին տարիքի դպրոցականները:Նրանց համար գրքերի ընտրությունը հիմնվում է գրադարանային-մատենագիտական գիտելիքների վրա և „կախված չէ” հրատարակության արտաքին տեսքից (ձևավորման առկայություն կամ բացակայություն, գեղեցիկ կազմ, հին կամ նոր գիրք, ծավալ և այլն): Ընկալումը բնութագրվում է կարծրատիպերի հաղթահարմամբ՝ ֆաբուլա, հերոս, սյուժե, ընթերցածի ընկալման կարողություն, առանձնացնել ստեղծագործության մեջ ոչ միայն գործողությունների, այլև գաղափարական միտքը:

II. Ընտրած կենսական ուղու խնդիրներին համապատասխանող, որը կնպաստի <<ինչպիսին լինել և ով դառնալ>> հարցերի պատասխանները ստանալուն, ընթերցանության կազմակերպման կարիք ունեցող ընթերցողներ: Այս խումբը կազմում են երիտասարդները: Սոցիալական տեսանկյունից նրաց բնութագրական գծերն են սոցիալական դերերի ինտենսիվ կազմավորում (աշխատողի, քաղաքացու, ընտանիքի անդամի և այլն): Գրքերի ընտրությունը պատճառաբանված և նպատակաուղղված է, նրանք կարողանում են օգտվել գրադարանային-մատենագիտական (տեղեկատվական) աղբյուրներից:

III. Ընթերցողներ, որոնց ընթերցողական մշակույթի աստիճանը պետք է համապատասխանի  զարգացած անհատի հոգևոր բազմակողմանի զարգացմանը: Այս ընթերցողները սոցիալապես հասունացած անհատներ են, ովքեր ընտրել են իրենց կենսական ուղին, ունեն զարգացած և համեմատաբար հաստատուն սոցիալական դերակատարում: Դրանում մենք համոզված ենք նաև մասնագիտական աշխատանքի մեր փորձով:

Նշված ընթերցողական խմբերը, որոնք առանձնացված են ըստ անհատի կայացման և զարգացման աստիճանների (սոցիալիզացիայի աստիճանների), կազմված են իրենց ընթերցանության նպատակի օբյեկտիվ (սոցիալական) ընկալմամբ, գրքերի ընտրության ուղղվածությամբ, ստացած տեղեկատվությունը կիրառելու ունակությամբ:

Որպես օրինակ դիտարկենք նաև երիտասարդ ընթերցողների խմբի տարբերակումը՝ բաժանելով այն երկու ենթախմբի.

1. Երիտասարդներ, որոնց ընթերցողական մշակույթի մակարդակը բնութագրվում է հետաքրքրությունների, նախասիրությունների, ճաշակների անորոշությամբ, ընթերցանության նպատակների և դրդապատճառների չզարգացածությամբ, երբ գրքերի ընտրությունը քաոսային է, ուշադրությունը բևեռված է տպագիր ստեղծագործությունների կոնկրետ բովանդակության վրա:

2. Ընթերցողներ՝ ովքեր ունեն ընթերցանության կազմակերպման նախնական կարողություններ՝ տեղեկատվական հասարակության մեջ անհատի արժեքային կողմնորոշումների ընտրության հիմնախնդիրների լուծման համար: Ընթերցանության համար գրքերն ընտրվում են ըստ լուրջ տեղեկատվական հիմքի՝ կիրառելով գրադարանային-մատենագիտական աղբյուրները, ընկալումը համակողմանի է և խորը: Այս ենթախմբի ընթերցողների ընթերցողական մշակույթի մակարդակը նախօրոք՝ առաջին ենթախմբի երիտասարդների հետ կատարված աշխատանքի, դաստիարակչական ազդեցության արդյունքն է:

Ընթերցողական դասակարգման որոշակիացումը և խորությունը բնորոշվում է նաև նրանով, թե որքան է մանրացված ընթերցողական մշակույթի զարգացման ընթացքը, ինչպես են ներկայացված նրա առանձին տարրերը գրադարանավարի և մատենագետի աշխատանքի[6] դիալեկտիկայում:

Այսպիսով ընթերցանության առանձնահատկությունների հետազոտումը և ընթերցողների ընդհանուր դասակարգումը արտացոլում են ընթերցողների տարբեր խմբերի միջև եղած կապերը՝ կախված ընթերցանության մշակույթից, անձի կայացման մակարդակից, գրականության տեսակից, որոշակի տարիքից և այլն: Ընթերցողների դասակարգման բոլոր աստիճանները պետք են գրադարանավարին և մատենագետին գործնական աշխատանքում, քանի որ գրքի տարածողը՝ (սպասարկողը) չպետք է սահմանափակվի իրերի գոյություն ունեցող

---

[6] Специалист – библиотека – библиография; Опыт исследования профес. потребностей в информации. – М., 1971.

դրության հաստատումով: Որպես ընթերցանության ղեկավար, նա պարտավոր է իմանա, թե որ ուղղությամբ կարելի է կազմակերպել ընթերցողական գործունեությունը, որ գործոններն են պետք կատարելագործել և ինչպես կողմնորոշվել առաջադրված խնդիրները լուծելիս:

Ժամանակակից գրադարանագիտության և մատենագիտության խնդիրը կայանում է նրանում, որպեսզի բացահայտի, թե յուրաքանչյուր հատկանիշը ինչ տեղ է գրավում հատկանիշների համակարգում, որը կիրառվում է ընթերցողների դասակարգման ժամանակ: Այսօր դրա լուծումը ցավոք դժվարանում է՝ կապված գրքերի ընտրության հոգեբանական մոտեցումների, տպագիր ստեղծագործությունների և <<էլեկտրոնային գրքերի>> ընկալման հստակ բաժանման աստիճանների, ընթերցողական պահանջների և տեղեկատվական հետաքրքրությունների զարգացման հետ[7]:

Սակայն հստակ է, որ անհատի մեջ պետք է առանձնացնել այն կարևոր հատկանիշները, որոնք հնարավորություն են տալիս բնորոշել ընթերցանության սոցիալական տեսանկյունները:

**Ն. Դանիելյան**

**Գրականության ընթերցանության և ընթերցողների դասակարգման հիմնահարցերը գրադարանային-մատենագիտական գործունեության մեջ**

**Ամփոփում**

Գրադարանագիտության և մատենագիտության տեսանկյունից քննարկված են տեսական և գործնական նշանակություն ունեցող այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են ընթերցողների դսակարգման ընդահանուր չափորոշիչները: Տարբեր մոտեցումներով ընթերցողը դիտարկվել է և՛ որպես օբյեկտ և՛ որպես սուբյեկտ: Տրված են գրադարանային-մատենագիտական գործունեության վերաբերյալ մի շարք հարցերի բացատրություններ ու ցուցումներ:

---

[7] Ванеев А.Н. Проблемы руководства чтением в отечественном библиотековедении // Сов. Библиотековедение. 1991. № 3, с. 15-21. Мелентьева Ю. П. Чтение, читатель, библиотека в изменяющемся мире.-М.; Наука, 2007, 20-31с.

Н. Даниелян

**Вопросы чтения литературы и классификация читателей в библиотечно-библиографической деятельности**

**Резюме**

С точки зрения библиотековедения и библиографии обсуждаются такие проблемы теоретического и практического значения, как критерий общей классификации читателей . Разными подходами читатель рассматривается и как объект, и как субъект. Приведены некоторые пояснения и указания по ряду вопросам библиотечно-библиографической деятельности.

N. Danielyan

**The problems of library funds reading and book- users classification in the library-bibliographic activity**

**Summary**

In the article such problems of both theoretical and actual importance are discussed from the viewpoint of librarianship and bibliography as the general standards of the book- users classification. The book -user was observed both as an object and as a subject. Some explanations and instructions of some problems are given concerning the library-bibliograp.

---

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՄՀԵՐ ՄԵԼԻՔ-ԲԱԽՇՅԱՆ
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ պրոռեկտոր

ՀՏԴ 94(479.25)

# ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920 Թ. ՆԱԽՕՐՅԱԿԻՆ: ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԸՆԴՎԶՈՒՄՆԵՐԻ ՃՆՇՈՒՄԸ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՋԱՆՔԵՐԸ

Լեոն խոսելով հայկական պետականության կայացման բարդ և աշխարհաքաղաքական խոր հակասություններով հագեցած ժամանակաշրջանի մասին՝ իր ժամանակին դիպուկ նկատել է, որ հայ ժողովրդի դժբախտության իրական պատճառներից մեկն էլ այն էր, որ նա ուներ «լավ» խմբապետներ, բայց վատ քաղաքագետներ… Դաշնակցությունը չէր կարողանում ազատարվել իր հին մեղքից՝ ֆիդայականությունից[1]: Այդ է վկայակոչում նաև ՀՀ առաջին վարչապետ Հովհ. Քաջազնունին, համաձայն որի «խմբային ու խմբապետական սիստեմը, որ մասնավորապես խրախուսվել էր բյուրոկառավարության կողմից, քանդել էր զինվորական կազմի ամբողջությունը, միությունը»[2]:

1919 թ. կեսերին, չնայած ոգևորիչ որոշ տրամադրություններին և առաջին հայացքից արտաքուստ բարենպաստ հանգամանքներին, Հայաստանի Հանրապետության իրական վիճակը մնում էր տագնապալից և անորոշություններով լի, քաղաքական սպասելիքները՝պայմանական, առավել ևս, որ դեռ չէին հարթվել վրաց-հայկական պատերազմով առաջացած բարդությունները արտաքին աշխարհի հետ հաղորդակցության ապահովման տեսանկյունից, որը Հայաստանին կանգնեցրել էր սոցիալ-տնտեսական մեծ դժվարությունների առաջ, պարենային ճգնաժամը խեղդում էր, և ՀՀ կառավարության ղեկավարները անվարժ քայլերով փորձում էին ելք որոնել այդ իրավիճակից: Այդ է վկայում կառավարության նախագահի Ալ. Խատիսյանի դիմումը Թիֆլիսի հայկական դիվանագիտական ներկայացուցչության ղեկավար Լ.Եվանգուլյանին. «Բոլոր շոգեքարշները և վա գոնները ուղարկված են Վրաստան: Ամբողջ շարժումը կանգնած է: Հաղորդեցեք Գրինին և Բրաֆին: Սարսափելի սով է: Ամեն օր հեռագրեք ինձ՝ ինչքան ալյուրով բեռնված վագոն է դուրս գալիս

---

[1] Տե՛ս Լեո., Անցյալից, Եր., Շեմ հրատ., 2009, էջ 327, 382:

[2] Քաջազնունի Հովհ. Հ.Յ.Դաշնակցութիւնը անելիք չունի այլ ևս, Վիեննա, 1923, էջ 43:

Թիֆլիսից: Անհապաղ հեռագրեք Բեգզադյանին՝ անհապաղ ուղարկի մազութ և բենզին, ոչ մի կաթիլ չկա, հակառակ դեպքում ամեն ինչ կմեռնի»[3]: Տնտեսության, և մասնավորապես ՀՀ արդյունաբերության զարգացման ցուցանիշները հուսադրիչ չէին, այսպես, մասնավորապես պետք է նշել, որ 1913թ. 20,7 մլն ռուբլու համախառն արտադրանքի դիմաց 1919թ. Հայաստանի արդյունաբերությունը տալիս էր 1,3 մլն. ռուբլու արտադրանք, այսինքն՝ այն կրճատվել էր անգամ[4]:

Հարկ է ընդգծել, որ հայաստանյան պայմանների անտանելիությունը հրաշալի ըմբռնում էին նաև հայ հասարակական-քաղաքական, մտավորական գործիչները: «Երկրի վիճակը շարունակում է մնալ ծանր, հացը պակաս է, և սովը առատ հունձ է անում: Կտրված ենք արտաքին աշխարհից, Վրաստանը շարունակում է մեր ճամփան փակել: Անգլիայի քաղաքականությունը դեպի մեզ մինչև վերջերս եղել է տմարդօրեն դաժան և քիչ բարյացակամ»[5], - գրում է Ս.Վրացյանը 1919 թ. մայիսի 18-ին Հ.Յ.Դ. Ամերիկայի Կենտրոնական Կոմիտեին:

Այս ամենին ավելացրած սոցիալական լարվածությունը Հայաստանի Հանրապետությունում, կյանքի և գույքի ապահովության բացակայությունը, ՆԳ նախարարության և նրա աշխատակիցների մի զգալի մասի հանցավոր անտարբերությունը և հակաօրինական գործողությունները, ՀՅ Դաշնակցության վարած մենաշնորհի և բռնագրավումների քաղաքականությունը, զորքի և տեղական իշխանությունների գյուղերում կատարած ինքնագլուխ բռնագրավումները և անսանձ շահատակությունները, հացի համար անողոք լարվածությունը շատ գյուղերում, և մասնավորապես, օրինակ Էջմիածնի Ալիբեկլու և Քեորփակլու, ինչպես նաև Բաշգառնի, Եղվարդ և այլ գյուղերում, որոնց մասին ՀԺԿ «Ժողովուրդ» թերթի էջերում տասնյակ տատապարտող նյութեր են տպագրվել[6]: Տեղին է նշել հատկապես ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակի, սովի, ցրտի մասին Սորմալուի և Ղամարլուի շրջաններում, որոնցում նկատվել էին անգամ մարդակերության դեպքեր[7], որի համար Քաջազնունու կառավարությունը խիստ քննադատության ենթարկվեց ՀՅԴ բյուրոյի անդամ Ս. Վրացյանի խմբագրած «Զանգի» կողմից հրապարակված

[3] ՀԱԱ (Հայաստանի Ազգային Արխիվ), Ֆ.Պ - 276, ց. 1, գ. 79, թ. 13:

[4] Տե'ս Գալոյան Գ., Հաղթական մայիսից - հաղթական նոյեմբեր, էջ 37:

[5] Վրացեան Ս. Հին թղթեր նոր պատմութեան համար, Բեյրութ,1962, էջ 287-288:

[6] «Ժողովուրդ», Երևան, 11 ապրիլի, 12, 19, սեպտեմբերի, 18 մայիսի, 17 օգոստոսի, 4 դեկտեմբերի, 1919 թ.:

[7] Տե'ս «Զանգ», Երևան, 5 հունվարի, 1919 թ.:

առաջնորդող հոդվածներում, մերկացնելով պետական պաշտոնյաների զեղծումները և շահատակությունները, հրապարակայնացնելով զանազան լիազորների կամայականությունները և բռնարարքները շարքային հայ գյուղացու նկատմամբ, գյուղացուն զրկելով կարտոֆիլից, կաղամբից, սերմնացուից, և առհասարակ ունեզուրկ դարձնելով[8]: Մեկ այլ կապակցությամբ Երևան «Զանգը» արձանագրում է հետևյալը. «Թե՛ մայրաքաղաք Երևանում և թե՛ գավառում մենք իշխանություն չունենք դեռ: Ամեն տեղ կան բավականին առատ չինովնիկներ ու միլիցիոներներ, որոնք թուղթ են գրում, ռոճիկ ստանում, որոնցից շատերը կաշառք են ուտում, մարդ են ծեծում, զեղծումներ կատարում, բայց պաշտոնեության պետական մտքով, կազմակերպված իշխանություն, ադմինիստրացիա չունենք դժբախտաբար»[9]: Բնակչության շրջանում և ընդդիմադիր ուժերի շրջանում բազմաթիվ դժգոհություններ էին կուտակվել ՀՀ կառավարության ֆինանսատնտեսական և ներքին քաղաքականությունից, պարենավորման և գաղթականության հարցերում, էլ ավելի շիկացնելով քաղաքական դրությունը Հայաստանում, որի մասին հրապարակավ դատապարտող հրապարակումներով հանդես եկավ Հայ էսէռների «Կայծ» պաշտոնաթերթը[10]:

1919 թ. աշնանը Լ.Եվանգուլյանի հետ ունեցած զրույցի ընթացքում գնդապետ Հասկելը ընդգծել է, թե այդ կառավարությունը «բաղկացած է նախկին դասատուներից և կուսակցության աջակցությունից օգտվող ամեն կարգի մարդկանցից՝ քաղաքականապես ոչ հասուն և ոչ հեռատես»[11]: Եվ, առհասարակ Հայաստանում կադրային վիճակը ողբալի էր, որոնք գործնականում բավականաչափ արհեստավարժ չէին և չէին կարողանում պետական մտածելակերպի բարձրակետում գտնվել, իրատեսական որոշումներ կայացնել: Այդ հանգամանքը հասկանում էին նաև կառավարության, պետության և զանազան կուսակցությունների առավել հեռատես ներկայացուցիչները: Հայաստանյան իրականությունը չէր ձգում արտերկրի հայ մտավորական խավի ներկայացուցիչներին:

Ամենևին էլ պատահական չէ, որ ՀՀ-ում կուտակված հակասությունները իրենց յուրատեսակ հանգուցալուծումը գտան 1920 թ. մայիսյան իրադարձություններում, որ բոլշևիկյան պատմագրության մեջ ընդունված է եղել անվանել «ապստամբություն», ինչը հայոց պատմության

---

[8] Տե'ս «Զանգ», 31 հունվարի, 1919 թ., 14 փետրվարի, 27 հոկտեմբերի, 1918 թ.:
[9] Տե՛ս «Զանգ», 14 փետրվարի, 1919 թ.:
[10] Տե՛ս «Կայծ», 8 դեկտեմբերի, 1918 թ., 3 ապրիլի, 1919 թ.:
[11] ՀԱԱ, Ֆ.Պ - 276, ց. 1, գ. 212, թ. 23:

հակասական էջերից է: Սա իր բնույթով և էությամբ ներքին քաղաքացիական կռիվ էր, որ «հրահրվեց» դրսից՝ բոլշևիկյան օրեցօր հզորացող քարոզչության ազդեցությամբ, և որոշակի հետևանքներ ունեցավ աշխարհաքաղաքական հետագա զարգացումների առումով: Այս առումով ստեղծված իրավիճակը հետաքրքիր է բնութագրել Լեոն. «Նույնիսկ կողմնակի չեզոք դիտողների համար էլ պարզ էր, որ մայիսյան ապստամբության մեջ խոշոր արտահայտություն էր գտել և ժողովրդի դժգոհությունը դաշնակցականների կառավարական ռեժիմի դեմ»[12]: Այդուհանդերձ, քանզի կառավարող կուսակցությունը, անվերապահորեն ոգևորվելով Անտանտի դաշնակիցների քաջալերանքից, հավատարիմ մնաց հակաբոլշևիկյան դիրքորոշմանը, և մյուս կողմից լավ գիտակցելով, որ բոլշևիկները «թույլ են Հայաստանում և ուրեմն շատ հեշտ է հետերնին հաշիվը փակել»[13]:

Ներքաղաքական բարդ իրավիճակի ապակայունացնող կարևոր գործոններից էր Հայստանի Հանրապետության տարածքում ապրող շուրջ կեսմիլիոնանոց մահմեդական զանգվածի առկայությունը, որը հարևան Ադրբեջանի և Թուրքիայի գործակալների կողմից անընդհատ հրահրվում էր հակապետական և հակահայկական ընդվզումներ, անգամ կազմակերպված զինված ելույթների՝ նպատակադրում ունենալով ներսից խարխլել հայկական պետականությունը, անդամահատել ՀՀ սահմանային-տարածքային ամբողջականությունը՝ հակապետական շարժման կենտրոններ դարձնելով Զանգիբասարը, Շարուր- Նախիջևանը, Կարսի մարզը, Զանգեզուրը, Սուրմալուն, Բոյուք Վեդին և այլ շրջաններ: 1920թ. կառավարական հաղորդագրություններից մեկում հենց դիպուկ ներկայացվում է Զանգիբասարի լարված ռազմաքաղաքական իրավիճակը. «Թուրք-ադրբեջանական գործակալներն ու զինվորական ուժերն իրենց գործողության վայր են ընտրել Զանգիբասարը և համառորեն խանգարում էին Հայաստանի կառավարությանը՝ կազմակերպելու տեղական իշխանություն, հարձակումներ էին գործում կառավարական զորամասերի և դաշտերում աշխատող մոտակա հայ գյուղացիների վրա, մինչև անգամ վերջնագրեր էին ներկայացնում հայ գյուղերին՝ թելադրելով որոշ պայմաններ: Կառավարությունը ստիպված եղավ դիմել ուժի, կառավարական զորքերին հաջողվեց կռվով տիրել ապստամբ թուրք գյուղերին. Հաջի Ղշլաղ, Գեոյզմբեթ, Արբաթ, Ենգիջա, Սարվանլյար, Վ. և

---

[12] Տե՛ս Լեո., Անցյալից, Եր.,Շեմ հրատ., 2009, էջ 403:
[13] Իրազեկ, Դաշնակցութիւնը և փետրվարի 18–ը, «Հայրենիք» օրաթերթ, 20-21 փետրվարի, 1936, թիւ 51-52:

Ն.Նեջերլուներ և այլն»[14]: Մահմեդաբնակ գյուղերի ընդվզումների կարգավորման և ներքին իրադրությունը կայունացնելու խնդրում ձեռնարկված միջոցների հարցում ՀՀ կառավարությունը, զինվորական իշխանությունները այլընտրանք չունեին և հարկադրված էին ուժ կիրառել, որին իրենց գործնական համերաշխությունն արտահայտեցին ՀՀ տարածքում գործող կուսակցական-քաղաքական ուժերը: Այդ մասին հստակ նշվում է Տ. Բեկզադյանի հեռագրերից մեկում՝ ուղղված Լ. Շանթին. «Զանգիբասարում թաթարների կրկնակի ելույթներից, 10 զինվորների սպանությունից և 20-ի վիրավորվելուց հետո կառավարությունը վերջնագիր ներկայացրեց Հայաստանի իշխանություններին ենթարկվելու մասին», և արդյունքում, պատժիչ գործողությունների հետևանքով, որին մասնակցեցին բանակային զորամասերը */չնայած այդ քայլին դրոն դեմ էր, գտնելով որ դա կթուլացնի և կանբարոյականացնի հայ զորքը, ինչպես և եղավ/* և ֆիդայական-հայդուկային մտածելակերպին և գործելաոճին հարազատ սասունցիների խմբերը և այլ անկանոն զորամասեր, հունիսի 20-ին հայկական զորքը գրավեց Զանգիբասարը՝ որպես ռազմավար վերցնելով 2 թնդանոթ, 4 գնդացիր, 40 հազար փամփուշտ և բավականաչափ մեծ թվով հրացաններ[15]:

Անհրաժեշտ է փաստել այն հանգամանքի մասին, որ 1920թ. մայիսյան իրադարձությունները ակնհայտորեն նպաստեցին հանրապետության ներքին և արտաքին վիճակի ապակայունացմանը, նպաստելով ճգնաժամային երևույթների առաջացմանը և խորացմանը, Հայաստանի տարբեր շրջաններում ապրող մահմեդական բնակչությանը տրամադրելով հակապետական և հակահայկական ելույթների, թեկուզև ամենայն հավանականությամբ, դա հայ բոլշևիկների պլաններում կարող էր և տեղ չգտնել, ինչը խիստ իրատեսական է: Այդուհանդերձ, այդ հանգամանքից ոգևորված մահմեդական բնակչությունը անվարան գնաց ընդվզումների ՀՀ օրինական իշխանությունների դեմ, որը տևեց գրեթե մեկ տարի, որի պայմաններում ռազմաքաղաքական իրավճակը բացահայտորեն ապակայունացվեց, խռովարարների անմիջական թիրախներից մեկն էլ դարձավ անգամ Երևանը, իսկ Գյառնի-Բասարը, Ղամարլուն, Զող-Բասարգեչարը, Կարսի մարզը և այլ շրջաններ երկար ժամանակ հայտնվեցին ադրբեջանա-թուրքական ոտնձգությունների տիրույթում:

Իրավիճակը բավականին սրվեց 1920թ. սկզբներին, երբ Բոյուք-Վեդիի խռովարարները եզրեր փնտրելով զանգիբասարյան խռովարարների

---

[14] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ – 290, ց. 1, գ. 32, թ.1:

[15] Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ – 290, ց. 1, գ. 32, թ. 3, գ. 32, թ. 5:

հետ, Դաշ-Բուռունի և Աղդամլարի շրջանում սուր բախումներ ունեցան հայկական զորամասերի հետ՝ նպատակ հետապնդելով միացյալ ուժերով խարխլել հայկական պետականության հիմքերը հենց Երևանի մերձակայքում, հնարավորության դեպքում՝ նաև անդամահատել հայկական տարածքների ամբողջականությունը: Դրանք կանխելու համար, ՀՀ կառավարությունը հարկադրված հուլիսի 10-ին զորքեր դուրս բերեց Բոյուք-Վեդիի խռովարարների դեմ, և համառ մարտերից հետո գրավվեցին Ղարայալ, Ճաթկրան, Ալի-Մահմեդ, Ենգիջա, Ներքին Կարաբաքլյար և այլ մահմեդական գյուղեր, որտեղ առանձնակի քաջությամբ աչքի ընկան գնդապետ Հասան Փաշայանի գլխավորությամբ գործող հայկական զորամասերը, որոնց ջանքերով էլ հուլիսի 12–ին իրագործվեց Բոյուք-Վեդիի գրավումը, որին հաջորդեց Դավալուի և Արարատ կայարանի գրավումը, իսկ արդեն հուլիսի 14-ին ռազմական գործողությունները ավարտվեցին Շարուրի ազատագրավումով, որով հաստատվեց ՀՀ քաղաքական գերակայությունը այդ տարածքում: Գայլի Դրունքի գրավումից հետո, մահմեդականները տիրահպատակություն արտահայտեցին ՀՀ իշխանություններին, մի մասն էլ փախուստի դիմեց և լքեց հանրապետության տարածքը: ՀՀ կառավարությունը կարողացավ վերահաստատել հայկական պետության իրավասությունը այդ տարածքներում, սակայն այն ունեցավ նաև բացասական հետևանքներ հայկական զորքի բարոյական կերպարի անաղարտության ապահովման տեսանկյունից: Հայտնի է, որ իր ժամանակին ոչ բոլոր զինվորական և կուսակցական այրերն էին կողմնակից հայոց զորքի ներգրավմանը ներքին տագնապալից խնդիրների և կնճիռների հանգուցալուծմանը, այդ թվում և Դրոն, որի մասին արդեն ասել ենք: Սակայն փաստը մնում է փաստ, որ հայկական զորքը մարտերի ընթացքում չձերբազատվեց հակառակորդից մահմեդական գյուղերում ավարառությամբ զբաղվելուց, ինչը չհաջողվեց կանխել, առավել ևս, որ նման վճռական քայլեր բարձրագույն հրամանատարության կողմից չկատարվեցին, և ինչպես տեղին նկատել է պատմաբան Էդ. Զոհրաբյանը, այդ հանգամանքը բացասաբար անդրադարձավ հայոց զորքի ընդհանուր բարոյական վիճակի վրա, ինչն իրեն իրապես զգացնել տվեց 1920թ. թուրք-հայկական պատերազմում[16]: Դա հստակ նկատել է և փաստել Ս.Վրացյանը. «Բոլշեւիկներին ճնշելուց հետո, Բիւրոկառավարութիւնը որոշեց զսպել եւ զանզիբասարցիներին կանոնաւոր զօրամասերի միջոցով: Դրօն բուռն կերպով բողոքեց վերջին որշման դեմ:

---

[16] Տե՛ս Զոհրաբյան Էդ., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Եր., 1997, էջ 355:

Զանգիբասարի նուաճման, իհարկե, հակառակ չէր, և համոզուած էր, որ բոլշեւիկներին սանձահարելուց յետոյ աւելի դիւրին կը լինի Զանգիբասարի մաքրագործումը, բայց, անընդունելի, վնասակար էր համարում զօրքի մասնակցութիւնը Զանգիբասարի գրաւումն: Նա անվիճելի փաստերով և իրատեսութեամբ աշխատում էր համոզել, որ բանակի մասնակցութիւնը քաղաքացիական կռիւներում, անխուսափելլի կերպով կը խախտէ զինուորութեան կարգապահական ոգին, կը բարոյալքէ ու կը տկարացնի մարտունակութիւնը:

Այդպէս էլ պատահեց: Զանգիբասարը նվաճուեց, ճիշտ է, բայց թրքական գիւղերի մաքրագործման մասնակցող զորամասերն էլ բարոյալքուեցին ու գրեթէ կազմալուծվեցին: Մաքրագործումը անխուսափելի կերպով կապուած էր թալանի ու հարստահարութիւնների հետ: Դրօն գիտէր այս և թոյլ չտուեց, որ իրեն ենթակայ զօրամասերը մասնակցեին Զանգիբասարի գործողութեան»[17]:

Ինչևիցե, այդ պահին ՀՀ իշխանություններին հաջողվեց 1920թ. կեսերին հանրապետության տարածքում թուրք-թաթարական խռովության օջախները չեզոքացնել, որին ակտիվ մասնակցություն ունեցան թե՛ Բաքուն և թե՛ Անկարան: «Ռազմիկ» թերթի վկայությամբ, «ամբողջ մի տարի …Շարուր-Նախիջևանը կերակրվեց Ադրբեջանի ուղարկած փողերով»[18]: Այդ մասին է փաստում ՀՀ Արտաքին գործերի նախարար Խատիսյանը, որը նշում է այն մասին, որ Երևանում Ադրբեջանի դիվանագիտական հավատարմատար Մամեդ խան-Թեքինսկու միջոցով փորձ է արվել խռովարարներին է փոխանցվել 200 հազար ռուբլի, սակայն որը չի հաջողվել փոխանցել հասցեատիրոջը, իսկ հատուկ սուրհանդակի ձերբակալության ժամանակ ՀՀ իշխանությունները առգրավել են ևս 5 միլիոն ռուբլի, որը պետք է բաժանվեր Շարուրի խռովարարական տրամադրություններով համակված մահմեդական գյուղացիությանը[19]:

Այսպիսով, ՀՀ իշխանություններին հաջողվեց հանդերտեցնել մահմեդական ընդվզումները ՀՀ տարածքում, որը երկրի ներքին իրավիճակի համեմատական կայունացման տեսանկյունից որոշ նշանակություն ունեցավ, և որոշ հույսեր ներշնչեց ապագայի տեսանկյունից, թեկուզև դեռ մայիսյան իրադարձությունների ժամանակ արդեն խարխլվել էր երկրի քաղաքական ընդհանուր կայունությունը, և

---

[17] Վրացեան Ս., Կեանքի ուղիներով, Հ. Դ, էջ 192-193:

[18] «Ռազմիկ», 1920 թ., N 10:

[19] Խատիսյան Ալ., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 205:

նշմարվում էին Անդրկովկասյան երկրամասում ռուսաստանյան նոր իմպերիայի՝ բոլշևիկյան պետության ձևով վերահաստատվելու հեռանկարները:

**Մ.Մելիք-Բախշյան**

**Իրավիճակը Հայաստանում 1920թ. նախօրյակին: Մահմեդական ընդվզումների ճնշումը և ներքին հասարակական-քաղաքական դրության կայունացման ուղղությամբ ՀՀ կառավարության ջանքերը**

**Ամփոփում**

Հոդվածում պատմաքննական վերլուծության են ենթարկվել Հայաստանում ներքին հասարակական-քաղաքական դրության հարցերը, կառավարության գործադրած ջանքերը դուրս գալու այդ դժվարին տնտեսական և քաղաքական դրությունից: Ցույց են տրված ՀՀ կառավարության իրական հնարավորությունները, և հեռանկարները կայունացնել քաղաքական դրությունը հանրապետությունում 1919 թ. վերջին – 1920 թ. սկզբին: Հեղինակի կողմից արժևորվել են կառավարության գործունեությունը Հայաստանի Հանրապետության տարածքում բռնկված մահմեդական հակահայկական և հակակառավարական ելույթների հանդարտեցման ուղղությամբ, և ձեռք բերված արդյունքները, ինչպես նաև գնահատական է տրվել Հայաստանի Հանրապետության քաղաքական-կուսակցական ուժերի կողմից ՀՀ զարգացման հեռանկարների ընտրությանը 1920թ. վերջին և այնուհետև: Ցույց է տրված Հայաստանի Հանրապետության քաղաքական դրությունը 1920թ. մայիսյան իրադարձություններից և մահմեդական հակահայկական ելույթների ճնշումից հետո, քաղաքական արդյունքները: Տրված է 1920 թ. կեսերին Հայաստանի Հանրապետությունում ստեղծված հասարակական-քաղաքական դրության պատմաքաղաքական գնահատականը:

**М. Мелик-Бахшян**

**Ситуация в Армении накануне 1920 года: сдерживание мусульманских выступлений и усилия правительства Армении по стабилизации внутреннего общественно-политического положения**

**Резюме**

В статье проанализирована внутренняя общественно-политическая ситуация в Республике Армения: попытки правительства выйти из трудного экономического и политического положения. Показаны реальные возможности правительства Республики Армения, перспективы стабилизации политической

ситуацию в Республике в период с конца 1919 г. до середины 1920 г.. Автором дана оценка деятельности правительства по сдерживанию мусульманских анти-армянских и антиправительственных выступлений на территории Армении и достигнутые результаты по этому направлению. Также, дана оценка выборам партийно-политическими силами Республики Армения перспектив развития Республики в середине и после 1920 года. Показано состояние Республики Армении после майских событий 1920 г. и подавление мусульманской анти-армянской смуты на территории Армении. Представлена критическая историко-политическая оценка создавшегося общественно-политического положения Республики Армения в середине 1920 года.

**Mher Melik-Bakhshyan**

**The situation in Armenia on the eve of 1920: the restraint of Muslim subversions and the effort of Armenia aimed at stabilizing the internal socio-political situation**

**Summary**

The article comprises the analysis of the internal socio-political situation in the Republic of Armenia with the attempts of the Armenian Government to find a way out of the tough economic and political situation. The paper introduces the picture of true-to-life, realistic possibilities that the Republic of Armenia had under those circumstances, as well as the prospects of political stabilisation in the country from the end of 1919 till mid-1920. The researcher provides an overall evaluation of Government's activities striving to cope with the Muslim anti-Armenian and anti-governmental subversions in the territory of Armenia and the results achieved in this respect. At the same time, the paper scrutinizes the vision of development of the Republic of Armenia opted by the national political parties in mid-1920 and afterwards. A generic outline of the situation in the Republic of Armenia right after the events of May, 1920, as well as the restraint of the Muslim anti-Armenian mutinies in Armenia is also introduced in the article. The key point of the article consists in the critical historical and political evaluation of the situation in Armenia in mid-1920.

ՄԵՐԻ ՎԵՆԳՐԺԱՆՈՎԻՉ
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հենակետային
վարժարանի պատմության ուսուցչուհի

ՀՏԴ 94(479.25)

## 1918 Թ. ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԷՋԵՐՈՒՄ

**Բանալի բառեր**. անկախություն, արժեվորում, հաղթանակ, Հայաստան, հետազոտություն, ճակատամարտ, նկարագրություն, պատերազմ, պատմագրություն:

**Ключевые слова**: Армения, война, независимость, победа, исследование, сражение, описание, историография, оценка.

**Key words**: Armenia, war, independence, battle, evaluation, victory, description, research, historiography.

1918թ. մայիսյան հերոսամարտերը, որոնց շնորհիվ հայ ժողովուրդը վերականգնեց դարեր առաջ կորցրած անկախ պետականությունը՝ ի դեմ Հայաստանի Առաջին Հանրապետության, մշտապես գտնվել են հայ հասարակական-քաղաքական մտքի, մամուլի և պատմագրության ուշադրության կենտրոնում: Ընդ որում, ժամանակային հեռավորությանը համընթաց ավելի ու ավելի է ընդգծվել նրանց դրական դերը հայոց ճակատագրում: Եթե Սփյուռքում քննվող հարցը լուսաբանվել է անընդմեջ, ապա բուն հայրենիքում խորհրդային վարչակարգի հաստատումից հետո երկար ժամանակ կտրականապես արգելված էր դրանց լուսաբանումը, առավել ևս՝ արժեվորումը: Միայն խրուշչովյան ձնհալի ժամանակներից, երբ խորհրդային երկիրը որոշակի ազատականացում ապրեց, երբ հայ ազգային-հասարակական կյանքը թևակոխեց զարթոնքի փուլ, հայ պատմագրությունը հնարավորություն ստացավ հայրենիքում ևս անդրադառնալ այդ պատմական իրադարձություններին: Սակայն մայիսյան հերոսամարտերի համապարփակ ուսումնասիրությունը և ամբողջական արժեվորումը սկսվեց Հայաստանի Երրորդ Հանրապետության հռչակումից հետո:

Երրորդ հանրապետության ստեղծումից հետո հարցին առաջինն անդրադարձած հեղինակներից է Կ. Սարդարյանը, ով իր «Պատմություն և իրականություն» հոդվածների ժողովածուում նկարագրելով 1918թ. գարնանը հայ ժողովրդի համար Անդրկովկասում ստեղծված իրավիճակի բարդությունը, միանգամայն իրավացիորեն նշում է, որ «մայիսյան

հերոսամարտերն էլ որոշեցին անկախ պետություն ունենալու հարցը»[1]: Հեղինակն արժեվորել, ավելին՝ վճռական է համարել նաև անհատների մեծ դերը այդ պատմական իրադարձություններում:

Հերոսամարտերի պատմության ամբողջական ներկայացման ու արժեվորման ուղղությամբ հաջորդ կարևոր աշխատությունը պատկանում է ֆրանսահայ պատմաբան Սերժ Աֆանասյանին: 1991թ. Երևանում հայերեն լեզվով լույս տեսած իր՝ «Սարդարապատի հաղթանակը (Հայաստան, Մայիս 1918)» գրքում, որը շարադրված է Հայաստանի և արտասահմանի արխիվային նյութերի, պատմագիտական հետազոտությունների և մամուլի հիման վրա, հեղինակը նախ ներկայացնում է Հայաստանի ռազմա-քաղաքական ծանրագույն դրությունը 1917թ. վերջից մինչև 1918թ. մայիս ամիսն ընկած ժամանակահատվածում: Այնուհետև տալիս է Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերի մանրամասն նկարագրությունը, նրանց համազգային բնույթը և նշանակությունը հայոց պատմական ճակատագրում: Ս. Աֆանասյանն իրավացիորեն նկատում է, որ «Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի և ավելի ուշ Բաքվի կռիվներում մեր հերոսների թափված արյունը հնարավորություն տվեց դնել Պետության հիմքը և ապահովել երեք հազարամյա ազգի շարունակությունը, ուրեմն և Խորհրդային Հայաստանի գոյությունը»[2]: Հեղինակը հատկապես բարձր է գնահատում Սարդարապատի հերոսամարտը: Աշխատության եզրափակիչ մասում Ս. Աֆանասյանը գրում է. «Սարդարապատը խորհրդանիշն է պատվի ու ազատության համար մղված պայքարի, մի պայքարի, որը պահանջում էր ինքնահրաժարում ու գերմարդկային զոհաբերություններ, մի հրաշք, պայմանավորված ամբողջ մի ժողովրդի կամքով ու վճռականությամբ՝ մեռնել զենքը ձեռքին Արարատյան դաշտում, Էջմիածնի պատերի տակ, բայց թույլ չտալ, որ բարբարոսությունն ամբողջացնի իր գործը»[3]: Հեղինակը նկատում է, որ Սարդարապատի հաղթանակը մեծ ազդեցություն ունեցավ Բաշ-Ապարանում և Ղարաքիլիսայում կռվող հայկական զորքերի վրա. նրանք անմիջապես դադարեցրին նահանջը: Հեղինակը շեշտում է Բաշ-Ապարանի ռազմաճակատի մարտիկների սխրանքը, ապա ավելացնում, որ տարած փառավոր հաղթանակի շնորհիվ հայերը կանխեցին Երևանն

[1] Սարդարյան Կ., Պատմություն և իրականություն, Երևան, 1991, էջ 19:

[2] Աֆանասյան Ս., Սարդարապատի հաղթանակը (Հայաստան, Մայիս 1918), Երևան, Իրավաբանական գրականության հրատ., 1991, էջ 82:

[3] Նույն տեղում, էջ 81:

աքցանի մեջ առնելու թուրքերի ռազմական ծրագիրը[4]: Անդրադառնալով Ղարաքիլիսայի հերոսամարտին, Ս. Աֆանասյանը նկատում է, որ հայերի դրությունն այստեղ ավելի ծանր էր, քան այլ ճակատներում, ապա ներկայացնում է հայկական կանոնավոր զորքի և աշխարհազորայինների անձնազոհ պայքարը թուրք զավթիչների դեմ: Ղարաքիլիսայի հերոսամարտի առիթով նա ներկայացնում է Կովկասյան ճակատում թուրքական զորքերի գլխավոր հրամանատար Վեհիբի խոսքերը. «Դա ամենալուրջ ճակատամարտն էր, որին ես մասնակցեցի Դարդանելից հետո: Դուք ունեք բոլոր այն հատկանիշները, որոնք ձեզ կարող են դարձնել մի երկրորդ բուլղարացիներ»[5]: Նա բարձր գնահատական է տալիս հերոսամարտերը կազմակերպած քաղաքական ու ռազմական գործիչներին: Մասնավորապես, նա բարձր գնահատականներ է տալիս Երևանի զորախմբի հրամանատար գեներալ Մ. Սիլիկյանին, Սարդարապատ ռազմաճակատի հրամանատար գնդապետ Դանիել Բեկ Փիրումյանին և բազմաթիվ այլ գործիչների: Ս. Աֆանասյանը չի մոռացել և ըստ արժանվույն է գնահատել նաև հայ հոգևորականների մասնակցությունը մայիսյան հերոսամարտերին:

Մայիսյան հերոսամարտերի պատմական նշանակությունն ըստ արժանվույն ընդգծել է Հր. Սիմոնյանը՝ իր «Անդրանիկի ժամանակը» երկու գրքից բաղկացած աշխատության մեջ: Հր. Սիմոնյանը նկատում է, որ Սարդարապատին մոտեցող թուրքական զորքերը, մայիսի 21-ին նախապատրաստվելով վճռական գրոհի հայկական զորքի վրա, վճռել էին ուժգին թափով հարձակման անցնել՝ միանգամայն վստահ լինելով, որ շատ արագ խպառ խորտակելու են հայերի դիմադրությունը և տիրելու են հայոց երկրի վերջին կտորին»[6]: Նշելով, որ Սարդարապատի օրերին «ծայր առավ մի կատաղի ճակատամարտ՝ հայոց նոր Ավարայրը»՝ Հր. Սիմոնյանը նկարագրում է այդ ճակատագրական պահին տիրող միասնության մթնոլորտը. «Կռվի դաշտ էին շտապում նաև հայկական ջոկատները: Արարատյան դաշտի ամբողջ հայությունը ոտքի վրա էր, Երևանը գործում էր օրն ի բուն, առանց շունչ առնելու: Հայրենիքի պաշտպանության համար կռվի դաշտ էին ելել առանց կուսակցական խտրության, բոլորը՝ դաշնակցականն ու բոլշևիկը, հնչակյանն ու ռամկավարը, աշխարհիկն ու հոգևորականը»[7]: Սարդարապատի հաղթանակի մասին հեղինակը գրում է.

[4] Նույն տեղում, էջ 59:

[5] Նույն տեղում, էջ 66:

[6] Սիմոնյան Հր., Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, Երևան, 1996, էջ 141-142:

[7] Նույն տեղում, էջ 172:

«Սարդարապատի ճակատամարտում տարած հաղթանակը բացառիկ նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար: Այդ հաղթանակը նախ՝ բարձրացրեց հայ պաշտպանների մարտական ոգին. նրանք համոզվեցին, որ կարելի է ու պետք է կանգնեցնել թշնամուն, ավելին, կարելի է հաղթել նրան»: Հեղինակի եզրակացությունն այն է, որ «այդ հաղթանակը Արևելյան Հայաստանը փրկեց ավերածությունից, իսկ արևելահայությանը՝ ոչնչացումից»[8]:

Մայիսյան բախտորոշ հերոսամարտերին մի շարք արժեքավոր աշխատություններ է նվիրել Հ. Ավետիսյանը[9]: Արխիվային մեծածավալ նյութերի հիման վրա Հ. Ավետիսյանը նկարագարում է Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերի կարևորագույն նշանակությունը հայ ժողովրդի համար, ընդգծում է, որ միայն ու միայն դրանց շնորհիվ հնարավոր դարձավ հայոց անկախության վերականգնումը. «Հայ ժողովրդի Մայիսյան այդ հերոսամարտերը,- գրում է Հ. Ավետիսյանը,- վիժեցրին Հայաստանի արևելյան հատվածը նվաճելու և այնտեղի հայերին ևս ոչնչացնելու երիտթուրքական ծրագիրը: Հայերի հերոսական ոգին, համաժողովրդական սխրանքը, Հայրենիքի պաշտպանության միասնական կամքը ստիպեցին թուրքերին հաշվի նստել իրենց հետ: Հաղթանակը հայոց պետականության վերականգնման, Հայաստանի Հանրապետության հռչակման նախադրյալներ ստեղծեց»[10]:

Հարցի լուսաբանման համար խիստ արժեքավոր է նաև Հ. Ավետիսյանի «1918 թվականի մայիսյան հերոսամարտը և Հայաստանի Հանրապետության հռչակումը» հոդվածը: Նրանում հերթական անգամ արժեվորելով Մայիսյան հերոսամարտերը՝ հեղինակը գրում է, որ մայիսյան հերոսամարտերի նախօրյակին Բաթումում հայերից լիակատար անձնատվություն պահանջող և Հայաստանի տարածքները Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեջանի միջև բաժանող թուրքական պատվիրակները Մայիսյան կռիվներում թուրքական զորքերի ջախջախիչ պարտություն-ներից հետո կտրուկ փոխեցին իրենց վերաբերմունքը հայերի նկատմամբ: Այժմ, գրում է Հ. Ավետիսյանը, թուրքական պատվիրակության ղեկավար Խալիլ բեյը հայ գործիչներին ասում էր, որ «թուրքերը դեմ չեն Հայաստան կազմակերպելուն Կովկասի այն վայրերում, որոնք իրենց կողմից գրավված չեն»: Խալիլի այս խոսքերը երիցս հաստատում են, որ եթե չլինեին մայիսյան

---

[8] Նույն տեղում, էջ 144:

[9] Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997; Հայոց ազգային միասնության հաղթանակը. 1918 թվականի մայիս, Երևան, 1998:

[10] Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, էջ 236:

հերոսմարտերը՝ թուրքերը ավարտին կհասցնեին իրենց հայակուլ ծրագրերը, քանզի նրանք Հայաստանը ճանաչում էին միայն այն մասով, որ մասով որ չէին կարողացել նվաճել: Հ. Ավետիսյանը միանգամայն իրավացիորեն եզրակացնում է, որ Հայկական հարցում թուրքերի վերաբերմունքի փոփոխության պատճառը հայ ժողովրդի մայիսյան հերոսամարտերն էին[11]:

Հ. Ավետիսյանն իր աշխատություններում լիուլի ընդգծել է ինչպես զինվորականության և քաղաքական գործիչների, այնպես էլ հայ ժողովրդի միահամուռ մասնակցությունը հերոսամարտերին: Մասնավորապես, «Հայոց ազգային միասնության հաղթանակը. 1918 թվականի մայիս» ուսումնասիրության մեջ հեղինակը գրում է. «Հայրենիքը վերջնականապես կորցնելու վտանգը համախմբել ու ոտքի էր հանել ամբողջ հայ ժողովրդին. հարյուրավոր մարդիկ ներկայանում էին զորամաս, կամավոր զնում ճակատ: Գյուղացիները տրամադրում էին փոխադ-րամիջոցներ և սննդամթերք, մտնում աշխարհազորայինների շարքերը: Անկախ քաղաքական համոզմունքից, նրանք դուրս էին եկել գոյամարտի հանուն հայոց հողի և ազգային արժանապատվության: Մարտի էին դուրս եկել մտավորականը և հոգևորականը, բանվորն ու շինականը, երիտասարդները և ալեհերները կանայք ու աղջիկները, բոլոր քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները»[12]:

Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերի նշանակությունն ընդգծել է նաև Գ. Գալոյանը՝ իր «Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ.» չափազանց արժեքավոր աշխատության մեջ: Ժամանակաշրջանի իրադարձությունների բախտորոշ լինելը հայ ժողովրդի համար ըմբռնելի դարձնելու նպատակով հեղինակը հայ և օտար մեծաքանակ աղբյուրների հիման վրա զարգացնում է այն միտքը, որ Արևմտյան Հայաստանը վերանվաճած թուրքերը ձգտում էին բռնազավթել նաև Արևելյան Հայաստանը և այդ կերպ լուծել Հայկական հարցը: Թուրքերը, գրում է Գ. Գալոյանը. «ձգտում էին զենքի ուժով անեքսիայի ենթարկել նաև Արևելյան Հայաստանը և պատերազմի հաղթական ավարտի դեպքում որոշ տարածքներ հանձնել եղբայրական Ադրբեջանին, իսկ մնացածը մտցնել կայսրության տարածքների մեջ: Դրանով, ըստ իրենց,

---

[11] Ավետիսյան Հ., 1918 թվականի մայիսյան հերոսամարտը և Հայաստանի Հանրապետության հռչակումը, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1998, N 1-2, էջ 15:

[12] Ավետիսյան Հ., Հայոց ազգային միասնության հաղթանակը. 1918 թվականի մայիս, Երևան, 1998, էջ 98:

վերջնականապես լուծած կլինեին Հայկական հարցը»[13]: Հայերի գլխին կախված վտանգի ահավորությունն ու անխուսափելիությունը պարզելու համար առավել պարզ դարձնելու համար հեղինակը ներկայացնում է 1918թ. ապրիլի 3-ին Լոնդոնում ԱՄՆ-ի դեսպանին ուղղված ԱՄՆ պետքարտուղարի հետևյալ խոսքերը. «Թուրքերն առաջ են շարժվում…հայերը բնաջնջման իրական վտանգի մեջ են գտնվում… հայկական գյուղերն ու զորախմբերը մշտապես հարձակման են ենթարկվում զինված մահմեդականների կողմից… թուրքերը կարող են Կովկասում այնքան տարածքներ բռնազավթել, որքան ցանկանան… Հայերի կոտորածը երկու ամսվա ընթացքում պրակտիկորեն անխուսափելի է…»: Հեղինակը նկատում է, որ նույնիսկ ամենահանդուգն մտածողներն անգամ թույլ չէին տալիս իրենց մտածել, թե կարելի էր Արևելյան Հայաստանում ինչ-որ պետություն ստեղծել, Գ. Գալոյանը քիչ անց Նա նաև նկատում է, որ, այն պահին, երբ թշնամին գտնվում էր Սարդարապատի մատույցներում և սպառնում էր գրավել նույնիսկ Երևանը, Երևանի «քաղաքային դումայում աթոռներ գրաված ազգային ջոջերից ոմանք առաջարկում էին առանց դիմադրության Երևանը հանձնել թուրքերին», սակայն Երևանի նահանգի դիկտատոր Արամ Մանուկյանը արգելում է, նշելով, որ «Երևանը չպետք է դատարկել, թե պետք է դիմադրել մինչև վերջին մարդը»[14]: Հենց այդ պահն էլ դարձավ բեկումնային. «Եվ,- գրում է Գ. Գալոյանը,- հայերը հառնեցին ինչպես Ավարայրի ճակատամարտում: Մայիսի վերջին օրերին հայ աշխարհազորայինները…Ղարաքի-լիսայի, Բաշ-Ապարանի և Սարդարապատի տակ գլխովին ջախջախեցին թուրքական հղփացած զորքերին և կանխեցին Երևանի գրավումը»[15]: Հեղինակի եզրակացությունը մեկն է. մայիսյան հաղթանակները հնարավորություն տվեցին վերականգնել հայոց անկախ պետականությունը: Գ. Գալոյանը նաև հավելում է. «Հայաստանի Հանրապետության ստեղծումը թուրքերի նվերը չէր հայ ժողովրդին: Եթե այդ հարցի լուծումը կախված լիներ Թուրքիայից, անկախ Հայաստան երբեք էլ չէր ստեղծվի»[16]: Հեղինակն իրավացիորեն նշում է նաև, որ, երբ ծնվեց Հայաստանի Հանրապետությունը, թուրքերն ամեն ինչ արեցին այն ոչնչացնելու համար:

Մայիսյան հերոսամարտերի անանց նշանակությունն ընդգծված է նաև սփյուռքահայ պատմաբան Ռ. Հովհաննիսյանի «Հայաստանի

[13] Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ., Երևան, 1999, էջ 26:
[14] Նույն տեղում, էջ 26:
[15] Նույն տեղում, էջ 27:
[16] Նույն տեղում, էջ 31:

Հանրապետություն» երկհատոր հիմնարար աշխատության առաջին հատորում: Ներկայացնելով Հայաստանում և տարածաշրջանում հայության համար ստեղծված չափազանց աննպաստ ռազմաքաղաքական իրավիճակը, թուրքերի իրականացրած հայկական նոր ջարդերը, հեղինակն անցում է կատարում հերոսամարտերին: Պահին ճակատագրականությունը շեշտելու նպատակով հեղինակը նախ նշում է, որ թուրքական կանոնավոր և անկանոն զորաբաժինները ճնշում էին գործադրում Ղարաքիլիսայի, Բաշ-Ապարանի և Սարդարապատի վրա, որոնք Երևանի՝ վերջին հայկական քաղաքի, ռազմավարական մատույցներն էին: Այնուհետև Ռ. Հովհաննիսյանն ավելացնում է, որ հայ բնակչությունը միացած Հայկական կորպուսին, վճռական ճակատամարտերում կասեցնում է թուրքական հարձակումը և թշնամուն հետ շպրտում[17]: Նա, միանգամայն իրավացիորեն, նկատում է, որ Երևանի շրջակայքում հայերի տարած հաղթանակներից հետո թուրքերը հայերին զիջեցին 1.000 քառ. կմ տարածք: Հերոսամարտերի անմիջական հետևանք հանդիսացող Հայաստանի Հանրապետության գոյության փաստը հեղինակը համարում է «զարմանահրաշ նվաճում»[18]:

Մայիսյան հերոսամարտերին անդրադարձել և նրանց նշանակությունն ընդգծել է նաև Վ. Վիրաբյանը: «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ.» աշխատության մեջ հեղինակը նախ տալիս է 1918թ. գարնանը, և հատկապես մայիս ամսին հայ ժողովրդի համար ստեղծված ռազմական, քաղաքական և բարոյա-հոգեբանական ծանր դրությունը, հավելելով, որ ահավոր վտանգի պայմաններում «քաղաքական համոզմունքները դրվեցին մի կողմ, ժողովուրդը ոտքի ելավ հանուն հայրենիքի, և անարգ թշնամին կասեցվեց»: Այնուհետև Վ. Վիրաբյանը տալիս է մայիսյան հերոսամարտերի կազմակերպման և բուն հերոսամարտերի համառոտ, բայց բովանդակալից նկարագրությունը: Սարդարապատի մոտ հայկական զորքի հաղթանակի առիթով նա, կատարելով նախորդ շրջանների պատմաբանների ձևա-կերպումների յուրահատուկ ընդհանրացում, գրում է. «Դա հիրավի հայերի Հայրենական մեծ պատերազմն էր, գոյության դաժան կռիվը նենգ և դարավոր ոսոխի դեմ, որին մասնակցեցին բանվորները, արհեստավորները, հոգևորա-կանությունը, մտավորականությունը»[19]: Միանգամայն իրավացիորեն հեղինակը մայիսյան հերոսամարտերի արդյունք է համարում Հայաստանի

---

[17] Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, Հատոր I. Առաջին Տարին, 1918-1919, Երևան, 2005, էջ 35:
[18] Նույն տեղում, էջ 39:
[19] Վիրաբյան Վ., Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ., Երևան, 2011, էջ 16:

Հանրաետության ստեղծումը: Վ. Վիրաբյանը բարձր գնահատական է տալիս այն կազմակերպած գործիչներին:

Այսպիսով, Հայաստանի Երրորդ Հանրապետության հռչակումից հետո հայրենական պատմագրությունը անառարկելի փաստերի հիման վրա մայիսյան հերոսամարտերը համարում է հայոց բազմադարյան պատմության բացառիկ նշանակություն ունեցած իրադարձություններից, իրադարձություններ, որոնք դրեցին հայոց զարթոնքի սկիզբը: Հայրենի պատմաբանները միանգամայն իրավացիորեն ընդգծում են, որ բացառապես այդ հերոսամարտերի շնորհիվ հայ ժողովուրդը փրկվեց անհետացումից և ստեղծեց Հայաստանի Առաջին Հանրապետությունը: Միաժամանակ, հայ պատմաբանները անառարկելի կերպով մերժում են Հայաստանի Առաջին Հանրապետությունը որպես թուրքական նվեր մատուցելու թուրք կեղծարարների հորինվածքը: Գնահատելի է նաև այն, որ վերջապես ըստ արժանվույն գնահատվեցին հերոսամարտերը դարբնած գործիչները, ինչը կարող է մեծ լիցք հաղորդել հայրենասեր սերունդ դաստիարակելու հրատապ գործին:

**Մ. Վենգրժանովիչ**

**1918թ. մայիսյան հերոսամարտերը արդի հայ պատմագրության էջերում**

**Ամփոփում**

Հոդվածում ներկայացվում են արդի հայ պատմագրության գնահատականները 1918թ. մայիսյան հերոսամարտերին: Ընդգծվում է, որ արդի պատմագրությունը համակողմանի գնահատական է տալիս Սարդարապատում, Բաշ-Ապարանում և Ղարաքիլիսայում հայ ժողովրդի մղած հերոսական ճակատամարտերին: Ժամանակակից հայ պատմաբանները մայիսյան հերոսամարտերը համարում են հայոց պատմության բախտորոշ իրադարձություններից, որոնք դրեցին հայոց նորագույն վերածննդի սկիզբը: Շատ կարևոր է այն, որ արդի հայ պատմագրությունը բարձր է գնահատում նաև մայիսյան հաղթական հերոսամարտերը կազմակերպած և ղեկավարած ռազմաքաղաքական կառույցների և գործիչների դերը:

**М. Венгржанович**

**Майские сражения 1918г. в страницах современной армянской историографии**

**Резюме**

В статье представлены оценки майских сражении 1918г. в современной армянской историографии. Отмечается, что современная

историография дает всестороннюю оценку героических сражении армянского народа в Сардарабаде, Баш-Апаране и Караклисе. Современные армянские историки считают майские сражения судьбоносным событием в истории армянского народа, событие которое положило начало новейшего возрождения армянского народа. Очень важно то обстаятельство, что современная армянская историография высоко оценивает также роль тех военно-политических организации и деятелей, которые организовали и руководили майские победоносные сражения.

M. Vengrzhanovich

**The battles of may 1918 in the pages of modern armenian historiography**

**Summary**

The article presents the assessment of the battles of May 1918 in modern Armenian historiography. It is noted that modern historiography provides a comprehensive assessment of the heroic battle of the Armenian people in Sardarabad, Shushtar, Bash Aparan and Karakilis. Armenian modern historians evaluate May battle as the decisive event in the history of the Armenian people and consider it the beginning of Armenian revival. It is very important that the role of the military and political circles and individual figures who organized and led the May victorious battle is highly valued.

ՀԱՍՄԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ
Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ հայոց պատմության ամբիոնի հայցորդ
Երևանի Շ.Ռուսթավելու անվան հ. 23 հիմնական դպրոցի ուսուցչուհի

# ԼՈՋԱՆԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՁԱԽՈՂՈՒՄԸ

**Բանալի բառեր և արտահայտություններ**. Լոնդոնի խորհրդաժողով, «Ազգային օջախ», Ազգերի լիգա, հայկական հարց, ձախողում, պայմանագիր, Սևր, քաղաքական, միտք, պահանջներ:

**Ключевые слова и выражения**: лондонская конференция, “Национальный очаг”, Лига Наций, армянский вопрос, провал, договор, Севр, политический, мысль, требования.

**Key words and expressions:** London Conference, National Hearth (“National Hearth”), The League of Nations, Armenian Issue, failure, treaty, Sevr, political, thought, demands.

Լոնդոնի խորհրդաժողովից հետո արևմտահայության խնդրի շուրջ միավորված հայ քաղաքական ուժերը դարձյալ փորձեցին կյանքի կոչել «Ազգային օջախի» մասին սին գաղափարը, որն աստիճանաբար դուրս մղվեց օրակարգից: Ալ. Խատիսյանը, որն արդեն հայկական պատվիրակությունների գործունեության ոչ միայն ականատեսն էր, այլև՝ մասնակիցը, ճիշտ է ներկայացրել այն հոգեբանական պահը, որն առաջացել էր դաշնակիցների մոտ: Ըստ նրա՝ ՀՀ պատվիրակության անդամները պահպանում էին Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստանի գաղափարի անձեռնմխելիությունը, բայց գործնականում հանդիպում էին դժվարությունների: Իսկ այդ դժվարությունը կայանում էր հետևյալում՝ նման Հայաստանի պահանջն ուրիշ բան չէր նշանակում, քան «Խորհրդային Միութեան մէկ անդամին սահմաններուն ընդարձակման պահանջքը»[1]:

Պատահական չէ, որ երբ նրանք դնում էին Միացյալ Հայաստանի պահանջը, հետևյալ հարցն էր տրվում՝ «Բայց դուք կուզեք, որ Խորհրդային Հայաստանը ընդարձակուի, այսինքն՝ նոր հողամասեր անցնին բոլշեւիկներու իշխանութեան տակ»[2]:

[1] Խատիսեան Ալ.,Հայաստանի Հանրապետության ծագումը և զարգացումը, Բէյրութ, 1968, էջ 347:
[2] Նույն տեղում, էջ 347–348:

Բայց սա դեռևս հարցի մի կողմն էր: Իսկ իրենք պատկերացնում էին արդյո՞ք, թե ո՞վ պետք է հայությանը տար Միացյալ Հայաստանը: Այս հարցի պատասխանի որոնման ճանապարհին արդեն պետք է պարզ լիներ, որ սայթաքումներն անխուսափելի էին: Մանավանդ ֆրանս-թուրքական համաձայնագրից և հույների խորտակումից հետո: Հայերը ունեին առաջարկների երեք տարբերակ՝ ա) դեմ լինելով բոլշևիկներին, կողմ էին խորհրդային Հայաստանի սահմանների ընդարձակմանը, բ) եթե հայկական ինչ որ հողամասեր տրվեին, պետք է նրանց համար ստեղծվեր նոր վարչաձև՝ Ազգերի Լիգայի հսկողության տակ, գ) այդ հողամասերը պետք է մնային թուրքական տարածքներ:

Բնականաբար այս վերջինն իրականացավ, որովհետև արդեն տարածքներ տրամադրելը դաշնակիցներից չէր կախված, այլ՝ ռուսներից և թուրքերից:

Այս պարզ ճշմարտությունը կարծես թե ընկալելի չէր: Հակառակ դեպքում դժվար է պատկերացնել, թե ինչ շարժառիթներով են դիմումներ գրվել Լոզանի խորհրդաժողովի նախագահությանը: Դրանցից մեկում, որի տակ ստորագրել են Շ.Վրդ. Գասպարյանը, Դոկտ.Ծովիկյանը, դոկտ Թաշճյանը, Ռ. Դարբինյանը և Ե.Մեսիայանը, ուր մասնավորապես կարդում ենք. «Մենք ներկայացուցիչներս 20000 հայերու, որոնք թրքական վայրագութիւններու երեսէն՝ ապաստանած են Պոսթըն, Քէմպրիճ, Տորչէսթր, Ուօթըրթաուն, Չըլսի, Լին եւ շրջակաները, ձեզի կը դիմենք յանուն խաղաղութեան ու արդարութեան, որպէսզի՝ մեզի եւ մեր ութ հարիւր հազար տարագիր դժբախտ ազգակիցներուն համար, յատակացնէք՝ մեր պատմական հայրենիքին մէջ անկիւն մը՝ ազատ թրքական անտանելի բռնապետութենէն, ուր կարենանաք վերադառնալ, եւ սկսիլ վերաշինութեան եւ անարգել առաջադիմութեան մեր գործը»[3]:

1922թ. Լոզանում գումարված խորհրդաժողովում արդեն հայեր չէին հրավիրված: Այդ խորհրդաժողովը շարունակեց գնալ զիջումների՝ հօգուտ թուրքերի: Նրանց վերադարձվելու էր Կ. Պոլիսը, արևելյան Թրակիայի մի մասը, Միջերկրական և Սև ծովերի միջև գտնվող բոլոր տարածքները՝ մինչև Անդրկովկասի, Պարսկաստանի և Միջագետքի սահմանները: Իսկ Լոնդոնում հայերին խոստացած «Ազգային օջախ: պետք է ստեղծվեր Թուրքիայի արևելյան սահմանների մեջ, կոնկրետ որտեղ, հայտնի չէր»[4]:

Հայաստանին վերաբերվող որոշման մեջ մասնավորապես կարդում ենք. «Հայերի պահանջները պարփակվում են ընդհանուր ձգտման մեջ՝

[3] ՀԱԱ, Ֆ. 430, ց.1, գ.1357, թ.2:
[4] Տե՛ս Խատիսեան Ալ., նշվ. աշխ., էջ 350

պահպանել իրենց համար մի ազգային օջախ Փոքր Ասիայի կամ այն շրջանում, որտեղ նրանք ցարդ հաստատված են նշանակալից թվով: Ընտրությունն այդ շրջանի, ուր այդ օջախը կարելի կլինի առավել լավ ապահովել, կախված է քաղաքական, տնտեսական և սոցիալական այն պայմաններից, որոնք ներկա պահին հնարավոր չէ ճշգրիտ որոշել: Այնուհանդերձ, տերությունները մասնավորապես Ազգերի լիգային կառաջարկեն, **հաշտություն կնքելուց անմիջապես հետո, բանակցությունների մեջ մտնել օսմանյան կառավարության հետ հայերի համար նման մի ազգային օջախ ստեղծելու հարցի շուրջ և կջանան սահմանել այն պայմանները, որոնցում կարելի է իրականացնել նրա գոյության համար անհրաժեշտ երաշխիքները»**[5] (Ընդծումը մերն է-Հ. Ս.):

Ընդգծվածից պարզ է, որ դեռևս չճտված շրջանում ազգային օջախ ստեղծելու խնդիրը թողնվում էր հաշտությունից հետո, որը նշանակում է, որ հաջողությունը խիստ կասկածելի էր:

Ճշմարիտ է նկատել Ալ. Խատիսյանը, որ Փարիզի խորհրդաժողովի թերևս միակ դրական կետը «Ազդերու Լիգային ուղղուած հրավերն էր՝ միջամտելու Հայկական Հարցին: Իսկ ինչ կը վերաբերի մեծ տերութիւններուն. անոնք ակներեւ կերպով կը խոստովանէին իրենց անզօրութիւնը»[6]:

Իսկ Ազգերի Լիգայի հրավերն ուներ հետևյալ բովանդակությունը՝ «Ասամբլեան հրավիրում է Խորհրդին, իսկույն ևեթ (դաշնակիցների) Գերագույն խորհրդին հարկադրել ընդունելու պայմանագրում այնպիսի պայմաններ դնելու անհրաժեշտությունը, որոնք կապահովեին Հայաստանի ապազան և, ապա, հայերի համար ապահովել ազգային օջախ՝ ամբողջովին անկախ թուրքական կառավարումից»[7]:

Այսպիսով, ստացվում է, որ Ազգերի Լիգան պետք է հարկադրեր Թուրքիային ստեղծելու ազգային օջախ՝ նրա կառավարումից դուրս: Բայց արդյո՞ք դա հնարավոր էր: Այդքան քաղաքական թոհուբոհով անցած հայ քաղաքական ղեկավարները արդեն պետք է հասկանային, որ՝ ոչ: Նույն Ազգերի Լիգան իր սեպտեմբերի 22–ի նիստի մեջ ընդունած բանաձևում արդեն շրջանցում էր «անկախ թուրքական կառավարումից» ձևակերպումը

---

[5] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Պրոֆ. Ջ.Ա.Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972, էջ 732–733:

[6] Խատիսեան Ալ., նշվ. աշխ., էջ 351:

[7] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 734:

և արձանագրում, որ «Թուրքիոյ հետ խաղաղութեան բանակցութիւններու միջոցին անուշադիր չթողնուի նաեւ Հայերուն համար Ազգային Օճախ մը հաստատելու անհրաժեշտությունը»[8]:

Իսկ Լոզանի խորհրդաժողովում (1922 թ. նոյեմբեր 20-ից – 1923 թ. հուլիս 24-ը) առհասարակ դուրս մղվեց օջախի գաղափարը ևս:

Ճիշտ է ասված, որ «Լոզանի Դաշնագիրը կը փոխարինէ կամ յավելում մը կը բերէ Սևրի Դաշնագրին վրայ, որովհետև ստորագիր կողմերը նույնը չէին»[9]:

Այդ մասին ավելի մանրամասն է խոսում Արա Պապյանը, ասելով, որ. «Իրավական տեսանկյունից Սևրի և Լոզանի պայմանագրերն երկու տարբեր փաստաթղթեր են՝ տարբեր ոչ միայն մասնակիցների շրջանակով ու հարցերի ընդգրկումով, այլև, ամենակարևորը՝ էությամբ ու նպատակներով: Սևրի պայմանագիրը վերաբերում է Առաջին աշխարհամարտին, իսկ Լոզանի պայմանագիրը՝ 1919-1922թթ. տեղի ունեցած պատերազմական գործողություններին»[10]:

Մինչև հայ քաղաքական մտքի Լոզանում ունեցած դրսևորումներին անդրադառնալը, նշենք, որ արդեն երկու պատվիրակությունները դարձյալ հանդես էին գալիս միացյալ, որը նշանակում է, որ արևմտահայ և արևելահայ քաղաքական միտքը միաձուլված էր: ՀՀ պատվիրակության կողմից Միացյալ պատվիրակությունը ներկայացնում էին Ավ. Ահարոնյանը և Ալ. Խատիսյանը, Իսկ Ազգային պատվիրակության՝ Գ. Նորատունկյանը և Լ. Բաշալյանը: Պատվիրակության նիստերին մասնակցում էին նաև Արմեն Գարոն, Ա. Մանդելշտամը և ուրիշներ:

Հայկական միացյալ պատվիրակությունը գործում էր երկու ուղղություններով՝

ա) միջազգային հայասեր և մարդասեր անձանց տրամադրել հօգուտ Հայկական հարցի լուծման, որոնք իրենց դիմումնագրերով պետք է նպաստեին խորհրդաժողովում այդ հարցի քննարկմանը, բ) կոնֆերանսին ներկայացնել իրենց պահանջները, որոնք բնականաբար նահանջ էին կատարել Սևրի պայմանագրից: Փաստորեն նրանք գործում էին այն նոր հնարավորությունների սահմաններում, որոնք ներկայացրել էին

---

[8] Խատիսեան Ալ., նշվ. աշխ., էջ 353:

[9] Ասլանյան Ս.Ռ.,Մոսկվայի և Կարսի պայմանագրերի համեմատական վերլուծության փորձ, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2005, թիվ 1, էջ 182:

[10] Պապյան Ա., Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները, Ե., Ա. հ., 2007, էջ 32:

դաշնակիցները: Պատվիրակությանը չթույլատրվեց մասնակցել կոնֆերանսին, քանի որ այն չէր ներկայացնում Խորհրդային Հայաստանը: Ուստի և այն Խորհրդաժողովին է ներկայացնում մի հուշագիր, որով առաջարկում էր.

ա) Ազգային օջախի ստեղծում այն տարածքների վրա, որոնք սահմանազծել էր Վիլսոնը, բ) խորհրդային Հայաստանի տարածքների ընդլայնում Արևմտյան Հայաստանի նրան մասերի կցումով, այնպես, որ ապահովվի ելք դեպի ծով, գ) այս երկուսի չիրականացման դեպքում՝ Ազգայի օջախի ստեղծում Կիլիկիայում կամ Փոքր Հայքում[11]:

Ակնհայտ է, որ հայ քաղաքական միտքը դարձյալ չէր թոթափել իր ռոմանտիզմը: Այս պահանջները ներկայացնելով հաշվի չէր առնվում, որ Լոզանից առաջ դաշնակիցներն արդեն հրաժարվել էին Վիլսոնյան սահմաններից, իսկ Խորհրդային Հայաստանի սահմանների ընդարձակում Թուրքիայի հաշվին այլևս անհնար էր, քանզի կնքվել էր 1921 թ. մարտի 16-ի ռուս–թուրքական պայմանագրը, որը նույնությամբ հաստատվել էր հոկտեմբերի 23–ի Կարսի պայմանագրով և վերջապես այն, որ եթե դաշնակիցները լքել էին Կիլիկիան, ապա՝ ինչու՞ պետք է Թուրքիան համաձայնվեր այնտեղ հայկական օջախ ստեղծելու գաղափարին:

Հակառակ այս ամենին Ազգային տուն ստեղծելու դիմումագրերը հայոց կողմից շարունակվում էին ուղվել դեպի ԱՄՆ–ի սենատ և Լոզանի խորհրդաժողով: Այսպես, Նյու–Յորքի 10000 հայության անունից «Ծերակուտականներուն եւ յանձնախումբերուն» ուղղված մի գրության մեջ կարդում ենք. «Կը խնդրենք որ բարեհաճիք ձեր բարեացակամ ազդեցութիւնը ի գործ դնել ու որ պէտք է, Հայոց համար Ազգային Տուն մը ձեռք բերելու համար: Հայկական խնդրոյն միակ լուծումը պիտի ըլլայ, իրենց պատմական երկիրներուն մէջ հայոց ազատագրութեան համար դաշնակիցներու տուած խոստումներուն գործադրութիւնը»[12]:

Հայկական պատվիրակությունը հրավիրվում է մասնակցելու 1922 թ. դեկտեմբերի 22–ին կայացած ենթահանձնաժողովի նիստին: Այստեղ Ավ. Ահարոնյանը «գծեց քարտէսի վրայ սահմանագիծ մը, որ անցնելով Ռիզէէն ու Հասան Կալայէն՝ դուրս թողելով Էրզրումը, կը հասնէր մինչեւ Մուշ եւ Մէջը առնելով Վանայ ծովը՝ կը միանար Պարսկաստանի սահմաններուն»[13]:

---

[11] Տե՛ս Խատիսեան Ալ., նշվ. աշխ., էջ 373–374:

[12] ՀԱԱ, ֆ.430, ց.1, գ.1357, թ.12:

[13] Խատիսեան Ալ., նշվ. աշխ., էջ 382:

Իսկ Գ. Նորատունկյանի պատկերացմամբ՝ «Օճախը կը գծուի Ճիհունի, Սուրիոյ սահմաններու եւ Եփրատի միջեւ ու կերկարի դէպի հիւսիս՝ առնելով իր մէջ Սիսը և Մարաշը»[14]:

Ինչպես համոզվում ենք՝ նրանց համար վերջնականապես ճշտված չէր, թե ինչ սահմաններ էր ընդգրկելու Հայկական օջախը: Ճշմարտությունը պահանջում է նշել, որ դա պարզ չէր նաև դաշնակիցների համար, որոնք Թուրքիայի առջև խեղճացածի կարգավիճակում էին հայտնվել: Հայկական հարցին անդրադառնալը նրանց համար արդեն կրում էր սոսկ մարդասիրական բնույթ, որը չէին հասկանում հայ քաղաքական գործիչները, կամ եթե հասկանում էլ էին, չէին պատկերացնում որ մարդասիրական կոչերը խեղդվում են քաղաքական սառը հաշվարկների մեջ: Այսպես, 1923թ. հունվարի 6–ի նիստում, որը վերջնականապես պետք է բանաձև ընդուներ հայկական օջախի մասին, իտալացի դիվանագետ Մոնտանան «ճառով մը դիմեց Թուրքերուն՝ խնդրելով յատկացնել «վայր» մը Հայերը կեդրոնացնելու համար», որի սահմանները և վարչաձևը պետք է ընտրեր Ազգերի Լիգան (նույն իմաստով խոսեցին անգլիացի Ռումբոլդը և ֆրանսիացի Լա Քրուան): Իզզեթ փաշայից հետո Թուրքիայի երկրորդ պատվիրակ Ռիզա Նուր բեյը հայտարարում է, որ ինքը չի մասնակցի այնպիսի նիստին, ուր քննարկվելու է Հայկական հարցը, քանի որ հենց իրենք են կորստյան մատնել հայերին՝ գրգռելով թուրքերի դեմ և դուռն ուժգին խփելով՝ իր խորհրդականների հետ հեռանում է[15]:

Դրանից հետո, 1923թ. հունվարի 9–ին տեղի ունեցած ռազմատարածքային հանձնաժողովի նիստում Քերզոնը հայտնում է, թե հայերի հարցը դրված չէ քաղաքական հողի վրա և ինքը հույս ունի, «որ թուրքական պատվիրակությունը կհավատա իրեն, եթե բոլոր պատվիրակությունների հավանությամբ ինքը հայտարարի, որ այդ հարցում Տերությունները չեն հետապնդում քաղաքական որևէ նպատակ: Ինչպես ասաց պ-րն Բարրերը, իրենց նպատակն ունի զուտ մարդասիրական բնույթ»[16]:

Քերզոնն այնուհետև հայտնում է, որ օջախ ստեղծելով իրենք ամենևին նպատակ չունեն խախտելու Թուրքիայի սուվերենությունը և այդ պետության մեջ ստեղծելու «ինքնավար տարածք»: Այնուամենայնիվ, Իսմեթ փաշան մերժում է հայերի հետ կապված ցանկացած առաջարկ:

---

[14] Նույն տեղում, էջ 385:

[15] Տե՛ս նույն տեղում, էջ 401:

[16] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 756:

1923 թ. հուլիսի 24-ին ստորագրված Լոզանի պայմանագրի մեջ հայ անունն անգամ չկա: Այնտեղ խոսք է գնում միայն ոչ մահմեդական փաքրամասնությունների իրավունքների մասին, որոնք իբրև թե հավասարվում էին մահմեդականների իրավունքներին[17]:

Ինչպես իրավացիորեն նկատել է Ազատ Նասիպյանը. «Սեւրէն Լօզան՝ պատրանքներու, քաղաքական անկայունութեան եւ ուժի ցուցադրութեան բուռն պայքարի այդ եւ յեղյեղուկ ժամանակաշրջանին, կը թուի թէ ո՛չ Հայաստանը, ո՛չ Բրիտանիան եւ Դաշնակիցները, ո՛չ իսկ Ռուսիան կրցեր էին իրենց ըղձանքները եւ նպատակակէտերը պատշաճեցնել իրենց միջոցներուն կարելիութեանց»[18]:

Հ.Հ. պատվիրակության նախագահ պ. Ա.Ահարոնյանն այսպես է արտահայտվել Լոզանի կոնֆերանսի ձախողման մասին. «Ձախողանքը հայ ժողովրդի զանազան խաւերում առաջ է բերել եթէ ոչ յուսաբեկութիւն, գէթ մի ծանր շուարում: Անօգուտ է փորձել այդ անյաջողութեան ասենք, եթէ ոչ աղէտի բոլոր ծանրակշիռ արժէքը մեղմել: Եւ վաղաժամ է այդ ձախողանքի հետեւանքով այնպիսի վերագնահատումների անձնատուր լինել, որոնք ժխտէին մեր վերջին կէս դարու ազգային եւ քաղաքական գործունէութիւնը... Իմաստուն չէ փորձութեան ժամին հրաժարուել կամ յախուռն քննադատութեան ենթարկել ազգային իդէալն ու քաղաքականութիւնը.....»[19]:

Այսպիսով, Հայկական հարցը դուրս մղվեց օրակարգից: Մի վերջին անգամ այն շոշափվեց հուլիսի 17–ի նիստում՝ վերածվելով հայ զաղթականության հարցի[20]:

Իսկ ինչո՞ւ համար Անգլիան այդքան զիջող էր դարձել Թուրքիայի նկատմամբ: Վերոնշյալների հետ հիմնական պատճառ էր նաև այն, որ նա կարողացավ Լոզանում հասնել նեղուցների խնդրում իր տարբերակի ընդունմանը: Համաձայն դրա՝ ցանկացած դրոշակի ներքո նավերի անցում

---

[17] Տե՛ս Լազեան Գ., Հայաստան եւ Հայ դատը, հայ և ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Երևան, 1991, էջ 304–305:

[18] Նասիպեան Ա., Բրիտանիա եւ հայկական հարցը 1915-1923, Պէյրութ, 1994, էջ 249-250:

[19] Արշարունեան Վ., Ա.Ահարոնեանի Յայտարարութիւնները, «Հայրենիք» օրաթերթ, Բոստոն, 1923, մայիս 19, թիւ 3360:

[20] Տե՛ս Հայկական Հարց, հանրագիտարան, Երևան, 1996, էջ 162: Լոզանի Կոնֆերանսի մասին նաև տե'ս Армянский вопрос на Лозанской конференции, Тифлис, 1926, ст. 3–36, Mandelstam A. N.,

La Socie'le' des Nations et les Puissansces devant le problem Arme'nien, 2 e'me e'd., Beyrut, 1970, p. 260–280.

էր պահանջվում նեղուցներով ոչ միայն խաղաղ, այլև՝ պատերազմի ժամանակ, եթե պատերազմում Թուրքիան չեզոքություն էր պահպանում: Պատերազմում Թուրքիայի մասնակցության դեպքում նեղուցներով օգտվում են միայն չեզոք երկրների ռազմանավերը: Նեղուցները ենթակա էին ապառազմականացման և նրանց նկատմամբ պետք է սահմանվեր ինչպես սևծովյան, այնպես էլ մի քանի երկրների միջազգային հանձնաժողովի հսկողության: Սրանով Անգլիան հնարավորություն էր ստանում իր ռազմածովային ներկայությունն ապահովել սևծովյան ափերում, այսինքն ԽՍՀՄ նկատմամբ[21]:

Լոզանի խորհրդաժողովում Թուրքիայի հետ կնքված պայմանագրով փաստորեն չեղյալ հայտարարվեց Սևրի պայմանագիրը և այն դարձավ սուվերեն պետություն՝ միջազգայնորեն ճանաչված սահմաններով[22]:

Միանգամայն ճիշտ է Ռ.Դարբինյանը, գրելով, որ Լոզանի կոնֆերանսը «Մեծ խաչ մը դրաւ ոչ թէ հայկական դատին վրայ, այլ այն միամիտ ու ցնորամիտ ազգային մուրացկան քաղաքականութեան վրայ, որուն սկիզբ դրուեցաւ Պերլինի վեհաժողովի ատենեւ որ իր այնքան տխուր ու, յուսով ենք, վերջնական վախճանին յանգեցաւ Լօզանի մէջ»[23]:

Այդ մասին անրադարձ է կատարել նաև Ս.Պողոսյանը՝ նշելով, որ Լոզանի կոնֆերանսով փակվեց հայկական ազգային օջախի ստեղծման քննարկումները, իսկ արևմտահայ գաղթականները ստիպված էին մեծ դժվարությունների դիմագրավել և ապաստան փնտրել օտար երկրներում[24]: Շարունակելով իր միտքը նա նշում է, որ ձախողվեց նաև Կիլիկիայում հայկական ազգային օջախ ստեղծելու և հայ գաղթականությանը այնտեղ համախմբելու բրիտանական նախագիծը: Ի վերջո, ֆրանսիացիները Անկարայի և Լոզանի պայմանագրերով թուրքերին զիջեցին նաև մյուս հայկական տարածքները՝ մոտ 150.000 հայ բնակչությանը կանգնեցնելով

---

[21] Տե՛ս Նորագույն պատմություն 1918-1939թթ., Երևան, 1983թ., էջ 105–106:

[22] Տե՛ս «Ֆրանսիան եւ Լօզանի խորհրդաժողովը», «Հայրենիք» օրաթերթ, Բոստոն, 1923, մարտի 8, թիւ 3299:

[23] Դարբինեան Ռ., Հայ քաղաքական մտքի դեգերումները, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1923, ապրիլ, թիւ 6, էջ 3:

[24] Պողոսյան Ս., Կիլիկիայում հայկական Ազգային օջախ ստեղծելու հարցը, ՀՀ անկախության 20-ամյակին նվիրված «Ազգ, պետություն, հայրենիք. պետականության գաղափարը» երիտասարդ գիտնականների միջազգային գիտաժողովի (2011թ. նոյեմբերի 6-8, Ծաղկաձոր) հոդվածների ժողովածու, Երևան, 2012, էջ 125:

գաղթելու պարտադրանքի առաջ[25]:

Հայ խաբված քաղաքական գործիչները թեև շարունակեցին միաժամանակ էլ ծեծել տերությունների դռները, բայց նրանց համար Հայկական հարցը այլևս թաղված էր:

Ամփոփելով նշենք հետևյալը.

Առաջին. Լոզանի խորհրդաժողովում հայ քաղաքական միտքը առաջնորդվում էր «Ազգային օջախի» գաղափարը կյանքի կոչելու ուղղությամբ, որը ներմուծված էր հենց դաշնակիցների կողմից:

Երկրորդ. Այդ գաղափարը հնարավոր չէր իրականացնել, քանզի դաշնակիցները սիրախաղ էին սկսել Թուրքիայի հետ և ամենևին նպատակ չունեին հայերի համար պայքարի մեջ մտնել թուրքերի դեմ:

Երրորդ. Լոզանի պայմանագրով չեղյալ հայտարարվեց Սևրի պայմանագիրը, որն հայության համար այդպես էլ իրական չդարձավ, բայց որի համար մեծ տերություններին դատապարտելուց ավելի շատ անհրաժեշտ է պատճառներ տեսնել արևմտահայ և առհասարակ հայ քաղաքական մտքի ուղղվածությունների մեջ, որոնք սխալ նպատակակետ էին ընտրել և չէին բխում այն ռեալ իրավիճակից, որում գտնվում էր Հայաստանը 1918 թ. հետո:

**Հ. Սիմոնյան**

**Լոզանի խորհրդաժողովը և արևմտահայ քաղաքական մտքի վերջնական ձախողումը**

**Ամփոփում**

Լոնդոնի խորհրդաժողովից հետո արևմտահայության խնդրի շուրջ միավորված հայ քաղաքական ուժերը դարձյալ փորձեցին կյանքի կոչել «Ազգային օջախի» մասին սին գաղափարը: Իսկ Լոզանի խորհրդաժողովում (1922 թ. նոյեմբեր 20-ից – 1923 թ. հուլիս 24-ը) առհասարակ դուրս մղվեց օջախի գաղափարը ևս:

Հայկական հարցը դուրս մղվեց օրակարգից: Մի վերջին անգամ այն շոշափվեց հուլիսի 17–ի նիստում՝ վերածվելով հայ գաղթականության հարցի:

Լոզանի պայմանագրով չեղյալ հայտարարվեց Սևրի պայմանագիրը, որն հայության համար այդպես էլ իրական չդարձավ, բայց որի համար մեծ տերություններին դատապարտելուց ավելի շատ անհրաժեշտ է պատճառներ տեսնել արևմտահայ և առհասարակ հայ քաղաքական մտքի

---

[25] Պողոսյան Ս., Կիլիկիայի հարցը Սևրի և Լոզանի պայմանագրերում, ՎԷմ, Երևան, 2012, թիվ 3(39), էջ 164:

ուղղվածությունների մեջ, որոնք սխալ նպատակակետ էին ընտրել և չէին բխում այն ռեալ իրավիճակից, որում գտնվում էր Հայաստանը 1918 թ. հետո:

**А.Симонян**

**Лозаннская конференция и окончательный провал западноармянской политической мысли**

**Резюме**

После Лондонской конференции армянские политические власти, объединенные вокруг проблемы западных армян, снова пытались воплотить в жизнь напрасная идея о «Национального очага». А на Лозаннской конференции (20 ноября 1922 – 24 июля 1923) вообще был исключен идея очага.

Армянский вопрос исключается из повестки дня. Только в последний раз он был обсужден на заседание 17-ого июля, становясь вопросом армянской эмиграции.

С Лозаннским контрактом был отменен Севрский контракт, который так и не стал реальностью для армян, но для чего вместо осуждения великих держав, нужно увидеть причины в направленности западноармянской и вообще армянской мысли, которые выбрали неправильную цель и не истекала от реальной ситуации в которой находилась Армения после 1918 года.

**H.Simonyan**

**The Lausanne Conference and the final failure of the West-armenian political thought**

**Summary**

After the London conference Armenian political authority united around the issue of the Western Armenians, attempted again to bring to life the vain idea f a «National home», which is gradually left out of the agenda. And at the Lausanne Conference (November 20, 1922 - July 24, 1923) the idea qf home was generally excluded.

Thus, the Armenian issue is excluded from the agenda. Only in the last time it was discussed at a meeting on July 17, becoming an issue of the Armenian emigration.

With the Lausanne contract it was canceled the Sevres contract, that did not become a reality for the Armenians, but for what, instead of condemning the great powers, it is necessary to see the reasqn in the direction of West-Armenian and generally Armenian thought, whq have chosen the wrong target, and it does nqt expire from the real situation in which Armenia was after 1918.

ՎԱՂԱՐՇԱԿ ՀԱԿՈԲՅԱՆ
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի ասպիրանտ
ՀՏԴ 93/94

# ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԹՈՒՐՔԱԼԵԶՈՒ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԴԵՄ (1995-2010թթ.)

**Բանալի բառեր և արտահայտություններ.** Բուլղարիա, խորհրդարան, Հայոց ցեղասպանություն, թուրք, ԻԱՇ:

**Ключевые слова и выражения**: Болгария, геноцид, Движение прав и свобод, парламент.

**Key words and phrases**: Armenian Genocide, Bulgaria, "The movement of Rights and Freedoms", turk.

Հայոց ցեղասպանության փաստի միջազգային ճանաչման հարցում իր ուրույն տեղն ունի Բուլղարիան:

Նախ, Բուլղարիան Թուրքիայի սահմանակից պետություններից է, որի հետ ունի պատմական խնդիրներ, որոնք էլ իրենց արտացոլումն են գտնում ներքին և արտաքին քաղաքական օրակարգում:

Իսկ առավել կարևոր է այն, որ Բուլղարիայում ապրել և ապրում է մեծաքանակ թուրքալեզու փոքրամասնություն, որն իր քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների միջոցով կարողանում է ազդեցություն ունենալ Բուլղարիայի ներքին և արտաքին քաղաքականության, այդ թվում՝ նաև այդ երկրում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի վրա, ինչը 90-ականներից ի վեր տեղ է զբաղեցրել բուլղարական ներքաղաքական օրակարգում և երկու տասնամյակից ավել տարատիպ բանավեճերի, քննարկումների և տարաձայնությունների տեղիք է տվել:

Բուլղարիայում Հայոց ցեղասպանության ճանաչման խոչընդոտման գործում առաջամարտիկի դերակատարումը ստանձնել է 90-ականներից Բուլղարիայի քաղաքական կյանքում իրակտիվությամբ աչքի ընկնող թուրքական «Իրավունքների և ազատությունների շարժում» քաղաքական կուսակցությունը (ԻԱՇ), որը ներկայացնում է ինչպես Բուլղարիայի թուրքերի, այնպես էլ որոշ այլ մուսուլման փոքրամասնությունների շահերը: Իսկ Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ պայքարում, ինչպես կտեսնենք ստորև, սպասարկում է նաև պաշտոնական Անկարայի շահերը և ուղղակիորեն հետևում Թուրքիայի քաղաքականությանն ու կիրառում

թուրքական պետության առաջ քաշած թեզերը և ժխտողական մեխանիզմներն ու մեթոդները:

Հասկանալու համար Հայոց ցեղասպանության հարցում Թուրքիայի պաշտոնական քաղաքականությունը կիսող բուլղարաթուրքական կազմակերպությունների գործունեությունը՝ պետք է հասկանալ Բուլղարիայում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը, որը սկսվեց 90-ականների սկզբին և զգալի ակտիվացավ հատկապես 2000-ականների կեսերից:

ԽՍՀՄ փլուզումը և սոցիալիստական բլոկի կազմալուծումն ավելի ազատ և ակտիվ արտաքին քաղաքականության հնարավորություն շնորհեց պաշտոնական Սոֆիային, իսկ Հայաստանի Հանրապետության անկախացումը նոր փուլի սկիզբ էր Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացում:

Ուստի արդեն 90-ականների սկզբից Բուլղարիայում սկսվում են Հայոց ցեղասպանության վերաբերյալ հանրային և քաղաքական քննարկումներ: Հարցի քննարկումն ակտիվացնելու հետ մեկտեղ ակնհայտ էր, որ այս խնդրի շուրջ Բուլղարիայի հայ և թուրք փոքրամասնությունները պետք է հակադիր կարծիքներ կիսեին և տեղ զբաղեցնեին բարիկադների հակառակ կողմերում:

Այնուամենայնիվ, ակիայտ էր, որ թուրքական փոքրամասնությունն այս հարցում որոշ առավելություն ուներ՝ կապված իր ավելի մեծաքանակ լինելու և քաղաքական ու հասարակական կառույցների միջոցով Բուլղարիայում որոշում կայացնող շրջանակներում, այդ թվում՝ երկրի խորհրդարանում և տեղական ինքնակառավարման մարմիններում ավելի ներկայանալի լինելու հետ: Թուրքերը հնարավորություն ունեին սեփական կուսակցությամբ հանդես գալ Բուլղարիայի խորհրդարանում, ինչն առավելություն էր տալիս թուրքական ժխտողական շրջանակներին:

Իհարկե, սա զուտ հայ և թուրք փոքրամասնությունների ռեսուրսների ուղղակի համեմատությունն էր, սակայն այլ, այդ թվում՝ արտաքին գործոնները, ինչպիսիք էին բուլղարական այլ ուժերի շահերն ու հետաքրքրությունները, նույնպես կարևորագույն և վճռորոշ դերակատարում ունեին Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացում: Խիստ կարևոր էր նաև պաշտոնական Սոֆիայի քաղաքականությունը, որը Հայոց ցեղասպանության ճանաչմամբ կարող էր վատթարացնել հարաբերությունները Թուրքիայի հետ, ինչն էլ հետքայլի և անհամարձակ գործողությունների պատճառ էր դառնում:

Այսպիսով, Բուլղարիայում Հայոց ցեղասպանության հարցը դուրս էր միայն հայ և թուրք համայնքների միջև հակադրության մակարդակից և ներառում էր նաև բուլղարական տարբեր ուժեր, որոնք, կախված իրենց

քաղաքական կուրսից և ընտրած մարտավարությունից, փորձում էին պաշտպանել կողմերից մեկի մոտեցումները: Այն նաև Բուլղարիայի արտաքին քաղաքականության տեսանկյունից կարևորություն ներկայացնող հարց էր:

Բուլղարիայի առաջնորդ Տոդոր Ժիվկովի վարչակարգի հեռացումից հետո՝ 1990-ականների սկզբին Բուլղարիայում խոսքի ազատության հաստատման արդյունքում սկսվեց նաև Հայոց ցեղասպանության թեմայի հանրային քննարկումը:

Առաջին քայլերից էր 1995 թվականին Բուլղարիայի ազգային ժողովում Ցեղասպանության զոհերի հիշատակը հարգելու նախաձեռնությունը: 1995 թվականի ապրիլի 20-ին Բուլղարիայի խորհրդարանը մեկ րոպե լռությամբ հարգեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը, ապա հրապարակվեց նաև պաշտոնական հայտարարություն, որը ներկայացվեց նաև բուլղարական հեռուստաալիքներով:

«Մենք, որպես քաղաքակիրթ ժողովուրդ, որը ստորագրել է ցեղասպանությունների վերաբերյալ ՄԱԿ-ի կոնվենցիան, ինչպես և այլ միջազգային փաստաթղթեր, որոնք առնչվում են մարդու իրավունքներին, պաշտոնապես հիշատակում ենք (Հայոց ցեղասպանության) տարելիցը և հայտարարում ենք, որ պայքարելու ենք ցեղասպանությունների կանխման համար, քանի որ մենք մոտենում ենք 21-րդ դարին»,-նշված էր Բուլղարիայի խորհրդարանի տարածած հայտարարությունում, որն ընթերցեց նաև այդ ժամանակ Բուլղարիայի խորհրդարանի նախագահի Բլագովեց Սենդովը:

Հատկանշական է, որ հայտարարությունը ստացել էր Բուլղարիայի խորհրդարանի 94.5 տոկոսի ձայները[1], իսկ դեմ էին արտահայտվել Թուրքիայի խորհրդարանում ներկայացված թուրք պատգամավորները՝ ԻԱՇ-ի գլխավորությամբ:

Սա Բուլղարիայում առաջին դեպքն էր, երբ երկրի օրենսդիր մարմնի մակարդակով քննարկվում էր Հայոց ցեղասպանության հարցը: Այս հայտարարությամբ որոշակի հիմք էր դրվում հետագայում Բուլղարիայի ազգային ժողովում Հայոց ցեղասպանության հարցի ճանաչման գործընթացի համար:

Այնուամենայնիվ, այս հայտարարությանն այլ լուրջ գործողություններ ուղղակիորեն չհաջորդեցին, իսկ հետագա տասը տարիներին Հայոց ցեղասպանության հարցը, մեծ հաշվով, բուլղարական

[1] Bulgaria recognize the Armenian Genocide, The Armenian Cause Newsletter, 06. 1995, Vol. 12, No. 1 (30), p. 3.

օրենսդրական մարմնի օրակարգում տեղ չգտավ, թեև հասարական մակարդակում այդ թեմայով քննարկումներն ու գործողությունները շարունակվում էին:

Բուլղարիայում իշխանության ղեկին գտնվող քաղաքական ուժերը փորձում էին Հայոց ցեղասպանության հարցն օրակարգից դուրս պահել՝ Անկարայի և Սոֆիայի միջև հավելյալ լարվածություն չստեղծելու, ինչպես և Բուլղարիայում գործընկեր հանդիսացող թուրքական կառույցների (ԻԱՇ-ի գլխավորությամբ) հետ հարաբերությունները պահպանելու համար:

1990-ականներին ԻԱՇ-ը ներկայացված էր բուլղարական օրենսդիր մարմնում, իսկ 2000-ականներին նաև իշխող կոալիցիոն կառավարության մաս էր կազմում, ինչը որոշակիորեն նվազեցնում էր Հայոց ցեղասպանությունը ճանաչող նախաձեռնությունների հաջողության հնարավորությունը, քանի որ թուրքական կուսակցությունը կտրուկ դեմ էր Ցեղասպանության ճանաչմանը: ԻԱՇ-ը, ինչպես վերը նշեցինք, Ցեղասպանության հերքման թուրքական պաշտոնական քաղաքականության իրականացնողն ու շարունակողն էր և մշտապես հանդես էր գալիս Ցեղասպանության ճանաչման գործընթացների դեմ:

Իրավիճակը փոփոխություն կրեց 2000-ականների կեսերին, երբ Բուլղարիայի քաղաքական դաշտում սկսեց գործել բուլղարական ազգայնական «Ատակա» (թրգմն՝ «Գրոհ») կուսակցությունը[2]: Ազգայնական քաղաքական ուժն իր գոյության ամենասկզբից ընդգծված հակաթուրքական դիրքորոշում որդեգրեց, ինչը որոշակիորեն անդրադարձավ նաև Բուլղարիայում Հայոց ցեղասպանության թեմայի քննարկման և ճանաչման գործընթացի վրա: Կուսակցությունն իր գոյության հետագա տարիներին համակարգային և հետևողական ձևով սկսեց Բուլղարիայի ազգային ժողով ներկայացնել Հայոց ցեղասպանության ճանաչմանն ուղղված օրինագծեր և առաջարկներ[3]:

Բացի «Ատակայից», Բուլղարիայում գործող այլ քաղաքական ուժեր էլ մաս կազմեցին Հայոց ցեղասպանության ճանաչման կողմնակիցների ճամբարին: Նման կուսակցություններից էին, օրինակ, «Մակեդոնական ներքին հեղափոխական կազմակերպություն», «Բուլղարիայի փրկության ազգային ճակատ», «Այլընտրանք հանուն

---

[2] Партия АТАКА, 20 точки на партия АТАКА, http://www.ataka.bg/index.php?option=com_content&task=view&id=13&Itemid=51.

[3] Bechev D.,A genocide of our own: Bulgaria and the memory of Ottoman Armenians, Open Democracy, 23.04.2015, https://www.opendemocracy.net/can-europe-make-it/dimitar-bechev/genocide-of-our-own-bulgaria-and-memory-of-ottoman-armenians.

բուլղարական վերածննդի» (ԱՀԲՎ) կուսակցությունները[4], ինչպես և այլ քաղաքական և հասարակական ուժեր:

Ի դեպ, Բուլղարիայում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի ակտիվացումն արտացոլում էր ինչպես այս հարցում համաշխարհային միտումները, այնպես էլ կրում էր զուտ բուլղարական իրականության հետքերը:

Մասնավորապես, Բուլղարիայում ևս նկատվել և նկատվում է համաշխարհային քաղաքականությունում կիրառվող ցավալի այն փորձը, երբ Հայոց ցեղասպանության թեման սկսում է կիրառվել որպես քաղաքական լծակ և գործիք Թուրքիայի դեմ:

Իհարկե, պետք չէ ի սպառ անտեսել Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում բուլղարական ուժերի՝ պատմական արդարությանը հասնելուն ձգտումը, սակայն չի կարելի թերագնահատել նաև Ցեղասպանության հարցի քաղաքական կիրառկումը միջպետական և ներքաղաքական զարգացումներում:

Ինչպես վերը նշեցինք, Հայոց ցեղասպանության հարցի արծարծումը ոչ միայն կոնկրետ քաղաքական խնդիրներ է լուծում, այլ կարծում ենք՝ Հայոց ցեղասպանության հարցում բուլղարական ազգայնական շրջանակների քաղաքականությունը կապված է նաև բուլղար և հայ ժողովուրդների նման պատմության հետ, քանի որ երկու ազգն էլ դարեր շարունակ եղել է օսմանյան լծի տակ և թուրքերի կողմից ենթարկվել համակարգված և կանխամտածված կոտորածների:

Այսպիսով, հակաթուրքական տրամադրությունները ոչ միայն արդի քաղաքական խնդիրների համատեքստում են, այլ նաև ունեն խորը պատմական հիմքեր, որոնք էլ իրենց ազդեցությունն են թողնում բուլղարական ազգայնական ուժերի, նրանց գաղափարը կիսող բուլղարացիների և հայ համայնքի հարաբերությունների և համագործակցության վրա:

Բուլղարիայում Հայոց ցեղասպանության ճանաչման համար ակտիվ պայքարող «Ատակա» կուսակցությունը, որը պաշտոնապես գրանցվեց 2005 թվականին, արդեն նույն տարում կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքներով կարողացավ անցնել Բուլղարիայի ազգային ժողով:

---

[4] Կոլարով Գ., Բուլղարիայի կառավարության անդամները և խորհրդարանի պատգամավորները Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության ճանաչման մասին, «Նորավանք» ԳԿՀ, 03.04.2015, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=13301.

Բուլղարական խորհրդարան մուտք գործելու հաջորդ տարում՝ 2006 թվականին ազգայնական կուսակցությունը Բուլղարիայի ազգային ժողովին ներկայացրեց Հայոց ցեղասպանության փաստը ճանաչելու վերաբերյալ օրինագիծ: 2006 թվականի հունվարի 7-ին «Ատակա» կուսակցության խմբակցությունն առաջ քաշեց բուլղարական օրենսդիրի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման օրինագիծը, որը մի քանի օր անց ուղարկվեց բուլղարական խորհրդարանի արտաքին հարաբերությունների և մարդու իրավունքների ու կրոնական հարցերով հանձնաժողովներին: «Ատակայի» կազմած փաստաթղթում նշվում էր, որ Օսմանյան կայսրությունը ցեղասպանություն է գործել նաև բուլղար ժողովրդի հանդեպ, ուստի «Օսմանյան կայսրությունում 1915-1922 թթ.հայերի դեմ գործադրված ցեղասպանությունը նաև բուլղար ժողովրդի պատմության տեսանկյունից առանձին խորհուրդ է պարունակում»[5]:

Այնուամենայնիվ, նաև թուրքական քաղաքական ուժի ակտիվ միջամտության հետևանքով օրինագիծը Բուլղարիայի խորհրդարանում չհաջողեց: Պետք է փաստել նաև, որ ԻԱԾ-ը փորձում էր թույլ չտալ, որպեսզի օրինագիծը քվեարկության դրվի Բուլղարիայի խորհրդարանի լիագումար նիստին, սակայն այս հարցում նրանք ձախողեցին, և օրինագիծն ընդունվեց խորհրդարանի օրակարգ եդրվեց քվեարկության[6]:

Մինչ «Ատակայի» նախաձեռնած օրինագիծը կքննարկեին բուլղարական խորհրդարանի համապատասխան հանձնաժողովներում ԻԱԾ-ի՝ Քիրջալիից պատգամավոր Ռեմզի Օսմանը թուրքական լրատվամիջոցներին հայտարարեց, թե «օրինագիծը չի արտացոլում պատմական իրողությունը և դրա միջոցով ցանկանում են ռումբ դնել երկու երկրների (Բուլղարիայի և Թուրքիայի - Վ. Հ.) հարաբերությունների հիմքերին»:

«Այս օրինագծի ի հայտ գալը խորհրդարանում անընդունելի է: «Ատական» խորհրդարան անցնելուց ի վեր սադրանքների է դիմում: Այս օրինագծի դեմ մեր վերաբերմունքն ենք արտահայտելու: Այնպես ենք

[5] Նահապետյան Հ., «Բուլղարաթուրքեր. Անկարայի 5-րդ շարասյունը», 21-րդ Դար, թիվ 1 (15), 2007թ, էջ 95-96:

[6] Laçiner S., “Ermeni sorunu, diaspora ve Türk dış politikası: Ermeni iddiaları Türkiye'nin dünya ile ilişkilerini nasıl etkiliyor?”, 2008, s. 458.

անելու, որ օրինագիծը մերժվի ոչ թե խորհրդարանում, այլ հանձնաժողովներով անցնելիս», - հայտարարեց Ռ. Օսմանը[7]:

2006 թվականի մայիսի 10-ին կայացած Բուլղարիայի խորհրդարանի նիստին ներկա 174 պատգամավորների 79 «ոչ», 55 «դեմ» և 40 «ձեռնպահ» ձայների համամասնությամբ «Օսմանյան կայսրությունում 1915-1922 թվականների հայերի դեմ իրականացրած ցեղասպանությունը ճանաչող» օրինագիծը չընդունվեց:

Օրինագծի ընդունման ձախողումից հետո թուրքական լրատվամիջոցներում թեմայի վերաբերյալ հայտարարություններով հանդես եկավ ԻԱՇ-ի ևս մեկ թուրք պատգամավոր Լյութֆի Մեսթանը, ով մշտապես աչքի էր ընկնում Հայոց ցեղասպանության փաստը ժխտող հայտարարություններով: Մեսթանը, հստակորենմեջբերելով պաշտոնական Անկարայի հռետորաբանությունում կիրառվող այն հայտնի թեզը, թե «ցեղասպանության հարցը պետք է քննեն ոչ թե խորհրդարանները, այլ պատմաբանները», նշեց, որ պատմական վերքերին անդրադառնալով՝ չեն հասնի խաղաղության և հանգստության»[8]:

Թեև 2006 թվականի փորձը հաջողությամբ չավարտվեց, և «Ատական» ու նրա դիրքորոշումը կիսող ուժերն ու պատգամավորները չկարողացան անցկացնել օրինագիծը, սակայն այս քաղաքական ուժը ոչ միայն չէր պատրաստվում հարցը դուրս բերել օրակարգից, այլ ինչպես ցույց տվեց փորձը, հետագա տարիներին էլ շարունակեց իր ակտիվ քաղաքականությունն այս տիրույթում:

2007 թվականի ապրիլին Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հարգելու նախաձեռնությամբ հանդես եկավ «Սիմեոն Երկրորդ ազգային շարժում» կուսակցությունից խորհրդարան անցած ազգությամբ հայ պատգամավոր Ռուբեն Քրիքորյանը: Ապրիլի 25-ի նիստի ժամանակ ազգությամբ հայ պատգամավորն առաջարկեց մեկ րոպե լռությամբ հարգել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը: Առաջարկից հետո ԻԱՇ-ի անդամները ցուցադրաբար լքեցին խորհրդարանի դահլիճը:

Հատկանշական է, որ այդ ժամանակ ԻԱՇ կուսակցությունն իշխող կոալիցիայի կազմում էր Սիմեոն Երկրորդ ազգային շարժում» կուսակցության և Սոցիալիստական կուսակցության հետ:

---

[7] “Bulgaristan Meclisi'ne, sözde Ermeni soykırım yasa tasarı verdiler, Gazetevatan, 21.02.2006, http://www.gazetevatan.com/bulgaristan-meclisi-ne--sozde-ermeni-soykirim-yasa-tasari-verdiler-71936-gundem/.

[8] “Bulgaristan Ermeni karar tasarısını reddetti”, Hürriyet, 10.05.2006, http://www.hurriyet.com.tr/bulgaristan-ermeni-karar-tasarisini-reddetti-4391549.

Այսպիսով, ԻԱՇ-ը բոյկոտում էր նույն կոալիցիայի մյուս քաղաքական ուժի ներկայացուցչի նախաձեռնությունը: Ստեղծված իրավիճակի կապակցությամբ «Ատակայի» առաջնորդ Վոլեն Սիդերովը հայտարարեց. «Իշխող մեծամասնության մեջ կա կուսակցություն, որը պաշտպանում է Թուրքիայի շահերը: Այդ կուսակցության ներկայացուցիչները չեն հարգում մեկուկես միլիոն հայերի հիշատակը»[9]:

Մեկնաբանելով թուրքական կուսակցության քայլը՝ ԻԱՇ-ի ներկայացուցիչ Լյութֆի Մեսթանը նշեց, որ «խորհրդարանը լավագույն վայրը չէ պատմական քննարկումների համար»: Մեսթանը հայտարարեց նաև, թե «Թուրքիան և Հայաստանը ներկայում երկխոսություն են իրականացնում՝ գտնելու պատմական դեպքերի ճշմարտությունը»[10]: Այս դեպքում ևս ակնհայտ էր, որ Բուլղարիայում գործող թուրքական կուսակցության պատգամավորն ուղղակիորեն մեջ էր բերում Անկարայի դիվանագիտական կորպուսի կողմից այդ ժամանակ հաճախ կիրառվող այն հնարքը, ըստ որի՝ Ցեղասպանության թեմայի քննարկման ժամանակ հայտարարում էին, որ Հայաստանն ու Թուրքիան փորձում են կարգավորել հարաբերությունները, երկխոսություն են վարում, իսկ հարցի քննարկումը կարող է խոչընդոտել և խանգարել գործընթացին[11]: Այս կերպ թուրքական դիվանագիտությունը փորձում էր հայ-թուրքական կարգավորման գործընթացի միջոցով կանխել երրորդ երկրներում Հայոց ցեղասպանության ճանաչմանն ուղղված քայլերի իրականացումը: Ինչպես ցույց տվեց Մեսթանի հայտարարությունը, նույն այս մարտավարությունը փորձ կատարվեց կիրառել նաև Բուլղարիայի դեպքում:

2007 թվականի սկզբին «Ատակա» կուսակցության կողմից փորձ կատարվեց Հայոց ցեղասպանությունը ճանաչող օրինագիծը բերել խորհրդարան, սակայն այն կրկին անհաջող ելք ունեցավ: Քննարկումների ժամանակ խորհրդարանը լքեցին ԻԱՇ-ի անդամները: Իսկ ահա ընդդիմադիր «Դեմոկրատները՝ հանուն ուժեղ Բուլղարիայի» կուսակցության ղեկավար Եկատերին Միխայլովան, քննադատելով

---

[9] Նահապետյան Հ., «Բուլղարաթուրքեր. Վերջին զարգացումները», «Նորավանք» ԳԿՀ01.03.2010, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=4340&sphrase_id=50844:

[10] Bulgaria's Turkish Party Won't Recognize Genocide in Armenia, Novinite,25.04.2007, http://www.novinite.com/articles/79794/Bulgaria%27s+Turkish+Party+Won%27t+Recognize+Genocide+in+Armenia.

[11] Խոսքը 2009 թվականի հոկտեմբերի 10-ին Ցյուրիխյան արձանագրությունների ստորագրումից հետո սկիզբ առած հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացի մասին է:

նախագծի տապալումն իշխող ուժերի կողմից, հայտարարեց. «Էթնիկ թուրքերի ձայները շատ կարևոր են ձեզ համար, որպեսզի շարունակեք մնալ կառավարությունում: Այդ պատճառով էլ չեք ցանկանում ընդունել, որ Հայոց ցեղասպանություն է եղել»: Բացի այդ, ընդդիմադիր ուժերը, այդ թվում «Դեմոկրատները՝ հանուն ուժեղ Բուլղարիայի» և «Ատակա» կուսակցությունների անդամները բոյկոտեցին մայիսի 2-ի խորհրդարանի նիստը[12]:

2007 թվականի ապրիլի 25-ին կայացած Բուլղարիայի ազգային ժողովի նիստի ընթացքում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հարգող հայտարարությունները ևս հանդիպեցին ԻԱՇ կուսակցության ներկայացուցիչների դիմադրությանը: Մասնավորապես, ԻԱՇ-ի ակտիվ անդամներից Լյութֆի Մեսթանը նշեց իր կրկնվող արտահայտությունն առ այն, թե «խորհրդարանը պատմական հարցերի քննման վայր չէ», ինչից հետո արժանացավ ընդդիմադիր խմբակցությունների բողոքի ձայներին[13]:

Նման մեկ փորձ էլ «Ատակա» կուսակցությունն իրականացրեց 2008 թվականի հունվարին՝ Բուլղարիայի ազգային ժողով ներկայացնելով Հայոց ցեղասպանության ճանաչմանը վերաբերող օրինագիծ: Նիստին ներկա 173 պատգամավորից 63-ը «դեմ», 50-ը «կողմ» քվեարկեց «Ատակայի» ներկայացրած օրինագծին, իսկ 60-ը «ձեռնպահ» մնաց: Այստեղկարևորէրնաև այն, որ թեև «Ատական» Բուլղարիայի խորհրդարանում ուներ 21 պատգամավորական մանդատ, սակայն այս կուսակցությանը հաջողվեց հավաքել 50 «կողմ» ձայն, ինչը վկայում էր այն մասին, որ բուլղարական խորհրդարանում Ցեղասպանության ճանաչման հարցում դրական տրամադրված այլ պատգամավորներ և խմբեր էլ կային:

Թուրք հետազոտողներից Քաղեր Օզլեմի կարծիքով՝ օրինագծին կողմ քվեարկած բուլղար պատգամավորներն այդ կերպ ցույց էին տալիս նաև, որ դեմ են Թուրքիային և կիսում են ազգայնական կողմնորոշումը[14]:

Օրինագծի անցկացման դեմ կրկին պայքարում էր ԻԱՇ կուսակցությունը, որը շարունակում էր մաս կազմել իշխող կոալիցիային:

---

[12] “Bulgaria's Opposition Walks out over Armenian Genocide in Ottoman Empire, Novinite, 02.05.2007, http://www.novinite.com/articles/80079/Bulgaria%27s+Opposition+Walks+out+over+Armenian+Genocide+in+Ottoman+Empire.

[13] Բուլղարիայի ազգային ժողովի պաշտոնական կայք, Стенограми от пленарни заседания, 25.04.2007, http://www.parliament.bg/bg/plenaryst/ns/2/ID/290.

[14] Özlem K., Bulgaristan Ermenileri ve 1915 Olayları’na İlişkin Ermeni İddiaları Bağlamında Bulgar Milliyetçileriyle İşbirliklerine Yönelik Bir Değerlendirme (2005–2014), Turkish Journal of TESAM Academy, January 2015 . 2 (1), s. 237.

Թուրքական կուսակցությունից պատգամավոր Ռեմզի Օսմանը քվեարկությունից հետո հերթական անգամ մեջբերեց պաշտոնական Անկարայի կողմից կիրառվող թեզն առ այն, թե «պատմական հարցերը չպետք է քննարկվեն խորհրդարանում, այլ այդ հարցերը պետք է թողնել պատմաբաններին»[15]:

Օսմանը նաև պաշտպանեց թուրքական ժխտողական և պատմական իրականությունը խեղաթյուրող այն թեզը, թե իբր «հայկական ավազակային խմբերն արտաքին ազդեցությամբ թուրք զինվորների և բնակչության դեմ իրականացրել են արյունալի գործողություններ»[16]: Բուլղարիայի խորհրդարանի թուրք պատգամավորի այս խոսքերը ևս մեկ անգամ հավաստեցին այն փաստը, որը ԻԱՇ-ն հիմնովին հետևում է Թուրքիայի՝ Ցեղասպանության հարցում ժխտողական քաղաքականությունն ու ակտիվորեն կիրառում այս հարցում թուրքական պետական թեզերը:

Մինչ օրենսդրական մակարդակում անհաջող փորձերին, 2008 թվականին զգալի ակտիվացավ տեղական ինքնակառավարման մարմինների մակարդակով Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը: Հայոց ցեղասպանության ճանաչման նախաձեռնություններ էին իրականացվում տեղական ինքնակառավարման մարմինների մակարդակով, որտեղ ևս ինչպես թուրքական կառույցները, այնպես էլ թուրք բնակչությունը որոշակի քայլեր էին իրականացնում և խոչընդոտներ ստեղծում:

2008 թվականի մայիս և հունիս ամիսներին Պլովդիվի, Վառնայի, Բուրգասի, Ռուսեի, Փազարջիկի և Ստարա Զագորայի քաղաքային խորհուրդներն ընդունեցին հայտարարություններ, որոնցով ճանաչում էին հայերի դեմ իրականացրածը որպես ցեղասպանություն[17]: 2009 թվականի դրությամբ Հայոց ցեղասպանությունը ճանաչած բուլղարական քաղաքների թիվը հասնում էր 12-ի[18]:

---

15 Bulgarian lawmakers vote against bill backing Armenian ‘genocide’ claims, Today’s Zaman,18,01,2008, http://www.todayszaman.com/diplomacy_bulgarian-lawmakers-vote-against-bill-backing-armenian-genocide-claims_131919.html.

16 Bulgaristan' dan sözde soykırıma ret, Hürriyet,18.01.2008, http://www.hurriyet.com.tr/bulgaristandan-sozde-soykirima-ret-8046292.

17 Bechev D., A genocide of our own: Bulgaria and the memory of Ottoman Armenians, Open Democracy, 23.04.2015, https://www.opendemocracy.net/can-europe-make-it/dimitar-bechev/genocide-of-our-own-bulgaria-and-memory-of-ottoman-armenians.

18 Bulgaria Parliament Speaker Arrives in Turkey amidst Genocide Scandal, Novinite, 12.03.2009,

Այսպիսով, Բուլղարիայում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացն ընթանում էր ոչ միայն օրենսդրական դաշտում, այլ նաև տեղական ինքնակառավարման մարմինների մակարդակով, որտեղ հայկական կազմակերպություններն ու Ցեղասպանության ճանաչման համար պայքարող բուլղարական քաղաքական և հասարակական կառույցները հանդիպում էին բուլղարաթուրքերի պայքարին ու դիմադրությանը, սակայն, ինչպես վերը նշեցինք, կարողանում էին հաջողություններ գրանցել:

Հետաքրքրական է 2008 թվականի մայիսին Ռուսեի շրջանի դատարանի վճիռը, որն ուժի մեջ էր թողնում ավելի վաղ Ռուսե քաղաքի քաղաքային խորհրդի որոշումը, որով Հայոց ցեղասպանությունը ճանաչող հայտարարություն էր արվել: Քաղաքային խորհրդարանի թուրք անդամները, որոնք հարում էին ԻԱՇ կուսակցությանը, Ռուսե շրջանի ղեկավար Մարիա Դիմովայի հետ մեկտեղ հայց ներկայացրին դատարան՝ անօրինական համարելով քաղաքային խորհրդի՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչող հայտարարություն ընդունելու որոշումը: Դատարանը, սակայն, մերժեց քաղաքապետի և թուրքական համայնքի ներկայացուցիչների հայցն ու ուժի մեջ թողեց քաղաքային խորհրդի որոշումը[19]:

Բուլղարական Շումեն քաղաքում ևս Հայոց ցեղասպանությունը ճանաչող որոշմանը դիմադրում էին տեղի թուրքերը, որոնք փորձում էին խանգարել Ցեղասպանության ճանաչմանը կարևոր պաշտոններ զբաղեցնող էթնիկ թուրքերի միջոցով:

ՏԻՄ մակարդակում Հայոց ցեղասպանության ճանաչումն անհանգստություն առաջացրեց ոչ միայն Բուլղարիայի թուրքական կազմակերպությունների շրջանում, այլ նաև Թուրքիայում:

Օրինակ, երբ 2008 թվականի մայիսի 29-ին Բուրգասի քաղաքային խորհուրդը ընդունեց «1915-1922 թթ Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության ճանաչման» որոշումը, այն առաջացրեց պաշտոնական Անկարայի դժգոհությունը: Մասնավորապես, որոշման ընդունումից մի քանի օր անց Բուրգասում Թուրքիայի հյուպատոս Իսմայիլ Սեֆա Ուչերը նամակով դիմեց Շումենի քաղաքապետ Կրասիմիր Կոստովին՝ իր

---

http://www.novinite.com/articles/101886/Bulgaria+Parliament+Speaker+Arrives+in+Turkey+amidst+Genocide+Scandal

[19] Bulgarian Court Rules in Favor of Armenian Genocide Recognition, Novinite, 24.05.2008, http://www.novinite.com/articles/93444/Bulgarian+Court+Rules+in+Favor+of+Armenian+Genocide+Recognition.

դժգոհությունը հայտնելով Բուրգասի քաղաքային խորհրդի՝ Ցեղասպանության ճանաչման որոշման վերաբերյալ: Շումենի քաղաքապետարանում ընդունեցին թուրք դիվանագիտական ներկայացուցչության նամակն «ի գիտություն»[20]:

Վառնայում իրավիճակն ավելի բարդ էր, քանի որ քաղաքային խորհրդի կողմից Հայոց ցեղասպանության փաստը ճանաչող որոշումը Վառնայի քաղաքապետ Հրիստո Կոնտրովը հետ վերադարձրեց խորհուրդ: 2008 թվականի մայիսի 21-ին Վառնայի քաղաքային խորհուրդը որոշեց ապրիլի 24-ը հայտարարել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր, սակայն հունիսի 5-ին քաղաքապետ Կոնտրովը որոշումը հետ ուղարկեց քաղաքային խորհուրդ՝ նոր լսումների: Կոնտրովի այս քայլն առաջ բերեց Ցեղասպանության փաստը ճանաչող բուլղարական ուժերի՝ «Բուլղարիայի եվրոպական զարգացման քաղաքացիներ» և «Բուլղարիայի ազգային շարժում» կուսակցությունների անդամների և Բուլղարիայի հայ համայնքի դժգոհությունը, որոնք բողոքի ցույց կազմակերպեցին Վառնայի քաղաքապետարանի դիմաց: Ցուցարարները պարզեցին պաստառներ, որոնց վրա գրված էր՝ «Վառնան Բոսֆորը չէ»՝ ակնարկելով, որ Կոնտրովը քաղաքապետ է ընտրվել իշխող կոալիցիայի մաս կազմող ԻԱՇ կուսակցության ձայներով[21]:

Թեև Բուլղարիայի թուրքերի քաղաքական և հասարակական ազդեցությանը, հատկապես «Ատակայի» և Ցեղասպանության ճանաչման օգտին հանդես եկող այլ բուլղարական կառույցների, ինչպես և հայ համայնքի ակտիվ միջամտությամբ հնարավորություն էր ստանում Ցեղասպանության փաստի մասին բարձրաձայնել ՏԻՄ մակարդակով, ինչպես նաև շարունակվում էին փորձերը՝ խորհրդարանում համապատասխան օրինագիծն անցկացնելու ուղղությամբ:

2009 թվականին «Ատակա» կուսակցությունը Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ ևս մեկ օրինագիծ ներկայացրեց Բուլղարիայի խորհրդարանի Մարդու իրավունքների, կրոնական գործերի,

---

[20] Turkey Consul Protests Armenian Genocide Recognition by Bulgaria's Shumen, Novinite, 06.06.2008, http://www.novinite.com/articles/93881/Turkey+Consul+Protests+Armenian+Genocide+Recognition+by+Bulgaria%27s+Shumen.

[21] Protests against Varna District Governor over Armenian Genocide Controversy, Novinite, 11.06, 2008, http://www.novinite.com/articles/94044/Protests+against+Varna+District+Governor+over+Armenian+Genocide+Controvery

քաղաքացիների բողոքների և դիմումների հանձնաժողով, որտեղ, սակայն, դեմ քվեարկեցին օրինագծի ներկայացմանը Բուլղարիայի ազգային ժողով[22]:

2010 թվականի ընթացքում ևս Բուլղարիայի խորհրդարանում ներկայացված ուժերը բարձրացրին Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը:

2010 թվականի փետրվարի 7-ին Բուլղարիայի խորհրդարանը հրաժարվեցընդունել Հայոց ցեղասպանության ճանաչման օրինագիծը՝ համարելով, որ այն վնասում է Թուրքիայի և Բուլղարիայի հարաբերություններին[23]: Օրինագիծը կրկին առաջարկեց «Ատակա» կուսակցությունը, սակայն այն չկարողացավ ձայներ ապահովել: Այսանգամնսթուրքական ԻԱՇ կուսակցությունը ակտիվ պայքարեց օրինագծի դեմ:

2010 թվականի մարտի սկզբին Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ նոր նախաձեռնությամբ հանդես եկավ Բուլղարիայի խորհրդարանի ընդդիմադիր «Կարգ, օրինականություն և արդարություն» կուսակցությունը (RZS), որը խորհրդարանին ներկայացրեց պաշտոնական հայտարարություն՝ պահանջելով հարգել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը:

Կուսակցությունը նաև պաշտոնապես դիմեց Բուլղարիայի վարչապետ Բոյկո Բորիսովին՝ պահանջելով ներկայացնել կառավարության դիրքորոշումը Հայոց ցեղասպանության վերաբերյալ[24]:

Այսպիսով, 2000-ականների սկզբից Բուլղարիայում կտրուկ ակտիվացել էր Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը, ինչը մեծապես կապված էր «Ատակա» կուսակցության քաղաքականության և ակտիվ քայլերի հետ: «Ատակայի» ակտիվ քաղաքականությունն իր ազդեցությունն էր ունենում նաև բուլղարական այլ ուժերի վրա:

Միևնույն ժամանակ, Հայոց ցեղասպանության ճանաչման փորձերը չսահմանափակվեցին բուլղարական օրենսդիր մարմնում, այլ այդ ուղղությամբ աշխատանք իրականացվեցին տեղական

---

[22] Բուլղարիայի ազգային ժողովի պաշտոնական կայք, Комисия по правата на човека, вероизповеданията, жалбите и петициите на гражданите, 04.02.2010, http://www.parliament.bg/bg/archive/7/3/237/reports/ID/1747.

[23] Bulgar Parlamentosu Sözde Soykırım Yasa Tasarını Reddetti, Turkish NY, 07.02.2010, http://www.turkishny.com/headline-news/2/23753-bulgar-parlamentosu-sozde-soykrm-yasa-tasarn-reddetti#.Vp_Mj5p97IW.

[24] Bulgaria RZS Demands Condemnation of Armenian Genocide, Novinite, 18.03.2010, http://www.novinite.com/articles/114331/Bulgaria+RZS+Demands+Condemnation+of+Armenian+Genocide

ինքնակառավարման մարմինների հետ, որտեղ հաջողություններ գրանցվեց: Այս ընթացքում Թուրքիայի շահերը պաշտպանողի դերակատարումն իր վրա վերցրեց ԻԱՇ կուսակցությունը, որը ոչ միայն համառ պայքարեց Ցեղասպանության դեմ, այլև հայտարարություններով և քայլերով հստակ ցույց տվեց, որ ամբողջովին կիսում է Թուրքիայի Հանրապետության դիրքորոշումը և Բուլղարիայում իրականացնում է Անկարայի՝ Ցեղասպանության հարցում որդեգրած քաղաքականությունը:

Հետաքրքրական է, որ բուլղարական քաղաքական շրջանակներում կա նաև այն կարծիքը, որ Բուլղարիայում գործող թուրքական կուսակցություններն ու կազմակերպությունները կարող են փոխել դիրքորոշումը Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում, եթե այդպիսի փոփոխություն լինի նաև պաշտոնական Անկարայի քաղաքականությունում:

Մասնավորապես, Ցեղասպանության հարցում գրեթե ամբողջովին Թուրքիայի դիրքորոշումը կիսող ԻԱՇ կուսակցությունն ու բուլղարաթուրքերի տարբեր կառույցներ կարող են Ցեղասպանության ճանաչման օգտին հանդես գալ, եթե բուն Թուրքիայում ճանաչեն Հայոց ցեղասպանությունը[25]: Այստեղ կարևոր է այն, որ Բուլղարիայի քաղաքական շրջանակներում ևս հստակ հասկանում են, որ ինչպես տարբեր հարցերում, Հայոց ցեղասպանության հարցում էլ բուլղարաթուրքերի կառույցները, կարելի է ասել, կուրորեն հետևում են Անկարային՝ կիսելով նրա դիրքորոշումներն ու իրականացնելով թուրքական ժխտողականության փորձը:

2000-ականների կեսերին Հայոց ցեղասպանության ճանաչման ակտիվ գործընթացների վերաբերյալ թուրքական շրջանակներում առկա ուշագրավ և հետաքրքիր մտքերից է այն, որ առկա զարգացումների արդյունքում Բուլղարիայում Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը ժամանակի խնդիր է:

Թուրք հեղինակ Սեդաթ Լաչիներն իր «Հայկական հարց, սփյուռքը և թուրքական արտաքին քաղաքականությունը» գրքում անդրադառնում է Բուլղարիայում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացին՝ նշելով, որ հայերն իրենց հայտարարություններով էլ ցույց են տալիս, որ Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը ժամանակի հարց է, օրինակ,

---

[25] Կոլարով Գ., Բուլղարիայի կառավարության անդամները և խորհրդարանի պատգամավորները օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության ճանաչման մասին, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=13301.

այն ժամանակի, երբ Բուլղարիայի օրենսդիր մարմիններում ԻԱՇ-ի ներկայությունը կամ զգալի կպակասի, կամ չի լինի[26]:

Վ. Հակոբյան

**Բուլղարիայի թուրքալեզու փոքրամասնության պայքարը Բուլղարիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ**

**Ամփոփում**

ԽՍՀՄ փլուզումը և սոցիալիստական բլոկի կազմալուծումն ավելի ազատ և ակտիվ արտաքին քաղաքականության հնարավորություն շնորհեցին պաշտոնական Սոֆիային, իսկ Հայաստանի Հանրապետության անկախացումը նոր փուլի սկիզբ հանդիսացավ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացում:

Ուստի արդեն 90-ականների սկզբից Բուլղարիայում սկսվում են Հայոց ցեղասպանության վերաբերյալ հանրային և քաղաքական քննարկումներ:

Բուլղարիայում Հայոց ցեղասպանության ճանաչման խոչընդոտման գործում առաջամարտիկի դերակատարումը ստանձնում է 90-ականներից Բուլղարիայի քաղաքական կյանքում իր ակտիվությամբ աչքի ընկնող թուրքական «Իրավունքների և ազատությունների շարժում» քաղաքական կուսակցությունը, որի ջանքերով 1995-2010 թթ.

Բուլղարիայի խորհրդարանում Հայոց ցեղասպանության վերաբերյալ քննարկումներն ավարտվում են անարդյունք:

В. Акопян

**Борьба турецкого меньшинства Болгарии против признания Армянского геноцида (1995-2010 гг.)**

Развал СССР и разложение социалистического блока дали официальной Софии возможность вести более свободную и активную внешнюю политику, а получение независимости для Армянской Республики стало началом новой фазы в процессе международного признания Армянского геноцида.

Посему уже в начале 90-хх в Болгарии начинаются общественные и политические обсуждения относительно Армянского геноцида. Передовую роль в блокировании признаниия Армянского геноцида берет на себя известная в политической жизни Болгарии 90-хх своей активностью турецкая политическая партия «Движение прав и свобод», силами которой в 1995-2010гг. в парламенте

[26] Laçiner S., նշվ. աշխ., էջ 460:

Болгарии обсуждения относительно Армянского геноцида заканчиваются безрезультативно.

V. Hakobyan

**The Struggle of Turkish-Speaking Minority of Bulgaria Against Recognition of Armenian Genocide by Bulgaria (1995-2010)**

The collapse of the USSR and the dissolution of the socialist block gave more free and active foreign policy to Sofia, and the independence of the Republic of Armenia was the beginning of a new stage in the process of international recognition of the Armenian Genocide.

Thus, the public and political discussions on the Armenian Genocide started in Bulgaria at the beginning of the 90s. Turkish "The movement of Rights and Freedoms" political party, which was very active in Bulgarian's political life during the 90s, took a lead role of obstruction of Armenian Genocide recognition in Bulgaria. By the efforts of this political party the discussions on Armenian Genocide ended in vain during 1995-2010 in the Bulgarian Parliament.

ՄՇԱԿՈՒՅԹ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հայցորդ
Խ.Աբովյանի անվան արվեստի պատմության,
տեսության և մշակութաբանության ամբիոն
ՀՏԴ 7.03:72.04:738.5

# ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՃԱՆԿԱՐՆԵՐԸ

**Բանալի բառեր և արտահայտություններ.** արվեստ, խճանկարչություն, Երուսաղեմ, միջնադարյան արվեստ, դեկորատիվություն, հայկական, պեղումներ, քրիստոնեական, խորհրդանիշներ, հայատառ արձանագրություն:

**Ключевые слова и выражения:** искусство, мозаики, Иерусалим, средневековое искусство, декоративность, армянский, раскопки, христианские, символы, армянские надписи.

**Key words and expressions:** art, mosaics, Jerusalem, medieval art, decorative, Armenian, excavations, Christian, symbols, Armenian inscriptions.

Միջերկրական և Մեռյալ ծովերի ջրբաժանում գտնվող, մերձարևելյան այդ քաղաքը՝ Երուսաղեմը, աշխարհի հնագույն բնակավայրերից մեկն է:

Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն ընդունվելուց հետո բազմաթիվ հայ ուխտավորներ են այցելել Երուսաղեմ: Այնտեղ կառուցվել են բազմաթիվ հայկական վանքեր[1]: Ի տարբերություն Հայաստանում կառուցած եկեղեցիների Հայաստանից դուրս Կ.Պոլիս, Նոր Ջուղա, նաև Երուսաղեմում կառուցված եկեղեցիները ունեցել են գեղարվեստական հարուստ հարդարանք: Այդ հարդարանքի տարատեսակներից է նաև խճանկարը:

Մինչև այժմ Երուսաղեմում երևան է հանվել առավել արժեքավոր հայկական հինգ խճանկար: Այդ խճանկարներից առաջին երեքը գտնվել են 1868 թվականին Ձիթենյաց կամ Համբարձման լեռան վրա, երբ ռուսները արաբներից գնել էին մի հողամաս, որի վրա ցանկանում էին նոր վանք կառուցել: Չորրորդ խճանկարը գտնվեց 1893 թվականին, երբ նոր կառուցվող մատուռի հիմքերն էին փորվում: Հինգերորդ խճազարդ հատակը

[1] Ցուցակ Անաստասայ վարդապետի վասն վանորէից հայոց որ ի Ս.Քաղաք Երուսաղէմ, Վենետիկ, 1896թ., էջ 9:

հայտնաբերվեց Դամասկոսի դռան մոտ 1894 թվականին: Սա ամենափառահեղ ու ամենախոշոր խճազարդ հատակն էր, որի պատկանելիությունը սկզբում վեճի առարկա դարձավ հույների ու լատինների միջև, սակայն նկարի ճակատին եղած Մեսրոպյան տառերով արձանագրությունը լռեցրեց վեճը: Դամասկոսի դռան խճազարդ հատակի ներքև հայտնաբերվել են երեք դամբարան, իսկ Ձիթենյաց լեռան հատակի տակ՝ 16 քարադամբարան, որոնցից մի քանիսի վրա կան հայատառ հայանուն արձանագրություններ[2]. <<Եւ այսպէս յանկարծ Հայկական Խճանկար արուեստը բացարձակ գոյութիւն ունեցաւ, ոչընչէն յայտնուեցաւ, նոյնիսկ օտար գեղարուեստագէտներու զմայլանքը խլելու համար>>[3]:

Խճանկարչական արվեստը հայտնի է եղել հին Հայաստանում և այդ ավանդույթը շարունակվել է նաև վաղ ֆեոդալական դարաշրջանում՝ IV-VII դարերում: Խճանկարը օգտագործվել է եկեղեցիների ներքին գեղարվեստական հարդարման համար:

Ձիթենյաց լեռան լայնածավալ խճանկարի միայն մի հատվածն է պահպանվել: Դրանցից առավել նշանավորը Արտավանի մայր Շուշանիկի ստորգետնյա ընդարձակ դամբարանի վրա կառուցված շենքի հատակին: Խճազարդ հատակը զարդարված է կլոր և օվալաձև մեդալիոններով, որոնցում պատկերված են կենդանիներ, թռչուններ և ձկներ: Այսպես կոչված, Արտավանի խճանկարը առանձնանում է ոճավորումով և զարդերի բազմազանությամբ: Խճանկարի հատակի հյուսիսային մասում գրված է. <<ԱՅՍ ԴԻՐ ԵՐԱՆԵԼԻՈՅ ՇՈՒՇԱՆԿԱՆ ՄԱԻՐ ԱՐՏԱՒԱՆԱ ՀՈՌԻ ԺԸ>>: Ոճական քննությունը Արտավանի խճանկարը հասցնում է V դարի կեսերը՝ Աստիճանական լույսուստվերը, մոնումենտալությունն ու անշարժությանի (ստատիկան), թռչունների, ձկների և առարկաների լուսավորումը միջին մասում, ուրվագծից խուսափումը: Բայց մոտիվները, (ձուկը իբրև Հիսուս Քրիստոսին հապավումը հունարեն լեզվում՝ իխտիուս այսինքն՝ Հիսուս Քրիստոս՝ Աստծու Որդի՝ Փրկիչ, զառը իբրև Աստծո զառան խորհուրդ, բաղը՝ որպես ձուկ, այսինքն՝ մարդու հոգու բռնող և այլն) քրիստոնեական են[4]:

---

[2] Ա.Գրիգորյան, Մոզաիկ նկարկչության արվեստը Հայաստանում, <<Էջմիածին>>, 1957,էջ 49:

[3] Ն.Քէլէկեան, Երուսաղէմի խճանկարները- անոնց գիւտը, <<Բազմավեպ>>, 1934, էջ 193:

[4] Ա.Աղասյան, Հ.Հակոբյան, Մ.Հասրաթյան, Վ.Ղազարյան, Հայ արվեստի պատմություն, Երևան, 2009թ., էջ 84:

Ռուսական վանքի Ս.Հովհաննես Կարապետի մատուռում է գտնվում մեկ այլ խճանկար՝ բաժանված երեք դաշտի: Սա ավելի սիմետրիկ տեսք ունի, հյութեղ ուրվագծերով, ավելի հարթապատկերային, զարդարված բուսական, կենդանական զարդապատկերներով: Վերջինիս հայական ծագումը ենթադրվում է արձանագրությունից, որը հայերեն է. <<ԱՅՍ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՏԻ ՅԱԿՈԲԱՅ ՈՐ ԵՂԵԻ Ի ՁԵՌՆ ԽՆԴՐԵԼՈՅ>>:

Հայատառ արձանագրությամբ առանձնանում է 1991թ. վերջին պեղումների ընթացքում Երուսաղեմի Մուսրարայի թաղամասում գտնված խճանկարը: Իսրայելի հնությունների վարչության աշխատակից Դավիդ Ամիթնի ղեկավարությամբ կատարված պեղումների հաշվետվության մեջ նա մանրամասն նկարագրում և վերլուծում է: Խճանկարը գտնվում է պեղված վանական համալիրի բնակելի մասի՝ ընդունարանի հատակին, որը ամբողջությամբ խճազարդ է: Արձանագրությունը գրված է դասական գրաբարով. <<ԵՍ ԵԻՍՏԱԹ ԵՐԷՅ ԱՀՏՋ ՋՅԱԽՃԱԲԱԿՍ ՈՐ ՄՏԱՆԷՔ Ի ՏՈՒՆՍ ՋԻՍ ԵՒ ՋԵՂԲԱՅՐ ԻՄ ՋՂՈՒԿԱՍ ՅԻՇԵՅԵ[Ք] Ի ՔՍ>>: Այս արձանագրությանը ոճական առումով ամենամոտը 1894թ. պեղված թերևս Երուսաղեմի հայկական խճանկարներից ամենանշանավորն է՝ այսպես կոչված, <<թռչունների խճանկարը>>[5]:

Պեղված հայկական նշանավոր խճանկարը ներկայացնում է զարդական ինքնատիպ նկարագիր: Հատակի վերնի ճակատային մասում զետեղված է հայերեն հետևյալ երկտող արձանագրությունը. <<ՎԱՄՆ ՅԻՇԱՏԱԿԻ ԵՒ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՋՈՐԱՑ ՋԱՆՈՒԱՆՍ ՏՐ.ԳԻՏԷ>>: Արձանագրությունը, հետևաբար նաև խճանկարի հորինման ժամանակը ճշտելու համար նկատի են առել մեսրոպյան տառատեսակը: Ըստ Գարեգին Հովսեփյանի՝ այն պատկանում է VI-VII դարերին, իսկ ահա Հ.Տաշյանը պնդում էր որ այն V- VI դարերի խճանկար է[6]:

Երուսաղեմի հայկական խճանկարները արտացոլում են բյուզանդական խճանկարչության մեջ հայտնի երկու հիմնական ուղղությունները՝ պալատական գեղանկարչական ուղղությունը, որը զարգացել էր կայսրության մայրաքաղաքում և արևելյան գծանկարչական ուղղությունը՝ Ասորիք-պաղեստինյան տարածքում և հարևան երկրներում: Այս երկրորդ ոճի խճանկարները լայն տարածում ստացան, անցնելով նաև Բյուզանդական կայսրության արևմտյան նահանգները: Նրանց մշակման և զարգացման մեջ վճռական դեր են կատարել Ասորիքի, Պաղեստինի և Փոքր

[5] N.Bazalel, Michael E.Stone, Armenian Art treasures of Jerusalem, Jerusalem 1979, pg. 22.

[6] Խմբագրական, Երուսաղեմի հայկական խճանկարները, «Թեոդիկ, Ամենուն Տարեցույց», 1927,էջ. 399-406:

Ասիայի բնակիչները, բայց մասնակցություն ցուցաբերել են նաև այլազգիներ, որոնց թվում և հայ վարպետները:

Հիանալի նրբությամբ և գունազեղությամբ հորինված այս խճանկարնեի գոյության փաստից կարելի է հետևություն անել, որ հայերը Երուսաղեմում կարողացել են ստեղծել և հետագա սերունդներին թողնել արվեստի բացառիկ նմուշներ:

Գրականություն


1. Աղասյան Ա., Հակոբյան Հ., Հասրաթյան Մ., Ղազարյան Վ., Հայ արվեստի պատմություն, Երևան, 2009:
2. Գրիգորյան Ա., Մոզաիկ նկարկչության արվեստը Հայաստանում, <<Էջմիածին>>, 1957:
3. Քէլէկեան Ն., Երուսաղէմի խճանկարները- անոնց զիւտը, <<Բազմավեպ>>, 1934:
4. Խմբագրական, Երուսաղէմի հայկական խճանկարները, <<Թեոդիկ, Ամենուն Տարեցույց>>, 1927:
5. Bazalel N, Michael Stone E., Armenian Art treasures of Jerusalem, Jerusalem 1979.


**Ս.Գրիգորյան**

**Երուսաղեմի հայկական խճանկարները**


**Ամփոփում**

Մեր պատկերացումները հայկական խճանկարչական արվեստի մասին կլինեին ոչ ամբողջական, եթե 19-րդ դարում Երուսաղեմի տարբեր հատվածներում չհայտնաբերվեին հայկական խճանկարները:Հայաստանի կլիներ շատ փոքր է, եթե չի պահպանվել հայկական խճանկարներ Երուսաղեմում.

Մինչև այժմ Երուսաղեմում երևան է հանվել առավել արժեքավոր հայկական հինգ խճանկար:

Հիանալի նրբությամբ և գունազեղությամբ հորինված այս խճանկարնեի գոյության փաստից կարելի է հետևություն անել, որ հայերը Երուսաղեմում կարողացել են ստեղծել և հետագա սերունդներին թողնել արվեստի բացառիկ նմուշներ:

С. Григорян

**Армянские мозаики в Иерусалиме**

**Резюме**

Наши представления о мозаичной живописи Армении оказались бы совершенно незначительными, если бы не сохранились армянские мозаики в Иерусалиме. По сведениям письменных, источников, в «Святом городе» в V-VII вв. было множество армянских, церквей и обителей с их мартириями и гробницами. Судя по обнаруженным в армянских сооружениях Иерусалима образцам, мозаичная, живопись нашла широкое применение.

Факт существования таких мозаик, заставить нам сделать вывод, что армяни в Иерусалиме создали и оставили для следующих поколений исключительные образцы мозаичного искусства.

S. Grigoryan

**Armenian Mosaics of Jerusalem**

**Summary**

Our understanding of the mosaic art of Armenia would have been quite small, if not preserved Armenian mosaics in Jerusalem.

The existence and luxury of V-VI Jerusalim`s Armenian churches is proved by Armenian mosaics discovered during construction works which were done in various parts of Jerusalem in the late XIX century.

The fact of the existence of the mosaics composed in such tenderness and colorfulness make us draw a conclusion that Armenians in Jerusalem have created and left for the following generations the exceptional patterns of art.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ


| | |
|---|---|
| ԼՈՒՍԻՆԵ ԵՆԳՈՅԱՆ<br>Զուգաձնություններ գրաբարի բացառական հոլովում | 3 |
| | |
| ԱՐՄԻՆԵ ՕԼԵՅԱՆ<br>Բառապաշարի թեմատիկ դասակարգումն ու «Մարմնի մասեր» իմաստային խումբը լեզվաբանական հետազոտության առարկա | 13 |
| | |
| ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ | |
| ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ<br>Սիլվա Կապուտիկյանը հայոց ցեղասպանության երդվյալ դատապարտող | 22 |
| | |
| ԵՎԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ<br>Ժամանակի քննադատությունը Թումանյանի թարգմանական արվեստի մասին | 30 |
| | |
| ՀԱՅԿԱՆՈՒՇ ՇԱՐՈՒՐՅԱՆ<br>Երազի հոգեբանական գործառույթները գեղարվեստական արձակում | 39 |
| | |
| ԱՆԺԵԼԱ ԽՈՐԵՆՅԱՆ<br>Անհատի և հասարակության հակադրամիասնությունը Ավ.Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմում | 47 |
| | |
| ՍԻՐԱՆՈՒՇ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ<br>Հայոց ցեղասպանության գեղարվեստական կերպավորումը Մարիա Անխելս Անգլադայի «Արամի հուշատետրը» վեպում | 54 |
| | |
| ԷՄՄԱ ՆԻԿՈՅԱՆ<br>Ս. Այվազյանի մանրապատումները | 62 |
| | |
| ՔՐԻՍՏԻՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ<br>Գևորգ Էմինի պոեզիան քննադատության գնահատմամբ | 68 |

| | |
|---|---|
| ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ | |
| ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ, ԳԱՅԱՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ<br>Գոյականական բազմիմաստ բառերի ուսուցման մեթոդիկան | 73 |
| | |
| ԼԻԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ<br>Երկրորդ օտար լեզվի ուսուցման արդի հիմնախնդիրները ՀՀ բուհերում | 84 |
| | |
| ՆԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ<br>Գրականության ընթերցանության և ընթերցողների դասակարգման հիմնահարցերը գրադարանային-մատենագիտական գործունեության մեջ | 92 |
| | |
| ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ | |
| ՄՀԵՐ ՄԵԼԻՔ-ԲԱԽՇՅԱՆ<br>Իրավիճակը Հայաստանում 1920թ. նախօրյակին: Մահմեդական ընդվզումների ճնշումը և ներքին հասարակական-քաղաքական ճնշումը և ներքին հասարակական-քաղաքական դրության կայունացման ուղղությամբ ՀՀ կառավարության ջանքերը | 99 |
| | |
| ՄԵՐԻ ՎԵՆԳՐԺԱՆՈՎԻՉ<br>1918թ. մայիսյան հերոսամարտերը արդի հայ պատմագիտության էջերում | 108 |
| | |
| ՀԱՍՄԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ<br>Լոզանի խորհրդաժողովը և արևմտահայ քաղաքական մտքի վերջնական ձախողումը | 117 |
| | |
| ՎԱՂԱՐՇԱԿ ՀԱԿՈԲՅԱՆ<br>Բուլղարիայի թուրքալեզու փոքրամասնության պայքարը Բուլղարիայի կողմից հայոց ցեղասպանության ճանաչման դեմ (1995-2010թթ.) | 127 |
| ՄՇԱԿՈՒՅԹ | |
| ՍՅՈՒԶԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ<br>Երուսաղեմի հայկական խճանկարները | 143 |